Շաբաթօրյա դպրոցի Աստվածաշնչի ուսումնասիրության ձեռնարկ
2013 թվականի չորրորդ եռամսյակ

ՍՐԲԱՐԱՆ

Մարտին Փրոբսթլ

Բովանդակություն

		ՓՐԿՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԸ 2
Դաս 1.	28.09-04.10	ԵՐԿՆԱՅԻՆ ՍՐԲԱՐԱՆԸ 4
Դաս 2.	05.10-11.10	«ԵՐԿԻՆՔԸ» ԵՐԿՐԻ ՎՐԱ 13
Դաս 3.	12.10-18.10	ՁՈՀԸ 22
Դաս 4.	20.07-27.07	ՍՐԲԱՐԱՆԻ ԴԱՍԵՐԸ 31
Դաս 5.	26.10-01.11	ՓՐԿԱԳՆՈՒՄ. ՁՈՀ ՄԵՂՔԻ ՀԱՄԱՐ 40
Դաս 6.	02.11-08.11	ՓՐԿԱԳՆՄԱՆ ՕՐԸ 49
Դաս 7.	09.11-15.11	ՔՐԻՍՏՈՍԸ ՄԵՐ ՁՈՀՆ Է 58
Դաս 8.	16.11-22.11	ՔՐԻՍՏՈՍԸ ՄԵՐ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏՆ Է 67
Դաս 9.	23.11-29.11	ԴԱՏԸ ԳԱԼՈՒՍՏԻՑ ԱՌԱՋ 76
Դաս 10.	30.11-06.12	ՔԱՎՈՒԹՅԱՆ ՎԱԽՃԱԲԱՆԱԿԱՆ ՕՐԸ 86
Դաս 11.	07.12-13.12	ՄԵՐ ՄԱՐԳԱՐԵԱԿԱՆ ԼՈՒՐԸ 96
Դաս 12.	14.12-20.12	ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ 105
Դաս 13.	21.12-27.12	ՔԱՐՈՋ ՍՐԲԱՐԱՆԻՑ 115

ԵՐԵՎԱՆ
2013

ՓՐԿՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԸ

Աստծո սիրո և բնավորության ամենախոշոր հայտնությունը խաչն է, որտեղ Տեր Հիսուս Քրիստոսը Իրեն զոհաբերեց աշխարհի մեղքերի համար, այն աշխարհի, որը չպետք է ճանաչեր մեղքը: Որպեսզի օգնի մեզ՝ ավելի լավ հասկանալու այդ մեծագույն Զոհաբերության նշանակությունը, Աստված հաստատեց երկրային սրբարանը՝ Փրկության ծրագրի տեսանելի պատկերը: Սակայն երկրային սրբարանը ընդամենը Երկնային սրբարանի՝ Տիեզերքում Աստծո ներկայության և գործունեության ճշմարիտ կենտրոնի խորհրդանիշն էր:

Երկրային սրբարանը Աստված օգտագործում էր որպես տեսանելի դաս: Իսրայելի սրբարանը և դրանում տեղի ունեցող ծառայությունը բացահայտում էին փրկագնման, Աստծո բնավորության և մեղքի վերջնական ճակատագրի մասին կարևոր ճշմարտությունները:

Սրբարանը ծառայում էր որպես օրինակ, որն օգնում էր հասկանալ Հիսուսին՝ որպես մեր Զոհ և մեր Քահանայապետ: Երբ Հովհաննես Սկրտիչն ասաց իր աշակերտներին, որ Հիսուսը «Աստծո Գառն է, որ վեր է առնում աշխարհի մեղքը» (Հովհաննես 1.29), նրանք հասկացան, թե Հովհաննեսն ինչ նկատի ուներ, քանի որ իրենք որոշակիորեն հասկանում էին, թե ինչ է տեղի ունենում սրբարանում: Երկնքում Հիսուսի գործերը հասկանալու համար Եբրայեցիս թղթի սկզբնական հասցեատերերը հին Իսրայելում քահանայության մասին գիտելիքներ պետք է ունենային: Սրբարանի հենց միայն տերմինաբանությունը կոչված էր փոխանցելու մարդկանց քրիստոնեական կյանքին վերաբերվող ճշմարտությունները: Ընդհանրացնելով, կարելի է ասել, որ սրբարանում ծառայության համակարգի իմացությունը օգնում էր հասկանալ Քրիստոսում փրկության մասին խորը ճշմարտությունները:

Սակայն քրիստոնեության երկարատև պատմության ընթացքում սրբարանի մասին լուրը մոռացվել էր: Դրա մասին հիշեցին միայն 19-րդ դարում, երբ Յոթերորդ օրվա ադվենտիստները կրկին սկսեցին ուսումնասիրել փրկության Աստծո հայեցակարգը՝ ներառյալ դատաստանի, առաջիկա գալստի մասին լուրը: Այդ ժամանակ սրբարանի մասին ճշմարտության վրա կրկին առանձնահատուկ ուշադրություն դարձվեց:

«Սրբարանի հարցը ծառայեց որպես բանալի, որն օգնեց ներթափանցել 1844 թվականի հիասթափության գաղտնիքի մեջ: Այն բացեց ճշմարտության ողջ հետևողական ու միասնական ծրագիրը, որը վկայում էր, որ Տերը ղեկավարում է ադվենտիստական մեծ շարժումը՝ սահ-

մանելով Իր ժողովրդի պարտականություններն ու պարտքը» (Է. Ուայթ, Մեծ պայքար, 423):

Որպես փրկության ճշմարտության լիությունը բացահայտող բանալի՝ սրբարանն ու Քրիստոսի քահանայական ծառայությունը դարձան և մինչև այսօր էլ մնում են Յոթերորդ օրվա ադվենտիստների եկեղեցու հավատի հիմունքներից մեկը: Ավելին, սրբարանի մասին լուրը *եզակի* ադվենտիստական ուսմունք է: Միևնույն ժամանակ Յոթերորդ օրվա ադվենտիստների եկեղեցու ոչ մի ուրիշ ուսմունք (հնարավոր է՝ բացառությամբ շաբաթ օրվա մասին ուսմունքի) այդպիսի դիմադրության չի հանդիպել: Բարեբախտաբար, ժամանակի ընթացքում այդ դիմադրությանը ոչ միայն արժանի հակահարված տրվեց, այլև այդ դժվարություններն ինքնին ծառայեցին ի բարին՝ ընդլայնելով այդ կարևոր ուսմունքի մեր ըմբռնումը և մեզ՝ որպես ժողովուրդ, դարձնելով առավել ուժեղ փրկության հարցերի ըմբռնման մեջ:

Էլեն Ուայթը խորհուրդ էր տալիս սրբարանի թեմային առանձնահատուկ ուշադրություն դարձնել, քանի որ «Երկնային սրբարանը հանուն մարդու Քրիստոսի ծառայության կենտրոնն է: Այն, ինչ այստեղ տեղի է ունենում, վերաբերում է երկրի վրա ապրող յուրաքանչյուր հոգու: Սա բացահայտում է ողջ Փրկության ծրագիրը՝ մեզ բերելով երկրի պատմության եզրափակիչ պահին և մեղքի հանդեպ փառավոր հաղթանակին: Այդ պատճառով արտակարգ կարևոր է, որպեսզի ամենքը մտորումներով ուսումնասիրեն այս հարցը և ի վիճակի լինեն պատասխան տալ յուրաքանչյուրին, ով կհարցնի մեր հույսի մասին… Հակառակ դեպքում մարդիկ չեն ունենա համապատասխան հավատը, որպեսզի կարողանան զբաղեցնել այն տեղը, որ Աստծո կողմից նախատեսված է իրենց համար» (Է. Ուայթ, Մեծ պայքար, 488, 189):

Սրբարանը բացահայտում է մեզ Աստծո բնավորությունը: Այս թեմայի ուսումնասիրությունը մեզ մոտեցնում է Բարձրյալի գահին, մերձեցնում է մեր Փրկչին և բերում Նրա հետ անձնական է՛լ ավելի սերտ փոխհարաբերությունների:

Այդ պատճառով ընթացիկ եռամսյակում մենք կմտորենք Աստծո սրբարանի՝ դրա երկրային մոդելի և երկնային բնօրինակի մասին:

Մարտին Փրոբաթը կնոջ՝ Մարիաննայի և երկու որդիների՝ Մաքսի և Ջոնաթանի հետ ապրում է Ավստրիայում: Նա Հին Կտակարանի դասախոս է Ավստրիայի Բոգենհոֆենի ճեմարանում:

ԵՐԿՆԱՅԻՆ ՍՐԲԱՐԱՆԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Երեմիա 23.23,24, Սաղմոս 89.14, Հայտնություն 4, 5, Սաղմոս 11.4-7, Երկրորդ Օրինաց 25.1, Եբրայեցիս 8.1,2:

Հիշելու համարը.

«Այն ժամանակ լսիր երկնքում՝ քո բնակվելու տեղում, նրանց աղոթքը և աղերսանքը և նրանց իրավունքը կատարիր» (Գ Թագավորաց 8.49):

«Որտե՞ղ է բնակվում Աստված»: Վեցամյա երեխայի տված այս անմեղ հարցը կարող է բավականին բարդ լինել: Այն կարող է հանգեցնել է՛լ ավելի մեծ դժվարությունների, ինչպես, օրինակ՝ «Եթե Աստված ապրում է ինչ-որ տեղ, ապա Նա ինչպե՞ս կարող է լինել ամենուր»: «Աստծուն պե՞տք է բնակվելու տեղ»: «Եթե Նրան դա պետք չէ, ինչի՞ համար գոյություն ունի այդպիսի տեղ»: «Եթե Նրան պետք է այդպիսի տեղ, ապա ինչի՞ համար»:

Լավ հարցեր են, բայց, հաշվի առնելով, թե որքան քիչ բան մենք գիտենք (և ինչքան շատ բան չգիտենք), դրանց հեշտ չէ պատասխանել:

Եվ, այնուամենայնիվ որոշ պատասխաններ մենք ունենք: Որպես Յոթերորդ օրվա ադվենտիստներ՝ մենք Աստվածաշնչից գիտենք, որ Աստված ապրում է Երկնքում, որ «այնտեղ» Նա ակտիվորեն գործում է հանուն մեր բարօրության, և որ Նրա փրկարար ծառայության կենտրոնը Երկնային սրբարանն է:

Սուրբ Գիրքը հստակորեն ցույց է տալիս, որ Երկնային սրբարանը իրական տեղ է, որի շնորհիվ մենք կարող ենք շատ բան իմանալ Աստծո բնավորության և ծառայության մասին: Այսպիսով, այս շաբաթվա դասը նվիրված է Երկնային սրբարանին և այնտեղ հանուն մեզ Նրա գործունեությանը. չէ՞ որ սրբարանում Նրա գործունեությունը ուղղակի առնչություն ունի մեզ հետ:

Աստծո գտնվելու վայրը

Մենք հաճախ ասում ենք, որ Աստված ներկա է ամենուր: Նա «ամենագո» է, այսինքն՝ ներկա է ողջ Տիեզերքում: «Մի՞թե Ես մոտիկից Եմ Աստված, ասում է Աստված, և հեռվից Աստված չե՞մ... Չէ՞ որ երկինքն ու երկիրը լցնողը Ես Եմ» (Երեմիա 23.23,24): Դավիթը նույնպես հասկանում էր, որ ոչ ոք չի կարող փախչել Աստծուց (Սաղմոս 139.7-12): Իսկապես, ինչպես պնդում էր Պողոսը, Աստված հեռու չէ ամեն մեկից (Գործք առաքելոց 17.27,28):

Բացի ամենագոյությունից, առկա է նաև Աստծո այնպիսի մի հատկանիշ, ինչպես հավիտենական գոյությունն է: Աստված ո՛չ սկիզբ ունի, ո՛չ վերջ (Սաղմոս 90.2): Նա եղել և կլինի միշտ (Հուդա 25):

Կարդացե՛ք Գ Թագավորաց 8.49 և Սաղմոս 102.19-ը: Այս համարները մեզ ի՞նչ են ասում Աստծո բնակության վայրի մասին: Մենք ինչպե՞ս պետք է հասկանանք համարներում ասվածի իմաստը: Մենք արդյո՞ք առհասարակ կարող ենք հասկանալ դա: _____

_____

_____

_____

Սուրբ Գիրքը բազմիցս խոսում է Երկնքում Աստծո բնակության մասին (Գ Թագավորաց 8.30,43,49): Արդյո՞ք սա նշանակում է, որ Աստված ավելի շատ ներկա է Երկնքում, քան որևէ այլ վայրում: Աստված, անկասկած, առանձնահատուկ կերպով ներկա է Երկնքում՝ փառքով և հոյակապությամբ: Երկնքում Նրա ներկայությունը դրսևորվում է իր ողջ լիությամբ:

Սակայն տարբերություն գոյություն ունի Աստծո «ընդհանուր ներկայության» և Նրա «առանձնահատուկ ներկայության» միջև: Ընդհանուր առմամբ Աստված ներկա է ամենուրեք, սակայն Նա որոշեց Իրեն առանձնահատուկ կերպով հայտնել Երկնքում և, ինչպես մենք կտեսնենք, Երկնային սրբարանում:

Իհարկե, մենք պետք է ընդունենք մեր սահմանափակությունը Աստծո էության ըմբռնման հարցում: Նա հոգի է (Հովհաննես 4.24), ուստի չի կարող ամփոփվել որևէ կառույցի կամ չափման մեջ (Գ Թագավորաց 8.27): Սակայն Աստվածաշունչը խոսում է Երկնքի (Հովհաննես 14.1-3) և Երկնային սրբարանի (Եբրայեցիս 8.2) մասին՝ որպես իրական վայրերի, որտեղ կարելի է տեսնել Աստծուն (Գործք առաքելոց 7.55,56,

Հայտնություն 4.2,3): Մենք պետք է գիտակցենք, որ Երկինքն ու Երկնային սրբարանը այն վայրերն են, որտեղ Աստված Իր արարածներին Իր հետ հանդիպումների է արժանացնում:

Մեզ շատ բան դժվար է պատկերացնել կամ հասկանալ, օրինակ՝ Աստծո գտնվելու վայրը: Բայց Աստվածաշունչն ասում է, որ այդ վայրը միանգամայն իրական է: Մենք ինչպե՞ս կարող ենք սովորել վստահել այն ամենին, ինչ մեզ սովորեցնում է Աստվածաշունչը՝ անկախ նրանից, թե ինչքան բարդ կարող է լինել դա մեր ընկալման համար: Ինչո՞ւ է վստահելը կարևոր, անգամ եթե մենք ինչ-որ բան չենք հասկանում:

Երկուշաբթի *սեպտեմբերի 30*

Գահի դահլիճ

Կարդացե՛ք Սաղմոս 47.6-9, 93.1,2, 103.19: Այս համարները մեզ ի՞նչ են ասում Աստծո և Նրա գահի մասին: _____

_____

_____

Աստվածաշնչում երկնային գահի տեսիլքների մի քանի նկարագրություն կա: Դրանց մեծամասնությունը նման է է երկնային ժողովի մի պատկերի, որտեղ Աստված ներկա է որպես Թագավոր: Բավականին հետաքրքիր է նկատել, որ այդ ժողովների մեծ մասը առնչություն ունեն մարդկային գործերին: Սովորաբար այդպիսի ժողովների ժամանակ Աստված գործում կամ խոսում է արդարների օգտին:

Աստվածաշունչը նաև մեզ համար բացահայտում է Աստծուն՝ որպես Տիրակալի: Օրինակ, Տիրոջ արքայական տիտղոսը Սաղմոսների անփոփոխ թեման է: Աստված թագավոր է ոչ միայն Երկնքում, Նա նաև ողջ Երկրի Թագավորն է (Սաղմոս 47.7), և ոչ միայն ապագայում, այլև արդեն այստեղ և հիմա (Սաղմոս 93.2):

Այն փաստը, որ Աստծո գահը հաստատված է երկնքում, հանգեցնում է մի քանի եզրակացությունների: Դրանցից մեկն այն է, որ Աստված Տիեզերքի Տիրակալն է:

Կարդացե՛ք Սաղմոս 89.14, 97.2: Այս տեքստերը մեզ ի՞նչ են ասում Աստծո բնավորության և Նրա կանոնների մասին: _____

_____

_____

Կառավարման Աստծո սկզբունքները ներառում են արդարադատությունն ու իրավացիությունը՝ սիրո և հավատարմության հետ միասին: Այդ սկզբունքներն արտացոլում են Տիրոջ բարոյական որակները և այն, թե ինչպես է Նա գործում մարդկանց աշխարհում և Տիեզերքում: Աստված ցանկանում է, որ Իր ժողովուրդն իր կյանքում դրսևորի հենց այդ նույն որակները (Միքիա 6.8, հմմտ. Եսայիա 59.14), և դրանում է մեր սրբազան առավելությունը:

«Ինչպես Աստծո տված բնության օրենքներին հնազանդվելու դեպքում երկիրը պետք է գանձեր ծներ, այնպես էլ Նրա բարոյական օրենքին հնազանդվելու շնորհիվ մարդկանց սրտերը պետք է արտացոլեին Նրա բնավորության առանձնահատկությունները» (Է. Ուայթ, Քրիստոնեական տուն, 144):

Մենք ինչպե՞ս կարող ենք չարությամբ, անազնվությամբ և անարդարությամբ լեցուն այս աշխարհին ավելի լավ հայտնել բարությունը, արդարությունն ու արդարացիությունը: Ինչու՞ պետք է մենք անենք դա:

Երեքշաբթի ***հոկտեմբերի 1***

Երկրպագությունը Երկինքներում

Կարդացե՛ք Հայտնություն 4 և 5-ը: Այս երկու գլուխներն ի՞նչ են ասում մեզ Երկինքներում Աստծո ներկայության մասին: Այս համարներում ինչպե՞ս է բացահայտվում փրկության ծրագիրը:

_____

_____

Երկինքներում գահասրահի տեսիլքը Երկնային սրբարանի տեսիլքն է: Դա ակնհայտ է, որովհետև օգտագործվում է հրեական կրոնական համակարգին վերաբերող լեզուն: Օրինակ, Հայտնություն 4.1-ի «դուռ» և «փող» բառերը հաճախ են հանդիպում Հին Կտակարանում, երբ խոսվում է սրբարանի մասին: Հայտնություն 4.3-ում երեք թանկարժեք քարերը քահանայապետի եփուդի մի մասն են: Յոթ ճրագակալները հիշեցնում են Սողոմոնի տաճարի ճրագակալները: Քսանչորս երեցները մեզ հիշեցնում են տաճարում քահանաների ծառայության հերթափոխությունը տարվա ընթացքում և նրանց աղոթքի խնկարկումները ոսկե բաժակներում (Սաղմոս 141.2): Այս բոլոր համարները ցույց են տալիս հինկտակարանյան ծառայությունը, որը կենտրոնացված էր երկրային սրբարանի շուրջը:

Բացի դրանից, Հայտնություն 5-ի մորթված Գառն, անշուշտ, մատնացույց է անում Քրիստոսի զոհաբերական մահը: Գառը՝ Քրիստոսը, աստվածային փրկության միակ Միջնորդն է: Նա արժանի է ճանաչվել՝ Իր հաղթանակի (Հայտնություն 3.5), զոհի (Հայտնություն 5.9) և Աստվածային էության շնորհիվ (Հայտնություն 5.13):

«Քրիստոսը մարդկային բնույթ ընդունեց և Իր կյանքը զոհաբերեց, որպեսզի Աստվածային էությանը հաղորդակից դարձած մարդը կարողանա ունենալ հավիտենական կյանքը» (Էլեն Ուայթ, Հատընտիր լուրեր, հտ. 3, 141):

Աստծո գահի վրա կենտրոնացած այս երկու գլուխներում նկարագրված պատկերը մարդու փրկության համար Աստծո գործողությունների նկարագրությունն է: Մենք նաև կարող ենք տեսնել, որ այս գործողությունները բացահայտված են Երկնքի այլ բանական էակներին, ինչը առանցքային նյութ է Մեծ պայքարի համատեքստում:

Խորհեցե՛ք, թե ինչ է նշանակում այն փաստը, որ Քրիստոս-Աստվածը ընդունեց մեր մարդկային մարմինը և մահացավ մեր փոխարեն, այսինքն՝ մեր բոլոր խոստովանված մեղքերը, որոնց համար մենք *ինքներս* պետք է պատիժ կրեինք, ընկան Նրա վրա: Այս ճշմարտությունն ինչո՞ւ պետք է մեր բոլոր արարքների դրդապատճառ ծառայի:

Չորեքշաբթի ***հոկտեմբերի 2***

Դատարանի դահլիճը

Կարդացե՛ք Սաղմոս 11.4-7-ը: Աստված է՞լ ինչ է կատարում Իր երկնային տաճարում և ինչո՞ւ է մեզ համար կարևոր այդ մասին իմանալը: _____

_____

Շատ Սաղմոսներ են խոսում այն մասին, որ Աստված անտարբեր չէ արդարների կարիքների և այն անարդարությունների հանդեպ, որոնց վերջիններս հանդիպում են: Նա աղաղակող, լուծում պահանջող խնդրին արձագանքում է այնպես, ինչպես կվարվեր ցանկացած լավ դատավոր. «Արդարին արդարացնեն և հանցավորին հանցավոր հանեն» (Երկրորդ Օրինաց 25.1):

Երբ Աստված դատում է, գահասրահը դառնում է դատարանի դահլիճ, իսկ երկնային գահը՝ դատավորի աթոռ: Նա, Ով գահակալում է, նաև Նա է, Ով կատարում է դատը (Սաղմոս 10.5-9): Սա հին Մերձավոր

Արևելքում տարածված հայեցակարգ է, որտեղ թագավորները հաճախ կատարում էին դատավորների պարտականությունները:

Աստվածային դատաստանը վերաբերում է ինչպես ամբարիշտներին, այնպես էլ արդարներին: Ամբարիշտները ստանում են պատիժ՝ Սոդոմի և Գոմորի վրա թափված պատուհասի նման, բայց «ուղիղները կտեսնեն Նրա երեսը» (Սաղմոս 10.7): Գահասրահի և դատարանի դահլիճի դասական համադրությունը հանդիպում է Դանիել 7.9-14-ում (շատ նշանակալից հատված է, որը մենք ավելի ուշ կուսումնասիրենք): Այստեղ նույնպես դատաստանը ներառում է երկու բաղադրիչ՝ սրբերի համար կայացված արդարացնող դատավճիռ և Աստծո թշնամիների դատապարտում:

Երբ Ամբակում մարգարեն հարցրեց Աստծուն, թե ինչու է Նա լռում՝ տեղի ունեցող անարդարությունները տեսնելով (Ամբակում 1), Աստված պատասխանեց, որ անպայման դատաստան է տեսնելու (Ամբակում 2.1-5): Այն ժամանակ, երբ կուռքերի մեջ բացակայում է «շունչը» կամ «հոգին» (Ամբակում 2.19), Արարիչ Աստված նստած է գահին Իր երկնային տաճարում՝ Երկնային սրբարանում՝ պատրաստ դատելու:

Մարգարեն կոչ է անում. «Լռի՛ր Նրա առաջ, ո՛վ բոլոր երկիր» (Ամովս 2.20): Աստծո կառավարման և դատի իրականացման հանդեպ ճիշտ վերաբերմունքը երկյուղած լռությունն ու սրտառուչ հարգանքն է:

Այն վայրը, որտեղ Աստված հայտնում է Իր առանձնահատուկ ներկայությունը, և որտեղ Նրան երկրպագում են երկնային արարածները, այն նույն վայրն է, որտեղ Նա Իր արդար դատաստանն է իրականացնում բոլոր մարդկանց հանդեպ. այն է՝ Երկնային սրբարանը: Աստված արդար է և արդարացի, և մեր բոլոր հարցերին պատասխաններ կտրվեն այն ժամանակ, երբ Նա հարկ կհամարի:

Մենք ինչքան էլ արդարություն աղաղակենք, այնուամենայնիվ, ներկայումս այնքան էլ հաճախ չենք տեսնում դա: Մենք ինչո՞ւ պետք է հուսանք Աստծո արդարադատությանը: Մենք ի՞նչ հույս կունենայինք՝ առանց Աստծո արդարացիության մասին խոստումների:

Հինգշաբթի ***հոկտեմբերի 3***

Փրկության փեղը

Կարդացե՛ք Եբրայեցիս 8.1,2-ը: Ի՞նչ է կատարում Քրիստոսը՝ նստելով Աստծո գահի աջ կողմում:

Եբրայեցիներին հղված ուղերձը հայտնում է, որ Քրիստոսը Երկնային սրբարանում ծառայություն է իրականացնում որպես Քահանայապետ: Նրա ծառայությունը կենտրոնացված է մեր փրկության վրա, «որ հիմա Աստծո երեսի առաջին երևա մեզ համար» (Եբրայեցիս 9.24): Նա կարեկցում է մեզ և վստահեցնում, որ մենք չենք մերժվի, այլ, ընդհակառակը, կգտնենք Աստծո շնորհն ու ողորմածությունը (Եբրայեցիս 4.15,16)՝ Հիսուսի սխրանքի շնորհիվ: Ինչպես երկրային սրբարանում, այնպես էլ Երկնայինում կատարվում է հաշտեցման կամ հավատացյալների փրկագնման գործընթաց (Եբրայեցիս 2.17): Մեզ համար մահացած և հանուն մեզ հարություն առած Հիսուսն այժմ ծառայություն է կատարում երկնքում, և դարձյալ հանուն մեզ:

Կարդացե՛ք Հայտնություն 1.11-20, 8.2-6, 11.19 և 15.5-8-ը: Սրբարանն ինչպե՞ս է ներկայացված այս հատվածներում: _____

_____

_____

_____

Բերված համարները ընդամենը մի քանի հատվածներ են Հայտնություն գրքից, որոնցում պատկերված է սրբարանը: Փաստորեն այս գրքի հիմնական բաժինների մեծ մասը կա՛մ սկսվում են սրբարանում տեղի ունեցող արարողություններից, կա՛մ էլ մի փոքր ավելի ուշ նկարագրում են, թե ինչ է տեղի ունենում այնտեղ:

Առաջին, ներածական տեսարանը պատկերում է Քրիստոսին՝ քահանայապետի հագուստ հագած յոթ ճրագակալների միջև քայլելիս (Հայտնություն 1.12-20): Երկրորդ դրվագում ցույց են տրված երկնային գահադահլիճն ու մի ամբողջ շարք պատկերներ, որոնք վերաբերում են սրբարանին՝ գահը, ճրագակալները, ծովը, մորթված Գառը, արյունը, խնկով ոսկյա գավաթները (Հայտնություն 4, 5): Երրորդ պատկերը մեր ուշադրությունն ուղղում է դեպի Երկնային սրբարանի առաջին բաժնում տեղի ունեցող չընդհատվող ծառայությունը (Հայտնություն 8.2-6): Չորրորդ՝ կենտրոնական դրվագը մեզ հնարավորություն է տալիս «նայել» Ուխտի Տապանակին, որը գտնվում է երկրորդ բաժնում (Հայտնություն 11.19): Հինգերորդ տեսարանը մեր հայացքին է ներկայացնում ողջ Երկնային խորանը (Հայտնություն 15.5-8): Վեցերորդ հատվածը եզակի է նրանով, որ այնտեղ սրբարանը ցույց տվող հստակ նշումներ չկան: Հնարավոր է, որ դա ցույց է տալիս սրբարանում Քրիստոսի ծառայության ավարտը (Հայտնություն 19.1-10): Եզրափակիչ տեսարանը նվիրված է փառավոր սուրբ քաղաքին, որը իջնում է երկիր (Հայտնություն 21.1-8) և անվանված է «Աստծո խորան մարդկանց հետ»:

Այս տեսարանների ուշադիր ուսումնասիրությունը օգնում է տեսնել դրանց փոխադարձ կապը և Աստծո հետ փրկության գործընթացի ներքին առաջընթացը՝ երկրի վրա Քրիստոսի գտնվելուց մինչև Նրա երկնային ծառայությունը սրբարանի առաջին և երկրորդ բաժանմունքներում, իսկ հետո՝ մինչև Նրա քահանայապետական ծառայության ավարտը և նոր երկնային սրբարանի հաստատումը:

Ուրբաթ ***հոկտեմբերի 4***

Հետագա ուսումնասիրության համար

«Պողոսին ցույց տրվեց Երկինքը և, մտորելով դրա փառքի մասին, լավագույնը, ինչ նա կարող էր անել, դրանք նկարագրելու փորձ չանելն էր: Նա ասում է, որ նման ոչինչ մենք չենք տեսել և չենք լսել, անգամ մեր միտքը չի ընկել այն, ինչ Աստված պատրաստել է Իրեն սիրողների համար: Դուք կարող եք լարել ձեր երևակայությունը, կարող եք օգտագործել ձեր բոլոր ընդունակությունները՝ որևէ կերպ ըմբռնելու, ընդգրկելու համար հավիտենական փառքը, բայց ձեր սահմանափակ ընկալումը՝ գործադրված ջանքերից թուլացած և հյուծված, չի կարողանա ընդգրկել դա, քանի որ դա մեր ըմբռնման սահմաններից դուրս գտնվող հավիտենություն է: Մի ողջ հավերժություն կպահանջվի, որպեսզի մենք ըմբռնենք այդ փառքը և գտնենք Աստծո Խոսքի թանկարժեք գանձերը» (Է. Ուայթ, ՅՕԱ աստվածաշնչյան մեկնություններ, հտ. 6, 1, 107):

Արքայից արքայի բնակավայրը, որտեղ հազար հազարներ ծառայում են Նրան, և բյուր բյուրեր կանգնած են Նրա առջև (տե՛ս Դանիել 7.10), տաճարը՝ լցված հավիտենական գահի փառքով, որտեղ սերովբեները՝ Նրա լուսաշող պահապանները, երկյուղածությամբ ծածկում են իրենք երեսը, այս ամենը իր միայն աղոտ արտացոլումն էր գտել Երուսաղեմի տաճարում՝ մարդու ձեռքով երբևէ կառուցված ամենահոյակապ շինության մեջ: Սակայն երկրային սրբարանը և դրանում կատարվող ողջ ծառայությունը մեզ կարևոր ճշմարտություններ է հայտնում Երկնային սրբարանի և այն մեծագույն աշխատանքի մասին, որը կատարվում է հանուն մարդու փրկագնման» (Է. Ուայթ, Մեծ Պայքար, 414):

Հարցեր քննարկման համար.

1. Ուշադրություն դարձրեք ուրբաթ օրվա դասի մեջ տեղ գտած էլեն Ուայթի վերջին մեջբերմանը: Ի՞նչ նկատի ունի հեղինակը՝ ասելով, որ մեր փրկությանը վերաբերող շատ կարևոր ճշմարտություններ

բացահայտվել են երկրային սրբարանի ծառայության մեջ: Թվարկե՛ք դրանցից մի քանիսը և ասացե՛ք, թե ինչո՞ւ են դրանք այդքան կարևոր:

2. Ի՞նչ են նկատի ունենում, երբ ասում են, թե Աստված «բնակվում է» երկնքում: Ինչպե՞ս եք դուք հասկանում այս դրույթը:
3. Այս շաբաթվա դասում մենք շոշափեցինք այն միտքը, որ Տիեզերքը հետևում է հանուն մարդու կատարած Աստծո գործերին: Ինչո՞ւ է մեզ համար ծայրահեղ կարևոր տվյալ հայեցակարգը հասկանալը: Այն ինչպե՞ս է օգնում ձեզ՝ հասկանալ մեծ պայքարի էությունը ողջ Փրկության ծրագրի համատեքստում: Աստծո բնավորության մասին ի՞նչ է ասում այն փաստը, որ Նա Իր իսկ արարածներին թույլ է տալիս հետևել Իր գործերին:

«ԵՐԿԻՆՔԸ» ԵՐԿՐԻ ՎՐԱ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Ծննդոց 1.31-2.3, Ելից 39.32,43, 25.9, Եբրայեցիս 8.5, Հովհաննես 2.19-21, Ա Կորնթացիս 3.16,17, Հայտնություն 21.1-22:

Հիշելու համարը.

«Որոնք երկնավոր բաների օրինակով և շուքով էին ծառայում, ինչպես հրամանը եղավ Մովսեսին, որ խորանը շինելու էր. Նայիր, ասում է, որ ամեն բան անես այն օրինակի նման, որ ցույց տրվեց քեզ սարում» (Եբրայեցիս 8.5):

Թեև Երկնքի սրբարանը բնօրինակն է, այն վայրը, որտեղ Աստված Ինքը ծառայություն է կատարում մեզ համար, Տերը տարբեր միջոցներով այդ սրբարանի մասին ճշմարտությունը բացում է այստեղ՝ երկրի վրա:

Աստված Եդեմի այգին ստեղծել էր որպես սրբարանի խորհրդանիշ: Երկնային սրբարանը և փրկության ծրագրի համատեքստում դրա նշանակությունը ներկայացվել էին երկրային խորանի և իսրայելյան տաճարների մեջ:

Հիսուսի մեջ, անշուշտ, տաճարը հայտնված էր Նրա մարդկային էության մեջ: Իսկ արդյունքում Երկնային տաճարը կիջնի նոր երկրի վրա:

Ինչպես մենք կտեսնենք, Աստված Երկնային սրբարանի հետ կապված հայեցակարգերն օգտագործում է ճշմարտությունը բացելու համար: Այդ շաբաթ մենք կքննարկենք այդ հայեցակարգերից մի քանիսը:

Երկրի վրա առաջին «սրբարանը»

Աստվածաշնչի հետազոտողները նշում են, որ Եդեմի այգու շատ առանձնահատկություններ համապատասխանում են Իսրայելի առավել ուշ սրբարաններին, իսկ դա վկայում է այն մասին, որ Եդեմը երկրի առաջին խորհրդանշական «տաճարն» էր: Ներկայացնենք մի քանի զուգահեռներ Եդեմի և սրբարանի միջև.

1. Արարման մասին պատումի և անապատում խորանի շինարարության մասին պատմության վերջում միևնույն հիմնարար բառերով արտահայտված են երեք միանման կողմերը՝ խրախուսանք, ավարտ և օրհնություն (համեմատե՛ք «բոլոր», «կատարել» («վերջացնել»), «օրհնել» բառերը Ծննդոց 1.31-2.3-ում և Ելից 39.32,43, 40.33-ում):
2. Այնպես, ինչպես Աստված «ման էր գալիս» դրախտում (Ծննդոց 3.8), Նա Իր ժողովրդի մեջ «ման էր գալիս» սրբարանում (Բ Թագավորաց 7.6,7):
3. Ադամը պետք է «մշակեր» և «պահեր» այգին (Ծննդոց 2.15): Բնագրում այդ նույն երկու բայերն էլ օգտագործվում են, խորանում ղևտացիների ծառայությունը նկարագրելու համար (Թվոց 3.7,8):
4. Այգուց վերցված մի շարք կերպարներ հանդիպում են սրբարանի նկարագրության մեջ (Ելից 25.31-36, Գ Թագավորաց 6.18):
5. Քերովբեն պահպանում էր այգին (Ծննդոց 3.24). երկու ոսկի քերովբեներ տեղադրված էին Սրբության Սրբոցում (Ելից 25.18-22):
6. Ինչպես արարումը վեց օր տևեց, և յուրաքանչյուր օրն սկսվում էր «Եվ Աստված ասաց» բառերով, իսկ ամենի ավարտը դարձավ շաբաթը, այնպես էլ խորանի կառուցմանը վերաբերող վեց հատվածները բովանդակում են «Եվ Եհովան խոսեց Մովսեսի հետ՝ ասելով» արտահայտությունը (Ելից 25.1, 30.11,17,22,34, 31.1) և փոխարինվում են յոթերորդ հատվածով, որտեղ խոսվում էր շաբաթի մասին (Ելից 31.12-17):
7. Սրբարանն ավարտվեց առաջին ամսվա առաջին օրը (Ելից 40.17)՝ հրեական Ամանորի օրը, ինչը նույնպես համահունչ է աշխարհի արարման ավարտին:

Ծննդոց գրքի երկրորդ գլխում հարկ չկար մանրամասնորեն կանգ առնել այս զուգահեռների վրա, քանի որ հին ժամանակներում մարդիկ հիանալի հասկանում էին դրանք: Օրինակ, հրեական գրավոր աղ-

բյուրներից մեկը, որը թվագրվում է մեր թվարկության երկրորդ դարով, հայտնում է. «Եդեմի պարտեզը Սուրբ Սրբոցն էր և Տիրոջ գտնվելու վայրը»:

Եդեմի պարտեզը անվանվել է Տիրոջ այգի (Եսայիա 51.3, Եզեկիել 28.13, 31.9): Դա Երկրի վրա Աստծո գտնվելու վայրն էր, վայր, որտեղ մեր նախածնողները պետք է երկրպագեին Արարչին ու շփվեին Նրա հետ: Այդ պատճառով մեծագույն կորուստը, որ իր հետ բերեց մեղանչումը, դարձավ ոչ թե այգուց Ադամի ու Եվայի վռնդումը, այլ նրանց Աստծո անմիջական ներկայության հնարավորությունից զրկելը:

Խորհեցե՛ք «սրբարան» բառի իմաստի մասին: Ո՞ւր է այն ուղղում ձեր միտքը: Ի՞նչ է ձեզ համար «սրբարանն» այսօր: Սուրբի մասին ձեր պատկերացումն ինչպե՞ս է օգնում ձեզ՝ ավելի լավ հասկանալ, թե մեզ ինչ է տալիս Աստծո սրբարանը:

Երկուշաբթի *հոկտեմբերի 7*

Պատճենն ու օրինակը

Կարդացե՛ք Ելից 25.9,40, Եբրայեցիս 8.5, 9.23,24-ը: Ի՞նչ փոխադարձ կապ կա երկրային և երկնային սրբարանների միջև: _____

_____

Սուրբ Գիրքը հստակ կերպով խոսում է այն մասին, որ Մովսեսը չի հորինել խորանը, այլ այն կառուցել է համապատասխան Աստծո ցուցումներին, որոնք ստացել էր լեռան վրա (Ելից 26.30, 27.8, Թվոց 8.4): Երկրային սրբարանը պետք է համապատասխաներ օրինակին (Ելից 25.9,40): Եբրայերեն «տավնիտ» նշանակում է «օրինակ» (մոդել, նմանություն, գծագիր): «Տավնիտ» նշանակում է «բնօրինակի պատճեն, որը որպես (փոքրածավալ) մոդել է ծառայում մեկ այլ պատճենի համար»: Սկզբում Մովսեսին թույլ տրվեց նայել բնօրինակ Երկնային սրբարանին՝ իր ողջ լայնարձակությամբ ու փառքով (Ելից 24.10, տե՛ս նաև Է. Ուայթ, Նահապետներ և մարգարեներ, 343), իսկ հետո նրան ցույց տրվեց «Երկնային սրբարանի փոքրածավալ մոդելը» (Է. Ուայթ, Մարգարեության հոգին, հտ. 1, 269)՝ երկրային տաճարի կառուցման օրինակը: Այսպիսով՝ երկրային սրբարանը, անկասկած, Երկնային սրբարանի կամ տաճարի պատճենն է:

Այդ պատճառով Երկնային տաճարը բնօրինակ է, մոդել՝ իսրայելյան սրբարանների համար: Ակնհայտ է նաև այն, որ մենք չենք կարող

Երկնային սրբարանը նույնացնել բուն Երկնքի հետ: Երկնային տաճարը գտնվում է «երկնքում» (Հայտնություն 11.19, 14.17, 15.5), այսինքն՝ երկնքում գտնվում է տաճարը, իսկ երկինքն ու տաճարը միևնույնը չեն:

Եբրայեցիներին հղված ուղերձը բացահայտում է Երկնային սրբարանի իրական լինելը: Երկնքում գտնվող սրբարանը անվանված է «ճշմարիտ խորան» (Եբրայեցիս 8.2), ինչպես նաև՝ մեծ ու կատարելագույն խորան (տե՛ս Եբրայեցիս 9.11), այն ժամանակ, երբ երկրային խորանը Երկնային խորանի ստվերն էր (Եբրայեցիս 8.5): Այնպես, ինչպես ստվերը միշտ ինչ-որ իրական բան է ցույց տալիս և այդ իրողության անկատար, թույլ արտացոլանքն է, այդպես էլ երկրային սրբարանը միայն Երկնայինի անդրադարձն է: Սակայն, չնայելով իր ողջ սահմանափակությանը, երկրային սրբարանն իսկապես արտացոլում է երկնայինի իրական լինելը:

Այդպիսի փոխկապակցվածությունը կոչվում է տիպաբանություն: Աստվածաշնչյան տիպաբանությունը պատմական իրադարձությունների, կերպարների, առարկաների կամ երևույթների դասակարգումն է ըստ որևէ հատկանիշի: Տիպաբանության օբյեկտները համապատասխանաբար կոչվում են կերպար (բնօրինակ) և նախակերպար (պատճեն): Քանի որ համապատասխանությունը գալիս է կերպարից (բնօրինակից) նախակերպարին (պատճենին), մենք կարող ենք Եբրայեցիս թղթի մեջ տեսնել, որ Մովսեսին ցույց տրված երկնային օրինակը նշվում է որպես «պատկեր» (Եբրայեցիս 8.5), իսկ երկրային սրբարանը՝ որպես «նախակերպար» կամ «պատճեն» (Եբրայեցիս 9.24): Այդ ճշմարտությունը ևս մեկ ապացույց է այն բանի, որ Երկնային սրբարանը գոյություն ուներ նախքան երկրայինի կառուցումը: Որպես Յոթերորդ օրվա ադվենտիստներ՝ մենք կանգնած ենք ամուր աստվածաշնչյան հիմքի վրա, երբ ընդգծում ենք Երկնային սրբարանի ֆիզիկապես իրական լինելը:

Երեքշաբթի ***հոկտեմբերի 8***

Հիսուսը՝ որպես սրբարան

Կարդացե՛ք Հովհաննես 2.19-21-ը: Հիսուսի մարմինն ինչո՞ւ է համեմատվում տաճարի հետ: Տե՛ս նաև Հովհաննես 1.14-ը: _____

_____

_____

Հովհաննու ավետարանի թեմաներից մեկը հայտնում է, որ Հիսուսը

ցույց տվեց լավագույն «տաճարը»: Խորանի պատկերը հայտնվում է արդեն Հովհաննես 1.14-ում: Հիսուսն է Խոսքը, որ բնակվեց մարդկանց մեջ, և նրանք տեսան Նրա «փառքը»: Հունարեն «սկենոո» բառը (բնակվել) հունարեն «սկենէ» (խորան) գոյականի բայական ձևն է, այնպես որ 14-րդ համարը կարող էր թարգմանվել այս կերպ՝ «Խոսքը, որ բնակվեց [խորանում] մեր մեջ»: Տվյալ համատեքստում «փառք» բառը մեզ հիշեցնում է Աստծո փառքը, որը լցրեց ինչպես խորանը անապատում (Ելից 40.34,35), այնպես էլ՝ Սողոմոնի տաճարը դրա հանդիսավոր օծման ժամանակ (Բ Մնացորդաց 7.1-3): Այսպիսով, երբ Քրիստոսը որպես Աստածամարդ եկավ երկիր, Նա կատարեց Աստծո «տաճարի խոստումը» Իր ժողովրդի մեջ բնակվելու մասին:

Ինչպես ցույց են տալիս բերված համարները, Հիսուսն Իրեն հռչակեց տաճար՝ ցույց տալով, որ Իր մահից հետո երկրային տաճարը կը-կորցնի իր նշանակությունը (Հովհաննես 2.19-21, Մատթեոս 27.51): Ճիշտ այդպես էլ, երբ Հիսուսն ասաց, որ Ինքը կյանքի հացն է (Հովհաննես 6.35) և աշխարհի լույսը (Հովհաննես 8.12), դա կարող էր ցույց տալ, բացի մանանայից, նաև առաջավորության հացերը և ճրագակալը՝ առարկաներ, որոնք գտնվում էին երկրային սրբարանում: Հայտարարությունն այն մասին, որ Հիսուսը «Աստծո զոհաբերական Գառն է, որ վեր է առնում աշխարհի մեղքը» (Հովհաննես 1.29), անկասկած, ցույց է տալիս սրբարանը:

«Ամենքը, ովքեր ծառայություն էին կատարում սրբարանում, մշտապես դասեր էին ստանում մարդկային ցեղի համար Քրիստոսի բարեխոսության և միջնորդական ծառայության մասին: Այդ ծառայությունը նախատեսված էր նրա համար, որ յուրաքանչյուր մարդկային սրտում սեր առաջ բերի Աստծո Օրենքի հանդեպ, որը Նրա Թագավորության օրենքն է: Զոհաբերությունները պետք է ակնառու դաս դառնային Աստծո սիրո մասին, որ հայտնվել էր Քրիստոսի՝ տառապող, մահացող զոհի մեջ, որ Իր վրա էր վերցրել մեղքը, այն մեղքը, որի համար մեղավոր էր մարդը՝ և ինչը դրսևորվեց Անմեղի մեջ, որ մեղք դարձավ մեզ համար» (Է. Ուայթ, Հատընտիր լուրեր, հտ. 1, 233):

Մեր մեղսավոր էության պատճառով մենք հակված ենք մտածել, որ Աստված զայրանում է մեզ վրա: Ինչպե՞ս է Հիսուսի կյանքի և մահվան մեջ բացահայտված Աստծո սիրո հայտնությունն օգնում մեզանից յուրաքանչյուրին՝ անձնական մակարդակում գիտակցել, որ Աստված սիրում է մեզ՝ չնայած մեր սխալներին: Այդ գիտակցումն ինչպե՞ս պետք է ոգևորի մեզ՝ հաղթանակ տանել մեր «ես»-ի հանդեպ:

Եկեղեցին՝ որպես սրբարան

Քրիստոսի երկինք համբարձումից և երկնային սրբարանում որպես քահանայապետ Նրա օծումից հետո երկրի տաճարը, զոհաբերությունների համակարգի հետ մեկտեղ, դադարեց Փրկության ծրագրում որևէ որոշակի դեր ունենալ (տե՛ս Մատթեոս 27.50,51): Սակայն Աստված առաջվա նման ցանկանում էր Իր ժողովրդի մեջ բնակվել Երկրի վրա, ինչն այժմ հնարավոր է Սուրբ Հոգու շնորհիվ: Առաքյալներն այս միտքը մարդկանց հասցնելու համար օգտագործում էին տաճարի կերպարը:

Կարդացե՛ք Ա Կորնթացիս 3.16,17, 6.19,20, Բ Կորնթացիս 6.16, Եփեսացիս 2.19-22-ը: Ուշադրությո՛ւն դարձրեք սրբարանի կերպարներին, որոնք հանդիպում են այս համարներում: Բերված համարների օգնությամբ մեզ ի՞նչ ճշմարտություն է սովորեցնում Աստվածաշունչը: _____

_____

_____

_____

Ա Կորնթացիս 3.16,17-ում Պողոսը Եկեղեցուն դիմում է որպես մեկ ամբողջություն՝ նրան անվանելով տաճար (Ա Կորնթացիս 3.16 և պնդելով, որ այդ տաճարը սուրբ է (Ա Կորնթացիս 3.17): Միևնույն գաղափարները Ա Կորնթացիս 63.19,20-ում նա կիրառում է յուրաքանչյուր առանձին հավատացյալի առումով: Լինելով տաճար՝ հավատացյալն իրենից ներկայացնում է սուրբ տարածք, և նրա բարձրագույն պարտքն է՝ իր կյանքն անցկացնել սրբությամբ: Պողոսն օգտագործում է տաճարի կերպարը ընդգծելու իր կանչվածությունը մաքուր ու սուրբ կյանքի, որը տվյալ համատեքստում նույնականացնում է բարոյական մաքրության հետ (Ա Կորնթացիս 6.15-18): Պողոսի կողմից Եկեղեցու՝ որպես Աստվածային սրբարանի մասին վերջին հիշատակումը համապատասխանում է տվյալ մոդելին. հավատացյալների և անհավատների միջև ընդհանուր ոչինչ չի կարող լինել (Բ Կորնթացիս 6.14-7.1), որովհետև Եկեղեցին ուխտի հարաբերությունների մեջ է Աստծո հետ և պատկանում է միայն Նրան (Բ Կորնթացիս 6.18):

Միևնույն ժամանակ, Եկեղեցին ոչ միայն Աստծո տաճարն է, այլ նաև սուրբ քահանայություն է (Ա Պետրոս 2.5,9): Նման առավելության հետ, անշուշտ, նաև մեծ պատասխանատվություն է կապված: Որքա՜ն

կարևոր է այս դեպքում, որ մենք մեր կյանքը հավատով և հնազանդությամբ հնազանդեցնենք Տիրոջը. Նա այնքա՜ն բան է պարգևել մեզ, այդ պատճառով էլ խնդրում է մեզ այդ մասին:

Իհարկե, մենք փրկվում ենք Քրիստոսի արդարությամբ, որը լիովին ծածկում է մեզ: Սակայն ի՞նչ է Աստված սպասում մեզանից այն ամենից հետո, ինչ մենք Քրիստոսում ստացել ենք Իր շնորհով: Եվ, որ ավելի կարևոր է, մենք ինչպե՞ս կարող ենք լավագույնս իրականացնել այն, ինչ Նա սպասում է մեզանից:

Հինգշաբթի ***հոկտեմբերի 10***

Նոր արարում

Կարդացե՛ք Հայտնություն 7.15-17-ը: Որտե՞ղ են գտնվում փրկագնվածները, և ինչպե՞ս են նրանք պատկերված տվյալ հատվածում: _____

_____

_____

_____

Այս համարները Աստծուն ծառայող փրկագնվածներին նկարագրում են որպես թագավորներ և քահանաներ (Հայտնություն 1.6, 5.10, 20.6): Խոստումն այն մասին, որ «աթոռի վրա նստողը իր վրանը կտարածի նրանց վրա» (կբնակվի նրանց մեջ) (Հայտնություն 7.15), ներդաշնակում է անապատում, սրբարանում Աստծո ներկայության հետ, որտեղ Նա բնակվում էր հին Իսրայելի մեջ՝ որպես նրա մեծ Առաջնորդ: Նոր երկիրը, ինչպես մի ժամանակ սրբարանը, կրկին փոխհարաբերությունների իդեալական վայր կդառնա, վայր, որտեղ Աստված հանդիպելու է փրկագնվածների հետ: Նա կդառնա ապաստարանի, պաշտպանության և կյանքի ողջ լիության երաշխիք՝ Աստծո և Քրիստոսի ներկայությամբ: Նա, Ով ժամանակին բնակվում էր մեզ հետ (Հովհաննես 1.14), այժմ «խորան» է տարածում Իր սրբերի վրա, որպեսզի նրանք կարողանան հավիտյան ապրել Նրա հետ:

Կարդացե՛ք Հայտնություն 21.1-22-ը: Ինչպե՞ս է նկարագրված Նոր Երուսաղեմը: Դուք ինչպե՞ս եք այս համարներում զուգահեռներ գտնում սուրբ քաղաքի և սրբարանի միջև: _____

_____

_____

_____

Հովհաննեսը տաճար չի տեսնում Նոր Երուսաղեմում (Հայտնություն 21.22): Ավելի շուտ, Նոր Երուսաղեմն ինքը հանդիսանում է տաճար և Աստծո խորան (Հայտնություն 21.3): Սրբարանի որոշ տարրեր ևս վերագրվում են Նոր Երուսաղեմին. «սուրբ» քաղաքը երկնային ծագում ունի (Հայտնություն 21.2,10), այն ունի նույնպիսի խորանարդաձև տեսք, ինչպես և Սուրբ Սրբոցը (Հայտնություն 21.16, Գ Թագավորաց 6.20): Ինչպես և տաճարի տարածքում, քաղաք մուտք չունի ոչ մի «անմաքրություն անող» (Հայտնություն 21.27), բայց ամենագլխավորը Աստծո ներկայությունն է: Աստծո սրբարանում մենք կարող ենք ապրել Նրա հետ՝ պահպանելով ամենամտերիմ փոխհարաբերություններ (Հայտնություն 21.3,7): Դրանում է փրկության նպատակը:

Հավիտենությունը սերտ փոխհարաբերություններ է ենթադրում Աստծո հետ, այնպես չէ՞: Մեզ համար ինչո՞ւ է այդքան կարևոր, ինչպես գրում է Է. Ուայթը, արդեն այսօր «Աստծո հետ սերտ փոխհարաբերությունների մեջ գտնվել»:

Ուրբաթ ***հոկտեմբերի 11***

Հետագա ուսումնասիրության համար

Է. Ուայթի «Դաստիարակություն» գրքից կարդացե՛ք «Դպրոցը ապագայում» գլուխը (301-309), «Մեծ պայքար» գրքից՝ «Պայքարի ավարտը » գլուխը (673-678):

«Շատերն անհանգստացել են, որ սուրբերի ապագա ժառանգությունը չափազանց նյութական և երկրային կթվա, և այդ պատճառով ջանացել են միայն հոգևոր մեկնաբանություն տալ գալիք իրականությանը և, այդպիսով, ի չիք դարձնել այն ճշմարտությունները, որոնք մեզ թույլ են տալիս մեր ապագա հայրենիքին նայել որպես մեր սեփական տան: Քրիստոսն Իր աշակերտներին խոստացել է, որ Ինքը գնում է Հոր տանը նրանց համար բնակարաններ պատրաստելու: Նրանք, ովքեր ընդունում են Աստծո Խոսքի ուսմունքը, լիակատար անտեղյակ չեն լինի երկնային բնակարանների առումով: Եվ, այնուամենայնիվ, «ինչ որ աչք չտեսավ, և ականջ չլսեց և մարդու սիրտ չընկավ, այն պատրաստեց Աստված Իրեն սիրողների համար» (Ա Կորնթացիս 2.9): Մարդկային լեզուն ունակ չէ նկարագրել արդարների պարգևը: Նա հասկանալի կդառնա միայն նրանց, ովքեր կտեսնեն այն: Սահմանափակ միտքն ի զորու չէ ընկալել Աստծո դրախտի փառքը» (Է. Ուայթ, Մեծ պայքար, 674,675):

Հարցեր քննարկման համար

1. Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ է կարևոր իմանալը, որ Աստծո Երկնային սրբարանը իրական վայր է: Միևնույն ժամանակ, ինչո՞ւ արժե, որ մենք զգուշություն դրսևորենք և մանրակրկիտ համեմատություն չանցկացնենք երկրային և երկնային տաճարների միջև:
2. Դասարանում մտորե՛ք այն գաղափարի մասին, որ Եկեղեցին նման է «սրբարանի»: Դուք ինչպե՞ս եք հասկանում այդ ճշմարտությունը: Լինելով Եկեղեցի՝ ինչպե՞ս մենք կարող ենք մեր կյանքում կենսագործել այդ կարևոր ուսմունքը:
3. «Չգիտե՞ք, որ դուք Աստծո տաճար եք, և Աստծո Հոգին բնակված է ձեզանում: Եթե մեկն Աստծո տաճարն ապականի, նրան էլ Աստված կապականի. որովհետև Աստծո տաճարը սուրբ է՝ որ դուք եք» (Ա Կորնթացիս 3.16,17): Մեզ ի՞նչ են սովորեցնում բերված համարները, և մենք ինչպե՞ս կարող ենք այդ ուսմունքը կիրառել մեր կյանքում:
4. Խորհեցե՛ք այն մտքի մասին, որ մենք այսօր «քահանաներ» ենք և քահանայական պարտականություններ ենք կատարելու Երկրորդ գալուստից հետո: Որո՞նք են այդ պարտականություններն այժմ, և որո՞նք են լինելու Հիսուսի վերադարձից հետո: Ինչո՞ւ է «քահանաներ» բառի օգտագործումն իսկ ցույց տալիս, թե Փրկության ծրագրի համար որքան է կարևոր է սրբարանի հայեցակարգը:

ՁՈՀԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացեք.

Ծննդոց 3.9-21, Ելից 12.21-27, Ղևտացոց 2.1-3, Ծննդոց 22.1-19, Ղևտացոց 17.10,11, Փիլիպեցիս 4.18:

Հիշելու համարը.

«Արդ աղաչում եմ ձեզ, եղբայրնե՛ր, Աստծո ողորմությամբ, որ ձեր մարմինները ներկայացնեք կենդանի, սուրբ և Աստծո ընդունելի պատարագ, որ է ձեր բանավոր պաշտոնը» (Հռոմեացիս 12.1):

Զոհի հայեցակարգը կենտրոնական տեղ է զբաղեցնում ողջ Ավետարանում: Աստվածաշնչյան լեզուներում զոհ նշանակող բառը հաճախ ներկայացնում է Աստծուն մերձենալու, Նրան ինչ-որ բան ընծայելու միտքը: Զոհ կամ զոհաբերություն ցույց տվող եբրայերեն բառի հիմնական նշանակությունը նկարագրում է մոտենալու, ինչ-որ բան Աստծո ներկայությանը նվիրաբերելու գործողությունը: Այս բառի հունարեն համարժեքները նշանակում են «ընծա» և նկարագրում են զոհաբերությունը:

Նաև անգլերեն *«offering» (զոհաբերություն)* բառը ծագում է լատիներեն *«offerre» (ընծա մատուցել)* բառից: Անգլերեն *«sacrifice» (զոհ)* բառը բաղկացած է լատիներեն *«sacer» (զոհ)* և *«facere» (անել)* բառերից՝ ցույց տալով այն գործողությունը, որը ինչ-որ բան է սրբագործում:

Այս շաբաթ մենք կքննարկենք որոշ զոհաբերություններ, որոնք հավատավոր մարդիկ բերում էին Աստծուն: Մենք կտեսնենք, որ Աստված, ինչպես հնում, այնպես էլ այսօր, Իր զավակներին կանչում է զոհեր մատուցելու:

Իհարկե՛, ամենամեծ ու նշանակալի զոհը այն է, որ Աստված «Իր Միածին Որդին տվեց» (Հովհաննես 3.16) որպես զոհ՝ մարդկային մեղքերի համար:

Առաջին զոհը

Կարդացե՛ք Ծննդոց 3.9-21-ը: Աստված Ադամին ու Եվային ի՞նչ ասաց նրանց մեղանչումից հետո: _____

_____

_____

Ադամն ու Եվան ապրում էին կատարյալ աշխարհում, այգի-սրբարանում, և Աստված նրանց դեմ առ դեմ իրենց Արարչի հետ շփվելու հնարավորություն էր պարգևել: Նրանց առաջին մեղքը հանգեցրեց Աստծո հետ փոխհարաբերությունների խզման: Սակայն Աստված արդեն ուներ այդ խզումը հաղթահարելու ծրագիրը, և նախքան մեր նախածնողներին վրա կհասնեին դատաստանները, Նա նրանց Փրկչի հույս տվեց (Ծննդոց 3.15):

«Ադամն ու Եվան՝ որպես հանցագործներ, կանգնած էին Աստծո առջև՝ սպասելով դատավճռին, որը իրենց մեղքի հետևանքն էր: Բայց նախքան նրանք կլսեին փշերի ու տատասկների, տրտմության ու հուսահատության մասին, որոնք պետք է դառնային իրենց բաժինը, նախքան կլսեին հողի մասին, որին պետք է վերադառնային, մարդկանց ասվեցին խոսքեր, որոնք պետք է հույս պարգևեին նրանց: Չնայած որ նրանց տառապանք էր սպասվում… նրանք արդեն կարող էին կանխավայելել վերջնական հաղթանակը» (Է. Ուայթ, Որպեսզի ես ճանաչեմ Նրան, 15):

Տերը նրանց ցույց տվեց այդ հաղթանակի գլխավոր առանձնահատկությունները, երբ անմիջապես դատավճռի հրապարակումից հետո նրանց համար կաշվե հագուստներ պատրաստեց՝ ծածկելու նրանց մերկությունն ու ամոթը: Անկասկած, դրա համար կարիք եղավ, որ անմեղ կենդանի զոհվի, և այդպիսով առաջին մարդկանց դաս տրվեց միջնորդական զոհի մասին (Ծննդոց 3.21):

Բացի դրանից, խորհրդանշական էր այն, որ Աստված մեղադրյալներին հագուստ տվեց: Այնպես, ինչպես սրբարան բերվող զոհերը առանձնահատուկ փոխհարաբերություններ էին երաշխավորում Աստծո և Իր ժողովրդի միջև, այնպես էլ այգում տրված հագուստը մեղավորներին հավաստիացնում էր իրենց հանդեպ Աստծո անփոփոխ բարյացակամության մեջ:

Այսպիսով, մարդկության պատմության ամենավաղ օրերից իսկ զոհաբերությունները վկայում էին այն մասին, որ մեղավոր մարդիկ

կարող են Աստծո հետ միավորվել միայն Հիսուսի մահվան միջոցով, որի նախակերպարն էին զոհերը:

Կրկին կարդացե՛ք Ցննդոց 3.9-21-ը: Ինչի՞ մասին է վկայում այն փաստը, որ նախքան Աստծո կողմից մեղավոր զույգին դատապարտող խոսքեր արտաբերելը՝ Նա նրանց բացարձակ հաղթանակի խոստում տվեց: Դա ի՞նչ է ասում մեր հանդեպ Աստծո վերաբերմունքի մասին՝ անգամ մեր ընկած վիճակում

Երկուշաբթի *հոկտեմբերի 14*

Զոհաբերությունների տեսակները

Հինկտակարանյան ժամանակներում հավատավոր մարդիկ կարող էին զոհեր մատուցել տարբեր դեպքերում և բազմազան պարագաներում: Նրանց թույլատրվում էր զոհաբերել մաքուր կենդանիներ, հացահատիկ, ձեթ և այլն: Կենդանիների զոհաբերությունը սրբարանի ծառայության ամենահին սահմանումն էր, և քահանայական ծառայությանը զուգահեռ՝ այն կազմում էր Իսրայելի ծառայության կենտրոնը: Կրոնական կյանքն անիմաստ էր առանց զոհաբերությունների:

Զոհաբերությունների ի՞նչ տեսակներ են նկարագրված հետևյալ համարներում. Ելից 12.21-27, Ղևտացոց 2.1-3, Ելից 25.2-7, Ղևտացոց 4.27-31: _____

_____

_____

Աստված հաստատել էր զոհաբերությունների համակարգը, որպեսզի հավատավորները կարողանային Իր հետ սերտ փոխհարաբերություններ պահպանել: Այդ պատճառով զոհաբերությունները կարող էին տեղի ունենալ ամենատարբեր իրավիճակներում՝ ի նշան շնորհակալության, որպես ուրախության և ցնծության արտահայտության նշան, որպես ընծա, ներման խնդրանք, ապաշխարության արտահայտություն, որպես նվիրաբերման կամ վերականգնման խորհրդանիշ:

Ամենակարևոր զոհաբերությունների թվում հարկավոր է նշել ողջակեզի զոհը (Ղևտացոց 1), հացի ընծաները (Ղևտացոց 2), խաղաղության զոհերը (Ղևտացոց 3), զոհեր մեղքի համար (Ղևտացոց 4), հանցանքի զոհեր (Ղևտացոց 5.14-6.7): Ընծաների առաջին երեք տեսակներն իրենցից ներկայացնում էին կամավոր ընծաներ, որոնք պետք է զոհաբերողին (և մեզ) հիշեցնեին. այն, ինչ մեզնից ներկայացնում ենք, և այն ամենը, ինչին տիրապետում ենք, պատկանում է Աստծուն: Ողջա-

կեզի զոհը խորհրդանշում է զոհաբերողի լիակատար նվիրաբերումը: Հացի ընծան խորհրդանշում է մեր նյութական բարիքների նվիրաբերումը Աստծուն, լինի սնունդ, կենդանի կամ էլի ինչ-որ բան: Խաղաղության զոհը միակ զոհն էր, որից մասնակիցը որոշակի մաս էր ստանում անձնական օգտագործման համար:

Մյուս երկու զոհաբերությունները պարտադիր էին: Նրանք մարդկանց հիշեցնում էին, որ թեև սխալ արարքներն ունեն իրենց հետևանքները, դրանք, այնուամենայնիվ, կարող են «բժշկվել»: Մեղքի համար զոհը (այն նաև անվանում են «մաքրող զոհ») բերում էին ծիսական պղծումից կամ այն բանից հետո, երբ մարդն իմանում էր, որ ինքը պղծվել է բարոյապես, այսինքն մեղանչել է՝ խախտելով Աստծո օրենքը: Մեղքի համար յուրաքանչյուր զոհ մեղավորին ցույց էր տալիս Աստծո Որդու Մեծ Զոհը, որի շնորհիվ մարդը կարող էր ներում և մեղքից մաքրագործում ստանալ:

Զոհաբերությունների այսպիսի լայն լուսապատկերը ցույց է տալիս, որ Աստված պետք է վերահսկի մեր կյանքի յուրաքանչյուր տեսանկյունը: Դուք ինչպե՞ս կարող եք սովորել Նրան տալ բացարձակապես ամեն բան, ինչ ունեք, և անգամ ինքներդ ձեզ: Ի՞նչ է տեղի ունենում, երբ դուք չեք անում դա:

Երեքշաբթի ***հոկտեմբերի 15***

Զոհաբերությունը Մորիա սարի վրա

Կարդացե՛ք Ծննդոց 22.1-19-ը: Զոհաբերության մասին ի՞նչ դաս յուրացրեց Աբրահամը: _____

_____

Ի՞նչ նպատակ էր հետապնդում Աստված՝ այդպիսի աներևակայելի ձևով Աբրահամի հավատը փորձելով: Աստծո հետ նահապետի կյանքը միշտ ուղեկցվում էր Աստծո խոստումներով՝ հող, սերունդներ տալու, օրհնելու խոստմամբ, որդի պարգևելու խոստմամբ, այն խոստմամբ, որ Աստված հոգ կտանի Իսմայելի մասին: Աբրահամը զոհաբերում էր, սակայն դա ոչ միշտ էր տեղի ունենում Աստծո խոստումների լույսի ներքո: Սակայն Ծննդոց 22-ում նկարագրված իրադրության մեջ Աբրահամը որևէ խոստում չէր ստացել Աստծուց, ընդհակառակը, նրան հրամայվեց զոհաբերել կենդանի խոստումը՝ իր որդուն: Հետևելով Աստծո ցուցումին՝ Աբրահամը ցույց տվեց, որ Աստված իր համար ամեն բանից կարևոր է:

«Աստված Աբրահամին հրամայեց սպանել իր որդուն, որպեսզի նա գիտակցի Ավետարանի իրական լինելը, ինչպես նաև՝ որպեսզի փորձվի նրա հավատը: Տառապանքը, որ նա ապրեց սոսկալի փորձության երեք մռայլ օրերի ընթացքում, թույլ տրվեց, որպեսզի նա իր սեփական փորձով կարողանար գոնե մասամբ հասկանալ, թե որքան մեծ զոհ Անսահման Աստված մատուցեց հանուն մարդու փրկագնման: Ոչ մի այլ փորձառություն այդպիսի հոգեկան տառապանքներ չէր պատճառի Աբրահամին, ինչպես իր որդու զոհաբերությունը: Աստված Իր Որդուն հանձնեց տանջանքների և անարգ մահվան» (Է. Ուայթ, Նահապետներ և մարգարեներ, 154):

Զոհաբերության առումով Աբրահամը հասկացավ երկու կարևոր սկզբունք: Նախ՝ ոչ ոք, բացի Աստծուց, չի կարող ճշմարիտ զոհ մատուցել, ինչպես նաև փրկության միջոց տրամադրել: Այդ մասին հոգ կտանի Աստված: Աբրահամը հավերժացնում է այդ սկզբունքը՝ այդ վայրն անվանելով «Եհովա-յիրե», ինչը նշանակում է «Տերը տեսնում է» (Տերը հոգ կտանի): Երկրորդ՝ ճշմարիտ զոհը միջնորդական է, քանի որ այն փրկեց Իսահակի կյանքը: Խոյը զոհաբերվեց Իսահակի «փոխարեն» (Ծննդոց 22.13): Աստծո ուղարկած կենդանին ցույց էր տալիս Աստծո Գառին՝ Հիսուս Քրիստոսին, Ում վրա «Տերը… դրեց մեր ամենի մեղքը» (Եսայիա 53.6,7, Գործք առաքելոց 8.52):

Ինչպիսի՜ ցնցող հնազանդություն Աստծուն: Ո՞վ կարող է պատկերացնել, թե ինչի միջով անցավ Աբրահամը: Խորհեցե՛ք, թե վերջին անգամ դուք երբ եք այդպիսի լիակատար հավատ դրսևորել՝ կատարելով այն, ինչ տառապանք է պատճառել ձեզ: Դուք ի՞նչ սովորեցիք այս դեպքից, և որքանո՞վ է յուրացվել այդ դասը:

Չորեքշաբթի ***հոկտեմբերի 16***

Կյանք՝ կյանքի փոխարեն

Կարդացե՛ք Ղևտացոց 17.10,11-ը: Աստված ի՞նչ գործառույթով է օժտել արյունը: _____

_____

_____

Այն հատվածում, որտեղ Աստված իսրայելացիներին խրատում է, որ նրանք արյուն չուտեն, Նա բերում է այդ արգելքի պատճառները. արյունը խորհրդանշում է կյանքը, և Աստված զոհի արյունը փրկանք

է դարձրել մարդկային կյանքի համար: Արյամբ ներկայացված մի կյանքը փրկագնում է մեկ ուրիշ կյանքը: Փոխարինման սկզբունքը՝ վառ արտահայտված Մորիա սարի վրա, երբ Աբրահամը խոյի արյունը բերեց իր որդու արյան փոխարեն, կայուն ձևով արմատավորվեց հին Իսրայելին ներկայացվող Աստծո պահանջների մեջ:

Ծննդոց 22-ում Աստված ցույց է տալիս, որ հենց Ինքն է տրամադրում փրկագնման միջոցը. երբայերեն բնագրում «Ես ձեզ տվի այն» համարում (Ղևտացոց 17.11) «Ես»-ը ընդգծված է: Մենք չենք կարող առաջարկել մեր սեփական փրկագինը: Դա պետք է անի Աստված:

Այդպիսի հայեցակարգը բացակայում է մյուս կրոններում, որոնցում օգտագործվում են զոհաբերությունները: Աստվածաշունչը ցույց է տալիս, որ ոչ թե մարդն է մոտենում Աստծուն՝ իմանալով, թե ինչպես խաղաղեցնել նրան, այլ Աստված է հոգ տանում, որ մարդը հայտնվի Նրա սուրբ ներկայության մեջ: Եվ Քրիստոսում Նա Ինքն է արյուն պարգևում փրկագնման համար:

Կարդացե՛ք Ա Թագավորաց 15.22 և Միքիա 6.6-8-ը: Թվարկե՛ք ծիսական համակարգի որոշ վտանգներ: _____

_____

_____

Աստված երբեք չէր ցանկանա, որ զոհաբերության ծառայությունն իրենով փոխարինի անկեղծ և մերձ փոխհարաբերությունները: Ընդհակառակը, զոհերը պետք է հավատավորների սրտերը բացեին Աստծո առաջ և ընդառաջ գնային Նրան: Եթե մենք աչքաթող անենք այն փաստը, որ զոհերն արտահայտում են Աստծո և մեր միջև հոգևոր փոխհարաբերությունները, և որ նրանք ցույց են տալիս մեծագույն զոհը՝ Հիսուս Քրիստոսին, ապա հեշտությամբ կարող ենք զոհաբերության ծեսը շփոթել մեքենաբար փրկագնում պարգևող ապարատի հետ: Բացի զոհաբերություններից, Աստված իսկապես ցանկանում է, որ մեր սրտերը ներդաշնակ լինեն Իր հետ (Սաղմոս 514.18,19): Այդ պատճառով իսրայելյան մարգարեները ժողովրդին մեղադրում էին կեղծ աստվածապաշտության մեջ և կոչ էին անում՝ «իրավունք անել, ողորմություն սիրել և խոնարհությամբ վարվել … Աստծո հետ» (Միքիա 6.6-8, հմմտ. Եսայիա 1.10-17):

Մենք ի՞նչ իրադրություններում ենք բախվում նման վտանգի: Մեզ համար ինչո՞ւ է հաճախ դժվար լինում գիտակցել, որ այս ոլորտում մենք ընդունակ ենք վարվել ճիշտ նույն կերպ, ինչպես իսրայելացիները՝ հին ժամանակներում: Մենք ինչպե՞ս կարող ենք խուսափել այդ սխալից:

Կենդանի զոհը

Թեև Քրիստոսի քավչարար մահից հետո արդեն չի պահանջվում կենդանիներ զոհաբերել, Նոր Կտակարանը խոսում է այլ զոհի անհրաժեշտության մասին:

Համաձայն բերված համարների՝ ի՞նչ զոհեր մենք պետք է բերենք Աստծուն այսօր: Հռոմեացիս 12.1,2, Փիլիպեցիս 4.18, Եբրայեցիս 13.15,16, Ա Պետրոս 2.5: _____

_____

_____

_____

Զոհաբերությունների համակարգի եզրաբանությունը շատ լավ արտացոլում է վաղ քրիստոնեական հայեցակարգն այն մասին, թե ինչ է նշանակում ապրել Աստծո հանդեպ լիակատար նվիրվածությամբ: Փաստորեն, անգամ երբ Պողոսը խորհում էր առաջիկա նահատակության մասին, նա իրեն նկարագրում էր որպես զոհ (Փիլիպեցիս 2.17, Բ Տիմոթեոս 4.6):

Մեզ ի՞նչ առանձնահատուկ լուր է տրված Հռոմեացիս 12.1-ում: Մենք ինչպե՞ս պետք է այդ ճշմարտությունը հայտնենք մեր կյանքում:_____

_____

_____

Կենդանի զոհը նշանակում է, որ մարդն իրեն լիովին նվիրում է Աստծուն: Դա ներառում է մարմնի նվիրումը (Հռոմեացիս 12.1) և մտքի ու սրտի վերափոխումը (համար 2): Մենք պետք է առանձնացված (սուրբ) լինենք միակ նպատակի՝ Աստծուն ծառայության համար: Քրիստոնյաներն իրենց լիովին նվիրում են Տիրոջը, որովհետև Նա ողորմած է, ինչպես ընդգծվում է Հռոմեացիս 12.1-11-ում: Աստծո ողորմածությունը նրանում է, որ Քրիստոսը Իրեն զոհաբերեց հանուն մեզ, Նա մեզ փրկություն է պարգևում:

Տվյալ համատեքստում Պողոսը քրիստոնյաներին կոչ է անում նմանվել Քրիստոսին: Աստծո շնորհի ճիշտ ըմբռնումը տանում է նրան, որ Աստծուն ենք նվիրում մեր կյանքը և ճշմարիտ ձևով ծառայում շրջապատողներին: Սեփական «ես»-ից հրաժարվելը և այն Աստծո կամքին հնազանդեցնելը միակ ճիշտ արձագանքն է Քրիստոսի մեծագույն զոհին, որ բերվել է հանուն մեզ:

Նաև անհրաժեշտ է նշել, որ հոգևոր ու դավանաբական ճշմարտության մեր ըմբռնման, ինչպես նաև՝ շրջապատողներին ծառայության միջև պետք է ներդաշնակություն լինի: Կյանքի յուրաքանչյուր տեսանկյուն պետք է արտահայտի Աստծուն հավատացող մարդու անկեղծ նվիրվածությունը: Ճշմարիտ երկրպագությունը երբեք չի լինում միայն ներքին ու հոգևոր. այն պետք է իր մեջ ներառի նաև անշահախնդիր ծառայության արտաքին դրսևորումները: Ի վերջո, խորհեցեք այն մասին, թե մեզ համար ինչ է կատարել Տերը:

Ուրբաթ ***հոկտեմբերի 18***

Հետագա ուսումնասիրության համար

«Անգամ երկնքի հրեշտակներին դժվար էր հասկանալ փրկագնման խորհուրդը, ըմբռնել այն, որ Երկնքի Տիրակալը՝ Աստծո Որդին, պետք է մահանա մեղավոր մարդկության փոխարեն: Երբ Աբրահամին հրամայվեց զոհաբերել իր որդուն, ողջ Երկինքը խորագույն հետաքրքրություն դրսևորեց այդ իրադարձության հանդեպ՝ մեծագույն ուշադրությամբ հետևելով հրամանի կատարման յուրաքանչյուր մանրամասնին: Երբ Իսահակի հարցին՝ «Ո՞ւր է ողջակեզի գառը», Աբրահամը պատասխանեց՝ «Աստված կտեսնի իր գառը», երբ հետ պահվեց հոր՝ արդեն որդուն սպանելու համար բարձրացած ձեռքը, և Աստծո կողմից նախապատրաստված խոյը զոհաբերվեց Իսահակի փոխարեն, այդ ժամանակ լույս սփռվեց փրկագնման գաղտնիքի վրա, և անգամ հրեշտակները շատ ավելի խորն ըմբռնեցին մարդու փրկության համար Աստծո նախատեսած հրաշալի ծրագիրը» (Է. Ուայթ, Նահապետներ և մարգարեներ, 155):

Հարցեր քննարկման համար

1. «Մեր ոտքերը կքայլեն Նրա ճանապարհներով, մեր շուրթերը կխոսեն ճշմարտությունը և կտարածեն Ավետարանը, մեր խոսքերը բժշկություն կբերեն, մեր ձեռքերը կբարձրացնեն ընկածներին և բազմաթիվ երկրային գործեր կկատարեն, այնպիսիք, ինչպիսիք սնունդ պատրաստելն ու հավաքելն է, տպագրումն ու վերանորոգումն է: Մենք կգրկենք միայնակներին ու սիրուց զրկվածներին, մեր ականջը կլսի տառապյալների լացը, իսկ մեր հայացքը խոնարհությամբ ու համբերությամբ կդառնա Աստծուն» (John Stott,9 Romans (Downers Grove, Ill.: InterVarsity, 1994, 322): Այս մեջբերումն ինչպե՞ս է

բացահայտում «կենդանի զոհ» հասկացության իմաստը: Ինչո՞ւ այդպիսի կյանքով ապրելու հնարավորությունը բացվում է միայն սեփական «ես»-ի համար մահվան միջոցով:

2. Ինչպես մենք տեսանք դասում, հավատավոր մարդկանց խոշորագույն խնդիրներից մեկն այն էր, որ նրանք զոհաբերությունների համակարգը դիտարկում էին ինքնանպատակ մի բան, և ոչ թե դեպի նպատակը՝ Աստծուն լիակատար նվիրաբերմանն ու շրջապատողներին անկեղծ ծառայության տանող միջոց: Ինչպե՞ս են Յոթերորդ օրվա ադվենտիստները (ովքեր այդքան լույս են ստացել) ենթակա առանձնահատուկ վտանգի՝ գնալ այդ նույն ճանապարհով՝ համարելով, որ մեծամեծ ճշմարտությունները, որոնց մենք տիրապետում ենք, ինքնանպատակ են, և ոչ թե միջոց, որոնք տանում են դեպի նպատակը:
3. Մտորեցե՛ք Աբրահամի ու Իսահակի պատմության մասին, որ տեղի ունեցավ Մորիա սարի վրա: Որքան էլ ըմբռնման համար դժվար լինի այն, որևէ մեկը կարող է պնդել, որ այն հենց պետք է լիներ այդպիսին, պետք է սոսկում և ցավ առաջ բերեր: Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ են որոշ մարդիկ համարում, որ բացի այլ հույզերից, այս պատմությունը պետք է ընթերցողի մեջ նաև այդ զգացումներն առաջ բերեր:

ՍՐԲԱՐԱՆԻ ԴԱՍԵՐԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Ելից 40.9,10, Ղևտացոց 19.2, Ա Պետրոս 1.14-16, Ելից 31.1-11, Հռոմեացիս 3.25-28, Գ Թագավորաց 8.31-53, Սաղմոս 72.1-17:

Հիշելու համարը.

«Եվ ինձ համար մի սրբարան շինեն, որ իրենց մեջ բնակվեմ» (Ելից 25.8):

Սրբարանը Աստծո գլխավոր «դասագիրքն է», որը մեզ բացահայտում է Ավետարանի նշանակությունը: Ստորև բերված գծապատկերը կօգնի մեզ շաբաթօրյա դպրոցում սրբարանի ուսումնասիրման դասի ժամանակ:





Տվյալ դասը կենտրոնացված է որոշ կարևոր ճշմարտություններ-ի վրա, որոնք ներկայացված են երկրային սրբարանում: Զոհաբերություններ-ի համակարգը մենք կքննարկենք ավելի ուշ:

Ներկայության վայրը

Համաձայն Ելից 25.8-ի՝ ո՞րն էր անապատում երկրային սրբարանի նպատակը: Մեր հանդեպ Աստծո սիրո մասին ի՞նչ զարմանահրաշ ճշմարտություն ենք իմանում ընթերցված համարից: ____

_____

_____

Եդեմի պարտեզում մեղքը քայքայեց Աստծո և մարդկանց միջև սերտ փոխհարաբերությունները: Մեղքը մեր նախածնողներին զրկեց Աստծո հետ ազատ շփումից: Սակայն Արարիչն առաջվա նման ցանկանում է մեզ մոտեցնել Իրեն և վայելել մարդկության հետ ուխտի խորը փոխհարաբերությունները. իսկ մերձեցման այդ գործընթացը Նա սկսել է դեռևս Եդեմում: Հարյուրամյակներ անց, Իսրայելն ազատագրելով եգիպտական ստրկությունից և հիմնելով սրբարանը, զոհաբերությունների համակարգը, Աստված կրկին նախաձեռնություն է հանդես բերում՝ մարդկությանը վերադարձնել Իր մոտ՝ Իր ներկայության մեջ:

Այսպիսով, սրբարանը վկայում է Աստծո՝ մշտապես Իր ժողովրդի մեջ լինելու ցանկության մասին: Դա Նրա ցանկությունն է (Սաղմոս 132.13,14): Նրա գլխավոր նպատակն են փոխհարաբերությունները, իսկ սրբարանը դրա համար միջոց է դարձել: Սրբարանը երկրի վրա Աստծո ժողովրդի հետ Նրա ներկայության տեսանելի վկայությունն է:

Թվոց 2-ի նկարագրությունից հետևում է, որ խորանը գտնվում էր քառակուսի ճամբարի կենտրոնում, ինչպես հին ժամանակներում սովորաբար իրենց վրանները տեղադրում էին Մերձավոր Արևելքի թագավորները: Այսպիսով, խորանի տեղադրությունը ցույց է տալիս, որ Աստված Իսրայելի Թագավորն է:

Ղևտացիներն իրենց վրանները խփում էին խորանի շուրջը (Թվոց 1.53), իսկ մյուս ցեղերը՝ չորսական խմբերով ավելի հեռու (Թվոց 2): Սա Աստծո՝ յուրաքանչյուր մարդուն մոտ լինելու ցանկության ակնառու լուսաբանումն է:

Սրբարանի մեկ այլ նպատակն էր՝ ծառայել որպես կենտրոնացված, Աստծո կողմից հաստատված երկրպագության վայր: Քանի որ սուրբ Աստծո ներկայության մեջ մեղավոր, անմաքուր և արատավոր մարդկանց գտնվելը վտանգավոր էր նրանց համար, Տերը սահմանեց զոհաբերությունների համակարգը, որը թույլ էր տալիս մեղավոր, անմաքուր մարդկանց ապրել սուրբ Աստծո ներկայությամբ:

Այսպիսով, սրբարանը ոչ միայն զոհաբերությունների և քահանաների ծառայության միջոցով բացահայտում էր Փրկության ծրագիրը, այլ հենց Փրկության ծրագրի մի մասն էր:

Սրբարանը վկայում է այն մասին, որ Տիեզերքի Արարիչը, Ով ստեղծել է ամեն բան, (տե՛ս Հովհաննես 1.1-3), իջավ մինչև անապատի անտուն թափառականների մեջ բնակվելը: Ինչպե՞ս արդեն միայն այս փաստը պետք է օգնի մեզ խուսափել ազգային, դասակարգային կամ մշակութային նախապաշարմունքներից:

Երկուշաբթի ***հոկտեմբերի 21***

«Սո՛ւրբ եղեք»

«Եվ օծման յուղը առնես, և խորանը և նրա մեջ եղած բոլոր բաները օծես, և սրբես նրան և նրա բոլոր անոթները, որ սուրբ լինեն: Եվ օծես ողջակեզի սեղանը և նրա բոլոր գործիքները, և սրբես սեղանը, և սեղանը ամենասուրբ լինի» (Ելից 40.9,10):

Ելից 40.9,10 տեքստերը վկայում են այն մասին, որ սրբարանը հարկավոր է ընկալել որպես առանձնահատուկ սուրբ վայր: Սրբության հիմնական գաղափարը եզակիության, առանձնահատուկ նպատակի համար առանձնացված լինելու, ինչպես նաև՝ Աստվածային ներկայության մեջ է:

«Սահմանված ծառայությունը կապող օղակ էր Աստծո և Իսրայելի միջև: Զոհաբերությունները ծառայում էին որպես Քրիստոսի զոհի նախակերպարներ և այդպիսով մարդկանց սրտերում պահում էին Փրկչի գալստյան հանդեպ անսասան հավատը: Հետևաբար, որպեսզի Տերը կարողանար ընդունել նրանց զոհերը և մնալ նրանց հետ, ինչպես նաև, որպեսզի մարդիկ կարողանային ճիշտ գիտություն ունենալ Փրկության ծրագրի մասին և պարտականությունների ճիշտ ըմբռնում, ծայրահեղ կարևոր էր, որ սրտի սրբությունը և կյանքի մաքրությունը, Աստծո հանդեպ պատկառանքն ու Նրա պահանջներին հնազանդությունը պահվեին ու պահպանվեին այն ամենով, ինչը առնչություն ուներ սրբարանի հետ» (Է. Ուայթ, ՅՕԱ Աստվածաշնչյան մեկնություններ, հտ. 2, 1010):

Կարդացե՛ք Ղևտացոց 19.2 և Ա Պետրոս 1.14-16-ը: Ո՞րն է հիմնական պատճառը, որ մարդիկ պետք է սուրբ լինեն: _____

_____

_____

_____

Աստծո սրբությունը վերափոխում ու առանձնացնում է մեզ: Նրա սրբությունը կյանքի բոլոր ոլորտներում Իր ժողովրդի բարձր բարոյականության բարձրագույն դրդապատճառն է (տե՛ս Ղևտացոց 19), կվերաբերի դա սննդի օրենքներին (Ղևտացոց 11.44,45), քահանայի հանդեպ հարգանքին (Ղևտացոց 21.8) թե նախկին քմահաճույքների հանդեպ վերաբերմունքին (Ա Պետրոս 1.14): Աստված, անշուշտ, ցանկանում է, որ Իրեն մերձենալուն զուգընթաց աճենք սրբության մեջ: Այդ փոփոխությունը կարող է տեղի ունենալ միայն մեր մեղավոր էությունն Աստծուն ենթարկելու և, անկախ հանգամանքներից, ճիշտ վարվելու մեր ցանկության միջոցով:

Խորհեցե՛ք ձեր սովորությունների, ճաշակի, գործերի և այլնի մասին: Կարելի՞ է ձեզ և ձեր գործերն անվանել «սուրբ»: Այդ մասին արժե մտածել, այնպես չէ՞:

Երեքշաբթի ***հոկտեմբերի 22***

Սրբարանի պարագաները

Կարդացե՛ք Ելից 31.2-11-ը: Այս տեքստերն ի՞նչ են ասում երկրային սրբարանի համար պարագաների պատրաստման մասին: Այստեղ դուք ի՞նչ կապ եք նկատում Ծննդոց 1.2 համարի հետ: (Տե՛ս նաև Ելից 2): _____

_____

_____

Սրբարանի բոլոր պարագաներից վկայության տապանակը համարվում է Աստծո ներկայության և սրբության գլխավոր խորհրդանիշը: «Վկայության տապանակ» բառակապակցությունը ծագում է «Օրենքի տախտակներից», որոնք անվանված են «վկայության տախտակներ» (Ելից 31.18,16, 32.15, 34.29), որոնք տեղադրվեցին տապանակի մեջ (Ելից 25.16,21):

Տապանակը փակում էր երկու քերովբեներով կափարիչը, որոնք այն ծածկում էին իրենց թևերով (Ելից 25.17-21): Պողոս առաքյալն այն անվանում է «շնորհի աթոռ» (Եբրայեցիս 9.5, բնագրում՝ քիլաստէրիոն), քանի որ մեր գթասիրտ ու կարեկից Աստված մարդկանց հաշտեցնում է Իր հետ և ամեն կերպ հոգ է տանում, որ նրանք կարողանան պահպանել Իր հետ ուխտի փոխհարաբերությունները:

Հենց այստեղ է, որ տարվա մեջ մեկ անգամ՝ Քավության օրը (եբր.՝ Յոմ-Կիպպուր) տեղի էր ունենում սրբարանի մաքրումը (Ղևտացոց

16.14-16): Հռոմեացիս 3.25-ում Պողոսը ցույց է տալիս Հիսուսին՝ որպես «քավություն» (կամ «տապանակի կափարիչ», որովհետև բնագրում միևնույն բառն է, ինչ և Եբրայեցիս 9.5-ում՝ քիլաստէրիոն, որ նշանակում է այդ կափարիչը), որովհետև Նրա միջոցով Աստված կատարեց մեր մեղքերի փրկագնումը:

Սրբարանի առաջին բաժանմունքում՝ Սրբությունում, մշտապես վառվում էր ճրագակալը (Ղևտացոց 24.1-4), իսկ խունկի սեղանից բարձրանում էր ծխի պաշտպանիչ ամպը, որն Աստծո ներկայությունը թաքցնում էր քահանայից (Ղևտացոց 16.12,13): Հացի սեղանի վրա տասներկու հաց էր դրված, որոնք ներկայացնում էին Իսրայելի տասներկու ցեղերը:

Կարդացե՛ք Հռոմեացիս 3.25-28-ը: Մենք ի՞նչ մեծ հույս կարող ենք քաղել «հավատքով... առանց օրենքի գործերի» փրկության խոստումից:

Շաբաթ *հոկտեմբերի 23*

Աստծո և մարդու գործունեության կենտրոնը

Կարդացե՛ք Գ Թագավորաց 8.31-53-ը: Այս հատվածն ի՞նչ է հայտնում սրբարանի նշանակության մասին: _____

_____

_____

_____

Նոր տաճարի օծման արարողության ժամանակ Սողոմոն թագավորը թվարկում է յոթ դեպք, երբ տաճարում կարող են առանձնահատուկ աղոթքներ բարձրացվել: Այս յոթ գործառույթները պատկերում են Իսրայել ժողովրդի կյանքում տաճարի արտակարգ կարևոր դերը: Տաճարն այն վայրն էր, որտեղ ներում էին փնտրում (համար 30), ուր գալիս էին երդման համար (համարներ 31,32), որտեղ հիվանդության դեպքում աղաչում էին ապաքինման համար (համարներ 33,34), խնդրում էին ազատել երաշտից (համարներ 35,36) կամ օգնության էին դիմում այլ աղետների ժամանակ (համարներ 37-40): Այստեղ կարող էր աղոթել օտարականը (համարներ 41-43), ինչպես նաև՝ այդ վայրում խնդրում էին հաղթանակի համար (համարներ 44,45):

Այն ճշմարտությունը, որ տաճարը պետք է դառնար «աղոթքի տուն բոլոր ազգերի համար» (Եսայիա 56.7), ակնհայտ է դառնում այն փաստից, որ Սողոմոնը որպես խնդրողներ է ներկայացնում և՛

յուրաքանչյուր առանձին վերցրած հրեային, և՛ օտարականին, և ողջ ժողովրդին՝ ամբողջությամբ վերցրած:

Սրբարանը Իսրայելի գործնականում ցանկացած գործունեության գաղափարախոսական կենտրոնն էր: Կրոնը հավատացյալ հրեայի կյանքի մի մասը չէր, այն անգամ չէր զբաղեցնում նրա կյանքի մեծ մասը. կրոնը բուն կյանքն էր: Սա մեզ ի՞նչ է ասում՝ մեր կյանքում ի՞նչ տեղ պետք է զբաղեցնի հավատը:

_____

_____

_____

Երբ մարդիկ ցանկանում էին խորհուրդ, դատ կամ ներում ստանալ, գալիս էին սրբարանի մոտ: Սրբարանը կենտրոն էր նաև անապատում Իսրայելի թափառումների ժամանակ: Երբ Աստված ցանկանում էր շփվել Իր ժողովրդի հետ, Նա այդ անում էր սրբարանից (Ելից 25.22): Այդ պատճառով այն արդարացիորեն անվանվել է ժողովքի խորան (օրինակ՝ Ղևտացոց 1.1-ում):

Խորհեցե՛ք ձեր աղոթքի կյանքի մասին: Որքա՞ն խորն է այն, հարուստ, որքանո՞վ է ամրապնդում ձեր հավատն ու փոխում կյանքը: Հնարավոր է՝ ամենից առաջ պետք է հնչի «Որքա՞ն ժամանակ ենք մենք անցկացնում աղոթքի մեջ» հարցը:

Հինգշաբթի ***հոկտեմբերի 24***

«Մինչև որ Աստծո սրբության տեղը մտա»

Սաղմոսները կրկին ու կրկին վկայում են այն մասին, որ սրբարանը կարևոր տեղ էր զբաղեցնում հավատացյալների ու Աստծո միջև փոխհարաբերությունների մեջ: Քաջ հայտնի է Դավթի հաստատ համոզմունքն այն մասին, որ ինքը «Տիրոջ տանը կբնակվի շատ երկար ժամանակ»: Դավթի մեծագույն ցանկությունը, որի մասին նա խոսում է 27-րդ սաղմոսում, Յահվեի ներկայության մեջ լինելն է, իսկ Նրա ներկայությունն առավել ցայտուն դրսևորվում էր սրբարանում: Ցանկանալով արտահայտել սրբարանի հանդեպ իր սերը՝ Դավիթն օգտագործում է մի ամբողջ շարք արտահայտություններ՝ այն անվանելով Տիրոջ տուն, տաճար, խորան: Այնտեղ մարդը կարող է մտորել և «Տիրոջ գեղեցիկ փառքը տեսնել» (Սաղմոս 27.4):

Սրբարանում Աստծո գործերը ներառում են որոշ կարևոր տեսանկյուններ. Նա երկրպագողին պահում է անվտանգության մեջ և նրան

ծածկում է սրբարանում անգամ դժվար ժամանակներում (Սաղմոս 27.5): Աստված անվտանգ ապաստարան է պարգևում և խաղաղություն երաշխավորում Իր ներկայության մեջ եկող բոլոր մարդկանց: Այս արտահայտություններն Աստծո բնավորության գեղեցկությունը միավորում են այն բանի հետ, ինչ Նա կատարում է Իր ժողովրդի համար: Սրբարանի ծառայությունն իր խորհրդանշական նշանակությամբ հանդերձ՝ հայտնում է Աստծո ողորմությունն ու արդարությունը:

Դավթի խորագույն ցանկությունը ոչ թե պարզապես սրբարանում գտնվելն էր, այլ՝ որպեսզի Յահվեն իր հետ լինի: Այդ պատճառով Դավիթը որոշում է ընդունում «որոնել» Աստծուն (Սաղմոս 27.4,8):

Կարդացե՛ք Սաղմոս 73.1-17-ը: Ասափին ի՞նչ բացահայտվեց այն բանից հետո, երբ նա մտավ սրբարան: _____

_____

_____

_____

Սաղմոս 73-ում Ասափը խոսում է տառապանքների խնդրի մասին: Նա չէր կարող հասկանալ, թե ինչու են ամբարիշտները հաջողակ (4-12 համարներ), իսկ հավատարիմները տառապում են: Նա ինքը քիչ էր մնում գայթակղվեր (1-3 համարներ), բայց սրբարանում գտնվելը փոխեց նրա գիտակցությունը (13-17 համարներ): Այնտեղ Ասափը կարողացավ տեսնել Աստծո զորությունն ու փառքը, որոնց մասին Դավիթը խոսում է 63.3 սաղմոսում, և ընդունել, որ ներկայիս վիճակը մի օր կփոխվի, և արդարությունը կհաղթանակի: Նա կրկին կարողացավ խորհել ճշմարտության մասին և մեկ անգամ ևս հավաստիացում ստացավ, որ ի վերջո ամբարիշտների ճանապարհը սայթաքուն է դառնալու (Սաղմոս 73.18-20), իսկ հավատարիմները կամրապնդվեն (21-28 համարներ): Աստծուն որոնողների համար սրբարանը դառնում է հաստատություն, կենսական ամրոց, որտեղ Աստված նրանց բարձրացնում է «ժայռի վրա» (Սաղմոս 27.5): Ճշմարտություններից, որոնք մեզ համար շարադրում է սրբարանի ծառայությունը, մենք իսկապես կարող ենք սովորել ապավինել Աստծո ողորմությանը և արդարացիությանը:

Ուրբաթ ***հոկտեմբերի 25***

Հետագա ուսումնասիրության համար

Է. Ուայթի «Նահապետներ և Մարգարեներ» գրքից կարդացե՛ք «Խորանը և ծառայությունը նրանում» գլուխը (343-358):

«Սրբարանի կառուցման համար անհրաժեշտ էր մեծ նախապատրաստական աշխատանք կատարել, մեծ քանակությամբ թանկարժեք քարեր ու թանկ նյութեր էին պահանջվում, սակայն Տերը կարող էր ընդունել միայն կամավոր ընծաներ: «Ամեն մարդուց, որ սիրտը հոժար է, առեք իմ ընծան»,-հռչակում էր Աստծո հրամանը, որ Մովսեսը փոխանցել էր ողջ ժողովքին: Առ Աստված նվիրվածություն ու զոհաբերության ոգի՝ ահա թե ինչ էր ամենից առաջ պահանջվում Ամենաբարձրյալի բնակարանը կառուցելու նախապատրաստության համար» (Է. Ուայթ, Նահապետներ և մարգարեներ, 343):

Հարցեր քննարկման համար

1. Խորհե՛ք Աստծո արդարության մասին: Մեր աշխարհում մենք այնքա՜ն քիչ արդարություն ենք տեսնում: Ինչո՞ւ առանց Աստծո արդարադատությանն ապավինելու արդարության հույսն առհասարակ գոյություն չէր ունենա:
2. Ինչ-որ մեկը գրել է. «Խորանը աշխարհում սուրբ հողի մի կտոր է ճանապարհից շեղվածների համար»: Խորանն ի՞նչ է նշանակում ձե՛զ համար:
3. Կարդացե՛ք Ա Պետրոս 1.14-16-ը: Դուք ինչպե՞ս եք հասկանում Աստծո սրբությունը: Ի՞նչ է նշանակում սրբությունը անձամբ ձեզ համար: Մենք ինչպե՞ս կարող ենք սուրբ դառնալ:
4. Հեղիի որդիները մոտ էին Աստծուն, սակայն դադարեցին գնահատել Նրա սրբությունը (Ա Թագավորաց 2.12-17): Մենք ինչպե՞ս կարող ենք չկորցնել Աստծո սրբության զգացողությունը: Ինչո՞ւ են աղոթքը, Աստծո Խոսքի ուսումնասիրությունն ու Աստծուն հնազանդությունն անհրաժեշտ Նրա սրբության գիտակցումը պահպանելու համար:
5. «Ամենօրյա ծառայության ամենակարևոր մասը առանձին մարդկանց համար կատարվող ծառայությունն էր: Ապաշխարող մեղավորը կենդանուն բերում էր խորանի դռների մոտ, և ձեռքը դնելով զոհի գլխին՝ խոստովանում էր իր մեղքերը՝ դրանով իսկ խորհրդանշական ձևով դրանք հեռացնելով իրենից և հանձնելով անմեղ զոհին: Հետո նա իր իսկ ձեռքով սպանում էր կենդանուն, քահանան արյունը մտցնում էր Սրբություն և այն ցողում վարագույրի առջև, որի հետևում գտնվում էր տապանակը, իսկ նրա մեջ՝ Օրենքը, որ խախտել էր մեղավորը:: Այդ արարողությունը խորհրդանշում էր արյան միջոցով սրբարան բերված մեղքերը: Որոշ դեպքերում արյունը չէր մտցվում Սրբություն, այլ միսը պետք է ուտեին քահանաները, ինչպես Մովսեսը հրամայել էր Ահարոնի որդիներին՝ ասելով. «Եվ Եհովան այն տվեց ձեզ, որ

ժողովքի անօրենությունը վեր առնեք՝ Եհովայի առջև նրանց համար քավություն անելով» (Է. Ուայթ, Նահապետներ և մարգարեներ, 354, 355): Այս մեջբերումն ինչպե՞ս է օգնում մեզ հասկանալ, թե սրբարանում ծառայության մեջ ինչպես բացահայտվեց հավատքով արդարացման մասին ճշմարտությունը:

ՓՐԿԱԳՆՈՒՄ. ՁՈՀ ՄԵՂՔԻ ՀԱՄԱՐ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Բ Մնացորդաց 33.12,13, Բ Թագավորաց 14.1-11, Ղևտացոց 4.27-31, Երեմիա 17.1, Ղևտացոց 10.16-18, Միքիա 7.18-20:

Հիշելու համարը.

«Գիտենալով, որ ոչ թե ապականացու արծաթով կամ ոսկով փրկվեցիք ձեր հայրենավանդ ունայն վարմունքից, այլ Քրիստոսի պատվական արյունով, ինչպես մի անարատ ու անբիծ գառի» (Ա Պետրոս 1.18,19):

Զոհաբերությունների համակարգը, հավանաբար, սրբարանում ծառայության ամենահայտնի բաղադրիչն է, քանի որ այն անմիջականորեն ցույց է տալիս Քրիստոսի զոհը: Մեղավորի փոխարեն մահացող կենդանու արյունը Քրիստոսի Արյան խորհրդանիշն էր, Ով մահացել էր հանուն մեզ:

Այս շաբաթ մենք ուսումնասիրելու ենք մեղքի համար զոհի հետ կապված որոշ հայեցակարգեր: Ուսումնասիրելով այդ զոհը՝ որպես մեղքից մաքրվելու համար Աստծո ընտրած միջոց, մենք ավելի լավ կհասկանանք, թե ինչպես է Նա մեզ հաշտեցնում Իր հետ միակ ճշմարիտ զոհի՝ Հիսուսի միջոցով: Հին եբրայերեն *խատատ*, բառը, որը նշանակում է *զոհ մեղքի համար*, ծիսական անմաքրության հետ կապված որոշ դեպքերում կարելի է թարգմանել որպես *մաքրման զոհ*: Օրինակ՝ նոր ծննդաբերած կինը պետք է մեղքի զոհ բերեր (Ղևտացոց 12.5-8): Այդպիսի զոհն ավելի ճիշտ է հասկանալ որպես ծիսական անմաքրության *մաքրման զոհ*, ոչ թե որպես զոհ, որը բերվում էր անբարոյական արարք գործելու արդյունքում:

Մեղքը և ողորմածությունը

Տիրոջը ճանաչող ցանկացած մարդ կարող է վկայել, որ մեղքը մեզ բաժանում է Աստծուց: Բարի լուրն այն է, որ Տերը նախատեսել է մի համակարգ, որը կարող է ուղղել մեղքի առաջ բերած այդ խզումը և մեզ վերադարձնել Նրա մոտ: Այդ համակարգի կենտրոնում, իհարկե, գտնվում է զոհը:

Հին Կտակարանը գլխավորապես պատկերում է մեղքի երեք տեսակ, որոնցից յուրաքանչյուրը համապատասխանում է արարքը կատարելիս մեղավորի տեղեկացվածության աստիճանին. չկանխամտածված մեղք (անուշադրությամբ կատարված), ծրագրված կամ կանխամտածված մեղք և մեղք, որը կապված է անհնազանդության, ապստամբության հետ: Ղևտացոց 4.1-5.13-ում հրահանգված «մեղքի զոհը» կիրառելի է այն դեպքերում, երբ կատարվել է չկանխամտածված մեղք, ինչպես նաև կանխամտածված մեղքի կատարման որոշ դեպքերի համար (Ղևտացոց 5.1): Բայց եթե այդ երկու դեպքերում կարելի էր զոհ բերել, զոհի մասին ոչ մի հիշատակում չկա անհնազանդության ամենանողկալի մեղքի կապակցությամբ: Անհնազանդության մեղքը Աստծո առջև կատարվում է «բարձրացրած ձեռքով» այնպես, որ խռովարարը միայն ոչնչացման է արժանի (Թվոց 15.29-31): Սակայն, դատելով ամեն ինչից, անգամ այդպիսի դեպքերում Աստված ներում էր առաջարկում, օրինակ՝ Մանասեի դեպքում (տե՛ս Բ Մնացորդաց 33.12,13):

Կարդացե՛ք Երկրորդ Օրինաց 25.1 և Բ Թագավորաց 14.1-11-ը: Բ Թագավորաց 14.9-ը ինչպե՞ս է մեզ համար բացահայտում ողորմությունը, արդարությունն ու մեղքը: _____

_____

Արդարացի՞ է Աստված, երբ ներում է մեղավորին: Մի՞թե մեղավորը ամբարիշտ չէ, որ արժանի է դատապարտության (տե՛ս Երկրորդ Օրինաց 25.1):

Թեկուեցի կնոջ պատմությունը կարող է տեսանելի կերպով պատկերել պատասխանը: Այրի ձևանալով՝ նա եկավ Դավիթ թագավորի դատաստանին: Նա պատմություն հորինեց իր երկու որդիների մասին, որ մի որդին սպանել էր մյուսին: Իսրայելի օրենքը պահանջում էր մարդասպանի մահը (Թվոց 35.31), անգամ եթե նա մնում էր ընտանիքի միակ տղամարդը: Կինն աղաչում էր Դավթին (ով կատարում էր դատավորի դերը) ներել որդու մեղքը:

Հետո նա բավականին հետաքրքրական հայտարարություն է անում. «Ինձ վրա, ով տեր թագավոր, լինի հանցանքը՝ իմ և իմ հոր տան վրա, և թագավորն ու նրա աթոռը անպարտ լինի» (Բ Թագավորաց 14.9): Ինչպես կինը, այնպես էլ Դավիթը հասկանում էին. եթե թագավորը որոշի ազատել մարդասպանին, ապա նա ինքը մեղավոր կդառնա սպանություն կատարելու մեջ, և նրա գահի արդարությունը (նրա՝ որպես դատավորի, հեղինակությունը) կասկածի տակ կդրվի: Փաստորեն, դատավորը պատասխանատվություն էր կրում իր ընդունած որոշման համար: Այս պատճառով կինն առաջարկեց մեղքն իր վրա վերցնել:

Այդպես էլ Աստված Իր վրա է վերցնում մեղավորների մեղքերը, որպեսզի նրանց արդար հայտարարի: Որպեսզի մենք ներվենք, *Աստված Ինքը պետք է կրի մեր պատիժը,* այսինքն՝ մեղավորի կողմից Օրենքի խախտումը Իր վրա է վերցնում հենց Օրենսդիրը: Ահա թե ինչու Քրիստոսը պետք է մահանար, որպեսզի մեզ փրկություն պարգևեր:

Երկուշաբթի ***հոկտեմբերի 28***

Ձեռքերը դնելը

Կարդացե՛ք Ղևտացոց 4.27-31-ը: Ի՞նչ կրոնական գործողություններ պետք է կատարվեին զոհաբերության ժամանակ: _____

_____

_____

Զոհաբերության նպատակն էր՝ մեղքը հեռացնել մեղավորից և այն փոխադրել սրբարան՝ մեղավորին թողնելով ներված և մաքրված: (Շատ հազվագյուտ դեպքերում մարդը կարող էր որոշ քանակությամբ մանր աղացած ալյուր բերել՝ որպես իր ընծա մաքրման համար, բայց դա մեղքի զոհ չէր, քանի որ «առանց արյուն թափելու թողություն չի լինում» (Եբրայեցիս 9.22)):

Ծեսն ինքը ներառում էր ձեռքերը զոհի գլխին դնելը, կատարված մեղքը խոստովանելը, զոհաբերվող կենդանու մահը, արյան հետ գործողությունների կատարումը, ճարպի այրումը և կենդանու միսն ուտելը: Զոհ մատուցած մեղավորին ներում էր շնորհվում, բայց միայն արյուն թափելուց *հետո*:

Այդ գործընթացի չափազանց կարևոր մասն էր ձեռքերը դնելը (Ղևտացոց 1.4, 4.4, 16.21): Դա արվում էր, «որ ընդունելի լինի իրեն քավություն լինելու համար» (Ղևտացոց 1.4): Զոհը վերաբերում էր միայն իր ձեռքերը նրա գլխին դրած մարդուն: Համաձայն Ղևտացոց

16.21-ի՝ ձեռքերը դնելը պետք է ուղեկցվեր մեղքի խոստովանությամբ, ինչը ենթադրում էր, որ մեղքը մեղավորից փոխադրվում էր անմեղ մարդու վրա:

Իհարկե, յուրաքանչյուր զոհաբերության հիմքում ընկած էր կենդանուն մորթելը: Այն բանից հետո, երբ կենդանին արդեն մորթված էր, նրա արյունն օգտագործվում էր զոհասեղանի վրա՝ փրկագնում կատարելու համար (Ղևտացոց 17.11): Քանի որ մեղքերը կենդանուն էին փոխանցվել ձեռքերը դնելու միջոցով, մենք պետք է այդ կենդանու մահը հասկանանք որպես փոխարինող զոհ: Կենդանին մահանում էր մեղավորի փոխարեն: Այս փաստը բացատրում է, թե ինչու կենդանուն պետք է մորթեր հենց ինքը՝ մեղավորը, այսինքն՝ մեղանչածը, ոչ թե քահանան:

Հաջորդ անգամ, երբ դուք մեղք գործելու գայթակղություն կունենաք, պատկերացրե՛ք մեռնող Հիսուսին և խորհեցե՛ք այն մասին, որ հենց ձեր մեղքերը Նրան գամեցին խաչին: Տվյալ պատկերն ինչպե՞ս է օգնում մեզ՝ հասկանալ ներման գինը: Այս գաղափարն ինչպե՞ս է դրդում մեզ՝ դիմադրել մեղքին և չենթարկվել գայթակղությանը:

Երեքշաբթի ***հոկտեմբերի 29***

Մեղքի փոխադրումը

«Հուդայի մեղքը գրված է երկաթե գրչով՝ ադամանդյա ծայրով փորագրված է նրանց սրտի տախտակի վրա, և ձեր սեղանների եղջյուրների վրա» (Երեմիա 17.1):

Ձեռքերը դնելուց և կենդանու մահվանից հետո զոհաբերության ծեսում հաջորդ պահը արյան հետ կատարվող գործողությունն էր: Քահանան զոհի արյամբ օծում էր սրբարանի բակում գտնվող ողջակեզի սեղանի եղջյուրները: Ծեսի այս մասը վերաբերում էր փրկագնմանը, քանի որ նրանում առկա էր արյուն (Ղևտացոց 17.11): Եթե մեղավորը հասարակ մարդ կամ ղեկավար էր, արյունը քսում էին ողջակեզի սեղանին (Ղևտացոց 4.25,30), իսկ եթե մեղանչել էր քահանայապետը կամ ողջ հանրությունը, «արյունը քահանան մտցնում էր Սրբություն, և նա այն ցողում էր վարագույրի վրա, որի հետևում գտնվում էր մեղավորի կողմից խախտված Օրենքն իր մեջ պարունակող տապանակը» (Է. Ուայթ, Նահապետներ և մարգարեներ, 354): Արյունը նաև քսում էին ներքին զոհասեղանի՝ խունկի սեղանի վրա (Ղևտացոց 4.7,18):

Ի՞նչ կարող է նշանակել զոհասեղանի եղջյուրներն արյամբ օծելը: Եղջյուրները զոհասեղանի ամենաբարձր կետերն էին և որպես այդպիսիք կարող էին խորհրդանշել փրկության ուղղահայաց չափումը: Արյունը բերվում էր Աստծո ներկայության մեջ:

Երեմիա 17.1 համարը հատկապես կարևոր է սրբարանում կատարվածի մեր ըմբռնման համար. «Հուդայի մեղքը գրված է... նրանց սեղանների եղջյուրների վրա»: Թեև այս համարը խոսում է կռապաշտական սեղանների մասին, սկզբունքը մնում է նույնը. զոհասեղանն արտացոլում էր ժողովրդի բարոյական վիճակը: Արյունը փոխանցում էր մեղքը: Արյունը, որ ցողում էին վարագույրի առջև և քսում զոհասեղանի եղջյուրներին, մեղքը մեղավորից փոխադրում էր սրբարան: Սա արտակարգ կարևոր ճշմարտություն է, որն օգնում է մեզ հասկանալ Փրկության ծրագիրը՝ բացահայտված երկրային սրբարանի ծառայության մեջ, որը խորհրդանշում է հանուն մեզ կատարվող Քրիստոսի ծառայությունը Երկնքում:

Քանի որ արյունը փոխադրում էր մեղքը, այն նաև պղծում էր սրբարանը: Մենք այդպիսի պղծման օրինակ գտնում ենք այն դեպքերում, երբ մեղքի զոհի արյունը պատահաբար ցողվում էր հագուստի վրա: Այդպիսի հագուստը պետք է լվանային, և այն էլ ոչ թե ինչ-որ մի տեղ, այլ հենց «սուրբ տեղում» (Ղևտացոց 6.27):

Իսկ ճարպի եզրափակիչ այրումը զոհասեղանի վրա կարող էր մատնացույց անել այն, որ ամեն բան, ինչ վերաբերում է մեղքի զոհին, պատկանում էր Աստծուն (Ղևտացոց 3.16):

Հիսուսի զոհի շնորհիվ, որ խորհրդանշում էին այդ զոհերը, մեր մեղքը հանված է մեզանից և դրված Նրա վրա: Սա է Փրկության ծրագրի էությունը:

Սրբարանի ծառայությունն ինչպե՞ս է օգնում մեզ հասկանալ մեղքի ներման մեջ մեր լիակատար կախվածությունը Աստծուց: Ձեզ ի՞նչ մխիթարություն է պարգևում այս ճշմարտությունը: Միևնույն ժամանակ, ի՞նչ կարևոր պատասխանատվություն է դրվում մեզ վրա:

Չորեքշաբթի *հոկտեմբերի 30*

Մեղքը կրելը

Կարդացե՛ք Ղևտացոց 6.25,26, 10.16-18-ը: Ի՞նչ կարևոր ճշմարտություն է բացահայտված այս համարներում: _____

Զոհը սուրբ տեղում ուտելով՝ քահանան «մեղքը հանում էր» այն խախտողից: Զոհի միսը պարզապես վճար չէր քահանայի ծառայության համար (հակառակ դեպքում Մովսեսն այդպես չէր զայրանա Ահարոնի որդիների վրա այն բանի համար, որ նրանք չէին ուտում մեղքի զոհի միսը): Այդ ծեսն իրենից ներկայանցում էր փրկագնման կարևոր մասը:

Զոհն ուտելն ինչպե՞ս էր մատնացույց անում փրկագնման գործընթացը: անհրաժեշտ էր ուտել միայն այն զոհերը, որոնց արյունը մտցվել էր սրբարան, այսինքն՝ առաջնորդների ու հասարակ ժողովրդի զոհերը: Աստվածաշունչը հստակ կերպով ասում է. ուտելով զոհը՝ քահանաները հանում էին մեղքերը, և դա փրկագնում էր մեղավորի համար: Մեղավորի մեղքը վերցնելը նշանակում էր, որ այժմ մեղավորն ազատված է դրանից:

Ելից 34.7 եբրայերեն բնօրինակում ասված է, որ Աստված «տանում է անօրենությունը»: Այդ նույն երկու եբրայերեն բառերը օգտագործված են Ղևտացոց 10.17-ում, որտեղ պարզորոշ ցույց է տրված, որ քահանայի կողմից մեղքը վերցնելը մեղավորին ներում է շնորհում: Առանց այդպիսի փոխանցման մեղավորը ստիպված կլիներ ինքը կրել իր մեղքը (Ղևտացոց 5.1), իսկ դա, անշուշտ, կհանգեցներ մահվան (Հռոմեացիս 6.23):

Ուրիշի մեղքը կրելու քահանայի պարտականությունը հենց այն է, ինչ մեզ համար արեց Քրիստոսը: Նա մահացավ մեր փոխարեն: Այսպիսով, մենք գալիս ենք եզրակացության, որ երկրային սրբարանում քահանայի ծառայությունը այն բանի նախակերպարն էր, ինչ հանուն մեզ կատարեց Քրիստոսը, քանի որ Նա Իր վրա վերցրեց մեր մեղսավորությունը:

«Օրհնությունը գալիս է ներման արդյունքում. ներումը գալիս է այն բանին հավատալու միջոցով, որ խոստովանված մեղքը Իր վրա է կրել մեծ Ազատարարը [բնագրում՝ Sin-bearer՝ Մեղքը կրող]: Այդպիսով, մեր բոլոր օրհնությունները բխում են Քրիստոսից: Նրա մահը փրկագնական զոհ է մեր մեղքերի համար: Նա մեծ Բարեխոսն է, Ում միջոցով մենք ողորմություն և աջակցություն ենք ստանում Աստծուց: Նա իսկապես մեր հավատի Զորագլուխն է, Հեղինակն ու Կատարողը» (Է. Ուայթ, Հրատարակված ձեռագրեր, հտ. 9, 302):

Պատկերացրե՛ք, որ դուք Աստծո առջև կանգնած եք դատարանում: Ինչի՞ն դուք կապավինեիք՝ ձեր բոլոր բարի գործերի՞ն, այն ամեն բարիքի՞ն, ինչ գործել եք: Դուք իսկապե՞ս մտածում եք, որ դա բավական կլինի՝ սուրբ և կատարյալ Աստծո առջև արդարանալու համար: Եթե ոչ, ապա ինչպե՞ս կարելի է ներում ստանալ դատաստանի ժամանակ:

Ներում

Կարդացե՛ք Միքիա 7.18-20-ը: Աստծո ի՞նչ բնութագիր ենք մենք գտնում այս հատվածում: _____

_____

_____

Միքիա մարգարեի գրքի վերջին երեք համարները կենտրոնացած են Իր ժողովրդի մնացորդի հետ Աստծո փոխհարաբերությունների վրա: Համարը հրաշալի բացատրում է, թե ինչու է Աստված անգերազանցելի: Նա գերազանց է բոլորից, որովհետև ունի ներող սեր ու ողորմածություն: Աստծո ակնառու հատկանիշը, որ պատկերել է Միքիա մարգարեն (և այլ աստվածաշնչյան հեղինակներ), ներելու Նրա ցանկությունն է: Միքիան ընդգծում է դա՝ տարբեր արտահայտություններ օգտագործելով Աստծո հատկանիշների (համար 18) և Նրա արժանիքների (համար 19, 20) վերաբերյալ: Աստծո հատկանիշներն ու որակները բացատրված են այսպես կոչված «Իսրայելյան հավատամքի» մեջ՝ Ելից 34.6,7-ում: Սա Աստծո բնավորությունը նկարագրող ամենաուժեղ աստվածաշնչյան հատվածներից մեկն է:

Հետաքրքրական է նշել, որ Միքիա 7.18-20-ում որոշ հիմնական բառեր նաև օգտագործվում են «Ծառայի երգի մեջ» (Եսայիա 53)՝ նշելով այն փաստը, որ փրկության միջոցները բխում են Նրանից, Ով տառապում է Իր ժողովրդի համար:

Ցավոք, ամենքը չէ, որ կուրախանան Աստծո փրկարար շնորհով: Աստծո ներումը էժան չէ և չի տրվում ավտոմատ կերպով: Այն հավատարմություն է պահանջում: Իրենց վրա Աստծո շնորհի ազդեցությունը զգացողներն արձագանքում են դրան՝ գրքի կենտրոնական համարում՝ Միքիա 6.8-ում գրվածի համապատասխան: Քանի որ Աստված անփոփոխ է Իր սիրո մեջ, Նա Իր մնացորդին կոչ է անում՝ սիրել բարին: Աստծո ժողովուրդը կարտացոլի Նրա բնավորությունը: Նրանց կյանքում ներկա կլինեն Նրա սերը, կարեկցանքն ու բարությունը:

Ուսումնասիրելով Աստվածաշունչը՝ մենք տեսնում ենք, որ Միքիա 7.18-20 հատվածին, որում շեշտը դրված է ներման վրա, անմիջապես հետևում են Նաում մարգարեի գրքի 1, 2, 3-րդ գլուխները, որտեղ շեշտադրված է դատաստանի մասին ճշմարտությունը: Սա բացահայտում է մեզ հետ Աստծո փոխահամագործակցության երկու տեսանկյունները՝ ապաշխարողների ներումը և ամբարիշտների պատիժը: Աստված

Փրկիչ է և դատավոր: Աստծո բնավորության այս երկու տեսանկյունները լրացնում են մեկը մյուսին, և դրանցում հակասություն չկա: Կարեկից Աստվածը նաև կարող է լինել արդարադատ Աստված: Իմանալով սա՝ մենք կարող ենք հանգստանալ Նրա սիրո, ներման և բացարձակ արդարադատության մեջ:

Կարդացե՛ք Միքիա 6.8-ը: Ի՞նչ իմաստ ունի խոսել հավատի մասին՝ առանց այս սկզբունքների, որոնք բացահայտում են մեր խոստովանության իսկական լինելը: Ի՞նչն է ավելի հեշտ՝ Հիսուսի հանդեպ հավատի հավակնությո՞ւն ունենալ, թե՞ այդ հավատը դրսևորել Միքիա 6.8-ում գրվածի համաձայն: Դուք ինչպե՞ս կարող եք հավատ դրսևորել ձեր կյանքում:

Ուրբաթ ***նոյեմբերի 1***

Հետագա ուսումնասիրության համար

Կարդացե՛ք Է. Ուայթի «Նահապետներ և մարգարեներ» գրքի «Խորանը և ծառայությունը դրանում» (343-358):

«Ինչպես Քրիստոսը համբարձվելուց հետո կանգնեց Աստծո առջև՝ Իր արյունը բերելով ապաշխարող մեղավորների համար, այնպես էլ քահանան ամենօրյա ծառայության ժամանակ զոհ կենդանու արյունը ցողում էր Սրբությունում՝ բարեխոսելով մեղավորի համար:

Թեև Քրիստոսի արյունը ապաշխարող մեղավորին ազատում է Օրենքի դատապարտությունից, բայց նա չի ոչնչացնում մեղքը. այն պետք է մնա Սրբարանում՝ երկնային գրքերում, մինչև վերջնական մաքրումը: Այդպես էլ նախակերպարային ծառայության մեջ մեղքի զոհի արյունը մեղքը հանում էր ապաշխարողից, բայց այդ մեղքը սրբարանում մնում էր մինչև Քավության օրը» (Է. Ուայթ, Նահապետներ և մարգարեներ, 357):

Հարցեր քննարկման համար

1. Ոմանք համարում են, որ փոխարինման ողջ հայեցակարգն անարդարացի է: Ինչո՞ւ անմեղը պետք է մեռնի մեղավորի փոխարեն: Սակայն քանի որ այդ ճշմարտությունը ոչ միայն պարզորոշ շարադրված է Աստվածաշնչում, այլև նրա կենտրոնական թեման է, մենք ի՞նչ կարող ենք պատասխանել այդ տեսակետին: Այդ «անարդարությունն» ինչպե՞ս կարող է օգնել մեզ՝ տեսնելու, թե որքան մեծ, ողորմած ու սիրառատ է մեր Աստված:

2. Դասարանում կարդացե՛ք Միքիա 6.8-ը: Ինչի՞ մասին է այստեղ խոսվում: Մենք ինչպե՞ս կարող ենք կատարել այս հստակ ցուցումը: Ինչպե՞ս կարող ենք սովորել իրագործել այս ամենը, ներառյալ «քո Աստծո առջև խոնարհաբար քայլելը»: Ի՞նչ է սա նշանակում: Աստծո առջև խոնարհաբար քայլելն ինչպե՞ս կարող է նպաստել շրջապատող մարդկանց հետ խոնարհ ու հնազանդ փոխհարաբերություններին:
3. Խորհեցե՛ք այն բանի կարևորության մասին, որ մեր փրկության միակ ճանապարհն անցնում է Քրիստոսի մահվան միջով: Այս զարմանալի ճշմարտությունն ինչպե՞ս է մեզ համար բացահայտում մեղքի ողջ նողկալիությունը, և ինչու՞ է անիմաստ սեփական ջանքերով մեզ փրկելու ցանկացած փորձ:
4. Վերադարձե՛ք չորեքշաբթի օրվա դասի վերջին հարցին: Ձեր պատասխանները քննարկե՛ք հանուն մեր փրկության Հիսուսի սխրանքի համատեքստում:

ՓՐԿԱԳՆՄԱՆ ՕՐԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Ղևտացոց 16, Ղևտացոց 23.27-32, Երկրորդ Օրինաց 19.16-21, Մատթեոս 18.23-35, Եսայիա 6.1-6:

Հիշելու համարը.

«Ո՞վ է Ասված Քեզ նման՝ անօրենությունը վեր առնող և Իր ժառանգության մնացորդի մեղքիցն անց կենող, որ չի պահում Իր բարկությունը հավիտյան, որովհետև Նա բարություն սիրող է: Նա դարձյալ մեզ պիտի ողորմի, Նա պիտի ոտնահարի մեր անօրենությունները. և մեր բոլոր մեղքերը Դու կգցես ծովի խորքերը» (Միքիա 7.18,19):

Ինչպես ցույց է տրված Ղևտացոց գրքի 16-րդ գլխում, Քավության օրը կամ Յոմ-Կիպպուրը Հին Կտակարանի ամենահանդիսավոր ծեսն էր: Նրա նկարագրությունը կանխամտածված տեղադրված է Ղևտացոց գրքի կենտրոնում, որն իր հերթին գտնվում է Մովսեսի Հինգ գրքերի կենտրոնում՝ ցույց տալու համար այդ ծեսի «սրբագույն» բնույթը: Նշված լինելով նաև որպես «հանգստի շաբաթ» (Ղևտացոց 16.31)՝ այս օրը պահանջում էր ամեն տեսակ աշխատանքի դադարեցում, ինչը եզակի է իսրայելյան ամենամյա տոների համար: Տվյալ փաստն ընդգծում է շաբաթ օրվա՝ հանգստի ժամանակի հայեցակարգի հետ այս օրվա փոխադարձ կապը, հանգիստ, որ մեզ համար հաստատել է (և հետագայում էլ պարգևում է) Աստված՝ որպես մեր Արարիչ և Փրկիչ:

Շաբաթվա ընթացքում մենք կուսումնասիրենք, թե Քավության օրն ինչ էր տեղի ունենում սրբարանում, և առանձնահատուկ ուշադրություն կդարձնենք երկու նոխազներով ծեսերի վրա: Դա մեզ կօգնի ավելի լավ հասկանալ փրկության և մեղքի վերջնական ճակատագրի վերաբերյալ ճշմարտությունները:

Սրբարանի ամենամյա մաքրումը

Կարդացե՛ք Ղևտացոց 16.13,30-ը: Ի՞նչն էր սրբվում Մաքրման օրը: _____

_____

_____

Տարվա ընթացքում հնարավոր ամեն տեսակ մեղքեր էին սրբարան բերվում: Քավության օրը վրա էր հասնում դրանց վերացման ժամանակը: Քավության օրը երեք հիմնական մաս է ներառում.

Մեղքի զոհ քահանայի համար: Սրբարան մտնելուց և մաքրագործման ծեսը կատարելուց առաջ քահանայապետը զվարակ էր զոհաբերում իր մեղքերի համար, որպեսզի վստահ լինի իր մաքրագործմանը:

«Տիրոջ համար» նոխազի զոհաբերումը (Ղևտացոց 16.8): Տարվա ընթացքում մեղքի զոհերի միջոցով իսրայելացիների բոլոր մեղքերը «փոխադրվում էին» սրբարան: Քավության օրը սրբարանից այդ մեղքերի հեռացման ժամանակն էր. այդ գործընթացը կատարվում էր «Տիրոջ համար» նոխազի արյունը թափելու միջոցով:

Կենդանի քավության նոխազի վտարման ծեսը: Աստված ցանկանում էր սրբարանի Իր ժողովրդի մեղքերը բանակատեղիից հեռու տանել; Այդ պատճառով մյուս (կենդանի) նոխազին տանում էին անապատ:

Կարդացե՛ք Ղևտացոց 16.15–ը: Ի՞նչ էր տեղի ունենում նոխազի հետ, և ո՞րն է այդ ծեսի խորհրդանշական նշանակությունը:

_____

_____

_____

_____

Քանի որ Տիրոջ համար նոխազով ծեսի մեջ չկար ո՛չ մեղքի խոստովանություն, ո՛չ ձեռքերը դնել, նրա արյունը չէր համարվում մեղքի կրողը: Այդպիսով, այն չէր պղծում, այլ մաքրագործում էր: Արդյունքը պարզորոշ նշված է 16 և 20 համարներում: Քահանայապետը նոխազի արյամբ քավություն էր կատարում Տիրոջ համար՝ դրանով իսկ մաքրելով զոհասեղաններն ու սրբարանը: Քավության օրը եզակի էր նրանով, որ ժողովուրդը կարող էր վայելել մաքրագործված սրբարանի օրհնությունները: Դրանից հետո ժողովրդի մաքրագործումը համարվում էր ավարտված (տե՛ս ՅՕԱ աստվածաշնչյան մեկնություններ, հտ. 12, 286):

Քավության օրը երկրորդն էր սրբարանում փրկագնման ծառայության կարևորագույն երկու՝ ամենօրյա և ամենամյա ծառայության փուլերից: Առաջին փուլում (տարվա ընթացքում) հրեաները ներում էին ստանում: Նրանց մեղքերը չէին վերանում, այլ փոխադրվում էին սրբարան: Երկրորդ փուլը՝ Քավության օրը, գործնականում չէր շոշափում ներումը. մարդիկ արդեն ներված էին: «Ներում» բայը փաստացի չի հանդիպում Ղևտացոց 16-ում կամ 23.27-32-ում: Դա ցույց է տալիս, որ Փրկության ծագիրն ամբողջությամբ ուղղված չէ միայն մեր մեղքերի ներմանը: Այս փաստը առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում, եթե մենք այն հասկանում ենք մեծ պայքարի առավել լայն համատեքստում:

Երկուշաբթի ***Նոյեմբերի 4***

Ավելին, քան ներում

Կարդացե՛ք Ղևտացոց 16.32-34-ը: Ո՞րն էր քահանայապետի հիմնական խնդիրը Քավությանը օրը: _____

_____

_____

_____

Տարվա ընթացքում քահայապետի գլխավոր խնդիրն էր՝ միջնորդ լինել Աստծո և մարդկանց միջև: Ինչ վերաբերում է սրբարանին, նա կառավարում էր դրա ներքին համակարգը և ընծաների ու զոհաբերությունների տարբեր ծեսեր էր կատարում (Եբրայեցիս 8.3): Իսկ Քավության օրը նրա վրա ահռելի խնդիր էր դրվում: Նա կատարում էր գործնականում բոլոր ծեսերը՝ բացառությամբ քավության նոխազին անապատ տանելը, թեև հենց նա էր հրամայում տանել կենդանուն:

Քավության օրը «մեծ» քահանան (այդպես էլ էին նրան անվանում) դառնում էր Քրիստոսի կենդանի օրինակը: Այնպես, ինչպես Աստծո ժողովրդի ուշադրությունը կենտրոնացված էր քահանայապետի վրա, նույնկերպ էլ Հիսուսն է մեր ուշադրության բացառիկ կենտրոնը: Քավության օրը քահանայապետի բարեխոսական գործողությունները մարմնավորում են մեզ համար Հիսուսի բարեխոսական ծառայությունը Երկնային սրբարանում (Հռոմեացիս 8.34, Ա Հովհաննես 1.9): Ինչպես որ քահանայապետը ժողովրդի միակ հույսն էր Քավության օրը, այդպես էլ մեր միակ հույսն ամփոփված է Քրիստոսում:

«Թեև Քրիստոսի արյունն ապաշխարող մեղավորին փրկում է Օրենքի դատապարտումից, այն չի ոչնչացնում մեղքը. այն պետք է

Սրբարանում մնա, երկնային գրքերում՝ մինչև վերջնական մաքրագործումը: Նույն կերպ էլ նախակերպարային ծառայության մեջ մեղքի զոհի արյունը մեղքը հանում էր ապաշխարողից, բայց այդ արյունը մնում էր քավարանում մինչև Հաշտության օրը» (Է. Ուայթ, Նահապետներ և մարգարեներ, 357):

Համաձայն Ղևտացոց 16.16-20-ի՝ քահանայապետը պետք է մտներ Սուրբ Սրբոց և մաքրեր այն հանցագործություններից ու մեղքերից: Հետո նա Իսրայելի բոլոր անօրենությունները, հանցանքներն ու մեղքերը դնում էր կենդանի նոխազի վրա և նրա միջոցով դրանք հեռացնում անապատ: Այդպիսով, վերացվում էին Իսրայելի բոլոր մեղսավոր արարքները և հասնում էին Քավության օրվա եզակի նպատակին՝ սրբարանի մաքրագործմանը, ինչից հետո ժողովուրդի մաքրագործումը համարվում էր ավարտված: Այս ամենն, անշուշտ, դուրս էր գալիս ներման սահմաններից: Այդ օրը նոր ներում չէր պահանջվում: Աստված արդեն ներել էր Իր զավակների մեղքերը:

Ջանալով Աստծո կողմից մեզ պարգևված ուժով ազատվել մեր մեղքերից՝ մենք ինչպե՞ս կարող ենք սովորել ամբողջովին ապավինել Քրիստոսի արժանիքներին՝ փրկության մեր միակ Հույսին:

Երեքշաբթի ***Նոյեմբերի 5***

Ազազել

Կարդացե՛ք Ղևտացոց 16.20-22-ը: Ի՞նչ էր տեղի ունենում կենդանի նոխազի հետ: _____

_____

_____

_____

Կենդանի նոխազի հետ կատարվող ծեսը զոհաբերություն չէր: Այն բանից հետո, երբ վիճակահանությունը որոշում էր, թե երկու նոխազներից որն էր նախատեսված Յահվեի համար, իսկ որը՝ Ազազելի (հաճախ թարգմանվում է «քավության նոխազ»), մեղքի զոհ բերվում էր միայն Յահվեի նոխազը (համարներ 9,15): Ի հակադրություն դրա՝ Ազազելի նոխազն անվանված է «ողջ նոխազ»: Նրան երբեք չէին մորթում: Կենդանի նոխազը գործողության մեջ էր դրվում *միայն այն բանից հետո*, երբ քահանայապետն ավարտում էր ողջ քավարանի փրկագնումը (համար 20): Այդ պահը չի կարելի չընդգծել. *կենդանի նոխազի հետ հետագա*

ծեսը ոչ մի ընդհանուր բան չունի սրբարանի փաստրացի մաքրագործման հետ: Նրանք արդեն մաքրագործված էին:

Ո՞վ է Ազազելը: Հին եբրայական մեկնիչները սահմանում էին Ազազելին՝ որպես նախասկզբնական մեղսագործի և չարի հեղինակի, անգամ որպես չար հրեշտակների առաջնորդի: Իհարկե, մեզ համար դա հենց իր՝ Արուսյակի խորհրդանիշն է:

Կենդանի նոխազի հետ ծեսն իրենից ներկայացնում էր վտարման արարողություն, որը եզրափակում էր մեղքի վերջնական ոչնչացումը: Մեղքը կարծես թե դրվում էր դրա պատասխանատուի վրա և ընդմիշտ հեռացվում էր մարդկանցից: «Փրկագնումն» այստեղ տեղի էր ունենում պատժիչ կերպով (Ղևտացոց 16.10), երբ նոխազի վրա էր դրվում մեղքի համար լիակատար պատասխանատվությունը:

Սատանան որպես կեղծ մեղադրյալ որևէ դեր խաղո՞ւմ է մեր փրկության մեջ: Իհարկե՛, ո՛չ: Սատանան երբեք և ոչ մի կերպ մեր փոխարեն չի կրում մեր մեղքերը որպես փոխարինող: Դա կատարում է միայն Հիսուսը, և համարել, թե սատանան ինչ-որ կերպ մասնակցում է մեր փրկության գործընթացին՝ աստվածահայհոյություն է:

Ողջ նոխազով ծեսը կարելի է համեմատել կեղծ վկայի մասին օրենքի հետ (Երկրորդ Օրինաց 19.16-21): Մեղադրողն ու մեղադրյալը կկանգնեն Տիրոջ, քահանաների ու դատավորների առջև: Հետո քննություն է անցկացվում. եթե պարզվում է, որ մեղադրողը կեղծ վկա է, նա պետք է կրի այն պատիժը, որ ցանկանում էր մեղադրյալին: Հիշե՛ք, օրինակ, չար Համանին, ով կախաղան էր պատրաստել հավատարիմ Մուրթքեի համար, սակայն հենց ինքը կախվեց դրանից (Եսթեր 7.9,10):

Եվս մեկ անգամ շնորհակալություն հայտնենք Աստծուն ներման և այն բանի համար, որ Նա արդեն չի հիշելու մեր մեղքերի մասին (Երեմիա 31.34): Մենք ինչպե՞ս կարող ենք սովորել չհիշել մեր արդեն ներված մեղքերը: Ինչո՞ւ է դա այդքան կարևոր մեզ համար:

Հորեքշաբթի ***նոյեմբերի 6***

Քավության օրը

«Այսպիսով՝ խորանում, իսկ հետագայում նաև՝ տաճարում ծառայությունը մարդկանց ամեն օր սովորեցնում էր մեծամեծ ճշմարտություններ, որոնք կապված էին Քրիստոսի և Նրա ծառայության հետ, և տարին մեկ անգամ նրանք մտովի տեղափոխվում էին Քրիստոսի և

սատանայի միջև մեծ պայքարի եզրափակիչ իրադարձություններին և մեղքից ու մեղավորներից Տիեզերքի լիակատար մաքրմանը» (Է. Ուայթ, Նահապետներ և մարգարեներ, 358):

Կարդացե՛ք Ղևտացոց 16.29-31 և 23.27-32-ը: Աստված հրեաներից ի՞նչ էր սպասում Քավության օրը: _____

_____

_____

Եթե հին Իսրայելում ինչ-որ մեկը չէր հետևում այդ հրահանգներին, նրա մասին ասված էր, որ նա «իր ժողովրդի միջից պետք է կորչի» (Ղևտացոց 23.29,30): Քավության օրը իսկապես ոչ պակաս, քան կյանքի ու մահվան օր էր: Նա հավատավոր մարդուց պահանջում էր լիակատար հավատարմություն Աստծուն:

Պատկերացրե՛ք, որ ինչ-որ մեկը տարվա ընթացքում իր մեղքը խոստովանել էր սրբարանում քավչարար ծառայության առաջին փուլում, այսինքն՝ ամենօրյա զոհեր էին բերվել, բայց հետո լուրջ չէր վերաբերվել Քավության օրվան: Իր արհամարհական վերաբերմունքով այն բանի հանդեպ, ինչ այդ օրը կատարում էր Աստված, այդպիսի մարդը ցուցադրում էր Աստծուն իր անհավատարմությունը:

Սա նշանակում է, որ մարդը, ով հայտարարում էր Աստծո հանդեպ իր հավատի մասին, միևնույնն է, կարող է զրկվել փրկությունից: Որպես Յոթերորդ օրվա ադվենտիստներ՝ մենք չենք հավատում այն ուսմունքին, որ մի անգամ փրկվածը փրկված է մեկընդմիշտ, քանի որ դա հակասում է Աստվածաշնչին: Մենք Քրիստոսում փրկված ենք այնքան ժամանակ, քանի դեռ ապրում ենք հավատի մեջ, մեզ նվիրում ենք Նրան, Նրա զորությամբ հաղթահարում ենք գայթակղությունները և ներում ենք խնդրում, երբ ընկնում ենք:

Կարդացե՛ք Մատթեոս 18.23-35-ը: Մենք ի՞նչ պետք է սովորենք այս կարևոր առակներից: _____

_____

_____

Հինգշաբթի ***Նոյեմբերի 7***

Եսայիայի «Քավության օրը»

Եսայիա 6.1-6-ում մարգարեն տեսնում էր Արքային՝ «բարձր և վերացած» գահին նստած: Տեսիլքի մեջ ներկայացված է դատարանի տեսարանը, որին մասնակցում է Աստված (Եսայիա 5.16): Եսայիան

տեսնում է ճշմարիտ Աստված-Արքային, Ով Հովհաննու ավետարանում անվանված է Հիսուս Քրիստոս (Հովհաննես 12.41):

Թեև Եսայիան Աստծո մարգարեն էր և մարդկանց ապաշխարության կոչ էր անում, սակայն հասկանում էր, որ Աստծո ներկայությամբ ինքը դատապարտված է: Հայտնվելով Աստծո սրբության ու փառքի ներկայության մեջ՝ Եսայիան գիտակցեց սեփական մեղսավորությունը, ինչպես նաև՝ իր ժողովրդի անմաքրությունը: Սրբությունն ու մեղքն անհամատեղելի են: Եսայիայի նման մենք ամենքս պետք է գիտակցենք, որ չենք կարող ինքնուրույն կանգնել Աստծո դատաստանի առջև: Մեր միակ հույսն այն է, որ Փրկարիչը ունենանք:

Քավության օրվա հետ ի՞նչ զուգահեռներ եք դուք տեսնում Եսայիա 6.1-6-ում: _____

_____

_____

Խնկարկությամբ լեցուն տաճարը, զոհասեղանը, դատարանը, մեղքի ու անմաքրության քավությունը՝ այս ամենը հստակ կերպով փոխկապակցված է Քավության օրվա հետ: Եսայիան անցավ իր «Քավության օրվա» միջով:

Գործելով քահանայի նման՝ սերովբեն (տառացիորեն՝ «այրվող») զոհասեղանից վերցրեց այրվող ածուխը՝ մաքրելու համար մարգարեի մեղքը: Սա մեղքից մաքրագործման հաջող պատկեր է, որը հնարավոր է Հիսուսի զոհի և որպես մեր Բարեխոս Նրա քահանայապետական ծառայության միջոցով: Եսայիան հասկացավ, որ դա մաքրագործման ծես է, և մնաց հանգիստ, երբ ածուխը դիպավ իր շուրթերին: «Քո անօրենությունը հեռացավ, և քո մեղքը քավվեց» (Եսայիա 6.7): 7-րդ համարի կրավորական սեռը ցույց է տալիս, որ ներումը պարգևվում է աթոռին Նստողի կողմից: Դատավորը նաև Փրկիչ է:

Աստվածային մաքրագործումը մեզ տանում է «Վա՜յ ինձ»-ից դեպի «Ահա՛ ես, ի՛նձ ուղարկիր»: Գիտակցումն այն բանի, թե ինչ է տեղի ունենում Քավության օրը, հանգեցնում է ավետարանելու պատրաստակամության, քանի որ ճշմարիտ ըմբռնումը տանում է վստահության և երաշխիքների: Ամեն բան բացատրվում է նրանով, ինչ մենք գիտենք. դատարանում մենք ունենք Պաշտպան՝ Հիսուս Քրիստոսը, և միայն Նրա արդարությունը, Նրա արյունն է մեզ իրավունք տալիս կանգնել առանց դատապարտման վախի (Հռոմեացիս 8.1): Երախտագիտությունը դրդում է ծառայության: Արդարացված մեղավորները Աստծո լավագույն լրաբերներն են (Բ Կորնթացիս 5.18-20), որովհետև նրանք գիտեն, թե ինչից է Աստված իրենց փրկել:

Հետագա ուսումնասիրության համար

«Տեղի է ունենում մի իրադարձություն, որի նախակերպարն է դատաստանի օրվա վերջին հանդիսավոր ծառայությունը: Այն բանից հետո, երբ ավարտվում էր ծառայությունը Սուրբ Սրբոցում, և Իսրայելի մեղքերը մեղքի զոհի արյամբ հեռացվում էին սրբարանից, այդ ժամանակ Տիրոջ առջև էին բերում քավության նոխազին, և ողջ ժողովքի մոտ քահանայապետը նրա առջև խոստովանում էր «Իսրայելի որդիների բոլոր անօրենությունները և նրանց բոլոր հանցանքները՝ իրենց բոլոր մեղքերով, և դրանք դնի նոխազի գլխին» (տե՛ս Ղևտացոց 16.21): Նմանապես, երբ Երկնային սրբարանում ավարտվի փրկագնման գործը, այդ ժամանակ Տիրոջ, երկնային հրեշտակների և փրկագնվածների բազմության առջև Աստծո ժողովրդի մեղքերը կդրվեն սատանայի վրա, նրան մեղադրյալ կհայտարարեն այն ողջ չարիքի համար, որին նա դրդում էր Աստծո զավակներին» (Է. Ուայթ, Մեծ պայքար, 658):

Հարցեր քննարկման համար

1. Ինչո՞ւ Փրկության ծրագրի ըմբռնումը անկատար կլիներ, եթե դրանից բաց թողնվեր կամ թերագնահատվեր Քրիստոսի ծառայությունը՝ որպես մեր Քահանայապետի: Սրբարանի ծառայության մեջ ինչպե՞ս է բացահայտվում բարեխոսական ծառայության տեղը:
2. Նորկտակարանյան Եբրայեցիս թղթի մի նշանակալի մասը նվիրված է Երկնային սրբարանում Քրիստոսի ծառայությանը: Ելնելով դրանից՝ ասացե՛ք, թե որքանով է կարևոր այդ ծառայությունը:
3. Մի անգամ մեկը գրել է, որ Քրիստոսի գործողությունները, սկսած Նրա մահվանից և մինչև ծառայությունը Երկնային սրբարանում, պարզապես հանդիսանում են մեղքի խնդրի լուծման «Աստծո իրավական մեթոդը», որպեսզի պատասխաններ տրվեն Նրա արդարադատության, ազնվության և սիրո վերաբերյալ բոլոր հարցերին: Խորհեցե՛ք այդ գաղափարի իմաստի մասին, հատկապես՝ մեծ պայքարի լույսի ներքո: Այն ինչպե՞ս է մեզ մատուցում այն ահռելի խնդիրները, որոնք կապված են մեղքի սոսկալի ողբերգության հետ:
4. Յոթերորդ օրվա շատ ադվենտիստներ Քավության օրվա մասին ճշմարտությունը սովորել են այնպես, որ դա փրկության ոչ մի վստահություն չի տալիս: Նման տեսակետը ելնում է Քավության օրվա նպատակը սխալ հասկանալուց: Խորհեցե՛ք բուն «քավություն» բառի

մասին: Ի՞նչ է այն նշանակում: Ինչպե՞ս կարելի է փրկագնվել: Ո՞վ և ինչպե՞ս է կատարում փրկագնման աշխատանքը: Այս հարցերի պատասխաններն ինչպե՞ս են օգնում մեզ հասկանալ, թե ինչու է Քավության օրը բարի լուր բերում մեզ համար:

ՔՐԻՍՏՈՍԸ ՄԵՐ ՁՈՒՆ Է

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Եսայիա 53.2-12, Եբրայեցիս 2.9, 9.26-28, 9.12, Ելից 12.5, Եբրայեցիս 4.15:

Հիշելու համարը.

«Որ Ինքը մեր մեղքերն Իր մարմնում խաչափայտի վրա բարձրացրեց, որ մեղքերից հեռանալով՝ արդարության համար ապրենք, որ Նրա խոցերով բժշկվեցիք» (Ա Պետրոս 2.24):

Կաթոլիկ քահանա Մաքսիմիլիան Կոլբը բանտարկված էր Օսվենցիմի համակենտրոնացման ճամբարում այն բանի համար, որ թաքցնում էր Լեհաստանից եկած փախստականների, այդ թվում՝ շուրջ հինգ տասնյակ հրեաների: Երբ բարաքներից մի բանտարկյալ անհետացավ (հնարավոր է, նա փախել էր), նացիստները ընտրեցին տասը բանտարկյալների, ովքեր պետք է սովամահ լինեին: Դա էր տեղի ունեցածին նրանց արձագանքը: Դատապարտված տղամարդկանցից մեկը բացականչեց. «Օ՜, խե՜ղճ իմ կին, խե՜ղճ իմ երեխաներ»: Այդ ժամանակ Կոլբը առաջարկեց զբաղեցնել այդ մարդու տեղը. նա խնդրեց, որ իրեն թույլ տան սովամահ լինել այդ վշտից խելագարված ընտանիքավոր մարդու փոխարեն: Զարմացած նացիստ սպան համաձայնեց, և Կոլբը միացավ դատապարտվածների խմբին, իսկ այդ մարդը կենդանի մնաց (գոնե այդ ժամանակ):

Որքան էլ հուզիչ լինի այս պատմությունը, Կոլբի ինքնազոհությունը լոկ ստվերն է Նրա զոհի, Ով կամավոր զբաղեցրեց մեր տեղը: Հիսուսի զոհը խորհրդանշական ձևով արտացոլված է սրբարանի ծառայության մեջ: Նոր Կտակարանը Հիսուսին նույնացնում է զոհաբերությունների հինկտակարանյան համակարգի երկու գլխավոր տեսանկյունների հետ. Նա մեր զոհն է (Եբրայեցիս 9, 10) և մեր Քահանայապետը (Եբրայեցիս 5-10):

Այս շաբաթ մենք կուսումնասիրենք Քրիստոսի մեծագույն զոհի տարբեր տեսանկյունները և կտեսնենք, թե մեզ ինչ տվեց Նրա մահը:

Հիսուսը Եսայիա 53-ում

Կարդացե՛ք Եսայիա 53.2-12-ը: Այդ համարներում ինչպե՞ս է բացահայտված Քրիստոսի՝ հանուն մեզ կատարած սխրանքը:

_____

_____

_____

Եսայիա 52.13-53.12 հատվածը աշխարհի մեղքերի համար Քրիստոսի մահվան տպավորիչ պատմությունն է: Հատվածի որոշ տեսանկյուններ որոշակիորեն վկայում են, որ Հիսուսի մահը փրկագնում է՝ կատարված իր վրա ուրիշի պատիժը վերցնելու միջոցով, այսինքն՝ Նա կրեց այն պատիժը, որին արժանացել էին ուրիշները, և փաստորեն մահացավ նրանց փոխարեն: Ահա որոշ եզրակացություններ այդ հատվածից, որոնք վկայում են, որ Հիսուսը ծառայություն է իրականացնում մեզ համար.

Հիսուսը տուժեց մարդկանց *փոխարեն*: Նա իր վրա վերցրեց նրանց թուլությունն ու հիվանդությունները (համար 4), հանցանքները, անօրենությունը (համարներ 5,6,8) և մեղքը (համար 11,12):

Այն մարդկանց, ում փոխարեն Հիսուսը տառապում է, Նա պարգևում է մեծամեծ արտոնություններ՝ խաղաղություն, ապաքինում (համար 5) և արդարացում (համար 11):

Հիսուսը տառապեց և մահացավ Աստծո կամքի համաձայն (համար 10): Աստված Նրա վրա դրեց մեր մեղքերը (համար 6), քանի որ Աստծո ծրագիրն էր, որ Հիսուսը մահանա մեր փոխարեն:

Հիսուսն արդար է (համար 11), Նրանում չկա ո՛չ մեղք, ո՛չ սուտ (համար 9):

Նա մեղքի համար քավության զոհ դարձավ (համար 10):

Կարդացե՛ք Ղուկաս 22.37, Գործք առաքելոց 8.32-35 և Ա Պետրոս 2.21-25-ը: Նոր Կտակարանի գրողներն ինչպե՞ս են բացատրում Եսայիա 53-ը: _____

_____

_____

_____

Եսայիա 53-ի նորկտակարանյան մեջբերումները ցույց են տալիս, որ Հիսուս Քրիստոսը կատարեց տվյալ մարգարեությունը: Նա Ինքն Իրեն նույնացնում էր այնտեղ պատկերված Անձի հետ (Ղուկաս 22.37):

Քրիստոսն Իր վրա վերցրեց մեր մեղքերը, որպեսզի մենք կարողանանք ներվել և վերափոխվել:

Խորհեցե՛ք այն մասին, ինչ Քրիստոսը կատարել է մեզ համար՝ համաձայն Եսայիա 53-ի: Դուք ինչպե՞ս կարող եք այս լուրը կիրառել անմիջականորեն ձեր վերաբերյալ՝ գիտակցելով, որ, անկախ ձեր անցյալ մեղքերից, այս հավաստիացումներն առնչություն ունեն անձամբ ձեզ հետ, եթե դուք հավատով ձեզ հանձնում եք Տիրոջը:

Երկուշաբթի ***Նոյեմբերի 11***

Բավարար զոհ

Կարդացե՛ք Եբրայեցիս 2.9-ը: Ի՞նչ է նշանակում, որ Հիսուսն ստիպված եղավ «ամենքի համար մահը ճաշակել»: Տե՛ս նաև 2.17, 9.26-28, 10.12: _____

_____

_____

Հիսուսը մահացավ մեղավորների փոխարեն: Նրանում մեղք չկար (Եբրայեցիս 4.15), այդ պատճառով, երբ Քրիստոսն իր կյանքը զոհաբերեց, Նա մահացավ ոչ Իր մեղքի համար: Ընդհակառակը, Նա պետք է «շատերի մեղքերը վեր առներ» (Եբրայեցիս 9.28), «որ ժողովրդի մեղքը քավի» (Եբրայեցիս 2.17) և հավիտյանս ոչնչացնի մեղքը (Եբրայեցիս 9.26):

Համաձայն Եբրայեցիս 2.9-ի՝ նպատակը, որ «հրեշտակներից մի քիչ ցածրացավ», այն էր, որ Նա կարողանա տանել մահը: Պարզ լեզվով ասած՝ Հիսուսը պետք է մահանար, որպեսզի մարդկությունը փրկվեր: Այլ ճանապարհ չկար:

Այս հատվածում հայտնվում է, որ մարմնավորման նպատակը Որդու մահն էր: Միայն մահը վերապրելով Հիսուսը կարող էր դառնալ փրկության հեղինակը (Եբրայեցիս 2.10):

Ինչո՞ւ Աստված թույլ տվեց Հիսուսին տառապել: Եբրայեցիս 2.14-18-ի համատեքստը վկայում է այն մասին, որ Հիսուսի մահն անհրաժեշտ էր, որպեսզի Աստծո զավակներին փրկեր մահվան ստրկությունից, սատանայից, մահվան վախից ու Հիսուսին իրավունք տար դառնալ «ողորմած ու հավատարիմ Քահանայապետ»:

«Քրիստոսի՝ մեր Բարեխոսի ու Փրկչի վրա դրվեցին մեր բոլորիս մեղքերը: Նա համարվեց չարագործների հետ՝ մեզ փրկելու Օրենքի

դատապարտությունից: Ադամի բոլոր հետնորդների մեղքը ճնշում էր Նրա սիրտը: Մեղքի հանդեպ Աստծո նողկանքը, ամեն տեսակ անմաքրության հանդեպ Նրա սոսկալի ցասումը տրտմությամբ էին լցնում Նրա Որդու սիրտը» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 753):

Խաչը պետք է նախորդեր պսակին: Պողոս առաքյալն ընդգծում է, որ մահվան արդյունքում Հիսուսը բարձրացվեց և պսակվեց փառքով ու պատվով (Եբրայեցիս 2.9):

Քրիստոսը՝ Տիեզերքի Արարիչը, որպես մարդ մահացավ ձեր մեղքերի փոխարեն: Խորհեցե՛ք այս անպատմելիորեն սքանչելի լուրի մասին: Խորհեցե՛ք այն հույսի մասին, որ նրանում բովանդակվում է անձամբ ձեզ համար: Դուք ինչպե՞ս կարող եք այս զարմանահրաշ ճշմարտությունը դարձնել ձեր բոլոր գործողությունների ու արարքների շարժառիթը:

Երեքշաբթի ***Նոյեմբերի 12***

Քրիստոսի արյունը

Քավչարար արյան գաղափարն անցնում է է ողջ Աստվածաշնչով մեկ: Սկսած Ադամի ու Եվայի մեղանչումից հետո ամենաառաջին զոհերից՝ արյունը միշտ տեղ ուներ կենդանիների զոհաբերության ժամանակ: Արյան հետ կապված ծեսերը, որոնք բնորոշ էին զոհաբերությունների հրեական համակարգին, անհրաժեշտ էին՝ պատկերելու կարևորագույն ճշմարտությունը՝ առանց արյան մենք մեր մեղքերի ներման և Աստծո ներկայության մեջ լինելու ոչ մի հնարավորություն չէինք ունենա: Միայն արյան միջոցով կարելի է ողորմություն ստանալ Աստծուց և հնարավորություն ունենալ շփվել Նրա հետ:

Ստորև կարդացե՛ք Եբրայեցիս թղթից հատվածներ Քրիստոսի արյան և հինկտակարանյան զոհերի արյան մասին: Արյան մասին ի՞նչ ճշմարտություններ են մեզ բացահայտում այս համարները:

Եբրայեցիս 9.12 _____

Եբրայեցիս 9.14 _____

Եբրայեցիս 9.18 _____

Եբրայեցիս 9.22 _____

Եբրայեցիս 10.19 _____

Եբրայեցիս 12.24 _____

Եբրայեցիս 13.12 _____

Եբրայեցիս 13.20 _____

Քրիստոսի արյունը Նրա քավչարար մահվան խորհրդանիշն է և այդ պատճառով սահմանում է այդ մահվան գործառնական կողմը: Քրիստոսի թափած արյունը զարմանալիորեն բազմաբնույթ է: Այն պարգևում է հավիտենական փրկագնում, մաքրում է մեղքից, շնորհում է ներում, սրբագործում և հարության երաշխիք է:

Եբրայեցիներին հղված ուղերձում հզոր հակադրություն է ցուցադրված. Քրիստոսի արյունը գերազանց է ցանկացած այլ արյունից: Փաստորեն, ոչ մի այլ արյուն չի կարող ներում պարգևել. Քրիստոսի մահը մեղքերի ներման միակ հիմքն է ինչպես խաչելությունից առաջ, այնպես էլ՝ հետո (Եբրայեցիս 9.15): Քրիստոսի արյան հեղվելը և դրա արդյունքները հստակ վկայում են, որ Նրա մահը քավչարար էր, իսկ դա նշանակում է, որ Նա ընդունել է այն պատիժը, որին մենք էինք արժանի:

Ինչպե՞ս կարող է Քրիստոսի մահվան ըմբռնումն ազատել մեզ այն գաղափարներից, թե մեզ կարող են փրկել մեր սեփական գործերը:

Հորեքշաբթի *նոյեմբերի 13*

Անարատ զոհը

Ի՞նչ պահանջներ էին ներկայացվում զոհաբերվող կենդանուն: Ելից 12.5, Ղևտացոց 3.1, 4.3: _____

_____

_____

Զոհաբերվող կենդանու ընտրությունը մեծ ուշադրություն և զգուշություն էր պահանջում: Մարդը չէր կարող զոհաբերության համար հենց այնպես, ցանկացած կենդանի վերցնել. այն պետք է համապատասխաներ որոշակի չափանիշների՝ կախված զոհաբերության տեսակից:

Սակայն բոլոր ընծաները պետք է համապատասխանեին մեկ պահանջի: Դրանք պետք է լինեին «առանց արատի»: Եբրայերեն «թամիմ» բառը կարող է թարգմանվել նաև «կատարյալ», «անվնաս», «անթերի»: Այն ներկայացնում է բարձրագույն չափանիշի գաղափարը: Բավականաչափ լավ կարող էր լինել միայն լավագույնը:

Մարդկանց վերաբերյալ «անարատ» բառը օգտագործվում է Աստծո հետ նրանց փոխհարաբերությունների նկարագրության համատեքստում (Ծննդոց 6.9, 17.1):

Բերված համարներն ինչպե՞ս են պատկերում Հիսուսին: Եբրայեցիս 4.15, 7.26, 9.14, Ա Պետրոս 1.18,19: Հիսուսի անմեղությունն

ինչո՞ւ հսկայական նշանակություն ուներ: _____

_____

_____

_____

Հիսուսը՝ «Աստծո Գառը, որ վեր է առնում աշխարհի մեղքը» (Հովհաննես 1.29), լիովին համապատասխանում է անարատ զոհի հինկտակարանյան չափանիշին: Նրա մաքուր, սուրբ, անմեղ կյանքը հաստատում էր, որ Հիսուսը կատարյալ զոհ է դարձել: Սա մեր փրկության երաշխիքն է, քանի որ միայն անմեղը կարող էր մեր փոխարեն կրել մեր մեղքերը, և Նրա կատարյալ արդարությունը ծածկում է մեզ թե՛ հիմա, և թե՛ դատի ժամանակ: Այդ արդարությունը փրկության մեր հույսն է:

Ինչպես և իր եբրայերեն համարժեքը, հունարենից «անարատ» թարգմանված բառը (ամոմոս) օգտագործվում է ոչ միայն Հիսուսին և Նրա անթերի զոհը պատկերելու, այլ նաև Նրա հետևորդների բնավորությունը նկարագրելու համար (տե՛ս Հուդա 24, Եփեսացիս 1.4, Կողոսացիս 1.22, Հայտնություն 14.5):

«Իրենց կյանքը համեմատելով Քրիստոսի բնավորության հետ՝ նրանք կկարողանան իմանալ, թե որտեղ իրենց չի հաջողվել համապատասխանել Աստծո սուրբ Օրենքին. այդ պատճառով նրանք կձգտեն կատարելության իրենց ոլորտում, այնպես, ինչպես Աստված կատարյալ է Իր ոլորտում» (Է. Ուայթ, *The Paulson Letters,* 374):

Քրիստոսի մահվան և ծառայության շնորհիվ մենք Աստծո առջև կանգնում ենք անթերի (Հուդա 24): Դա հնարավոր է միայն այն պատճառով, որ մեր փոխարեն այնտեղ կանգնած է Անթերին:

Արդարության և անարատության հայեցակարգն ինչո՞ւ է մեր մեջ անհանգստություն առաջ բերում: Ինչպե՞ս է գիտելիքն այն մասին, որ Քրիստոսը մեր Փոխարինողն է, օգնում մեզ՝ համաձայնել, որ մենք նույնպես «սուրբ» ենք: Աստծո առջև մեր նոր կարգավիճակն ինչպե՞ս պետք է ազդի մեր կյանքի վրա:

Հինգշաբթի ***նոյեմբերի 14***

Մեծ վտանգ

Եբրայեցիներին հղված ուղերձում Պողոսը ոչ միայն պարզապես կենտրոնանում է Քրիստոսի զոհի աստվածաբանական կողմի վրա, այլ նաև բացատրում է որոշ գործնական կողմեր: Որոշ տեղերում նա ցույց է տալիս, թե ինչ է տեղի ունենում, եթե որևէ մեկն անտեսում է այդ զոհը:

Կարդացե՛ք Եբրայեցիս 6.4-6 և 10.26-31-ը: Ինչի՞ց է մեզ նախազգուշացնում Պողոսը: Ի՞նչ տեսակետներ է նա նկարագրում:

_____

_____

_____

Եբրայեցիներին հղված ուղերձում Պողոսը ցույց է տալիս աստվածային փրկության մեծությունը, թե ինչպես է Աստված բացահայտում Իրեն, և ինչ է Նա արել ու շարունակում է անել հավատավորների համար: Սակայն Պողոսը նաև շոշափում է առնվազն մեկ շատ կարևոր ու խնդրահարույց հարց: Նա խոսում է այն վտանգի մասին, որ Քրիստոսի զոհն աստիճանաբար կարող է ընկալվել որպես ինքնին հասկանալի ինչ-որ բան: Առաքյալն այդպիսի վտանգն անվանում է «շեղվել նպատակից» (Եբրայեցիս 2.1, բառացի թարգմանություն): Պողոսի խոսքերի հետևում թաքնված է այն նավի պատկերը, որը շեղվել է իր ուղղությունից և չի հասել նշանակման վայր: Գլխավոր խնդիրը ճանապարհից չշեղվելն է:

Որոշ մարդիկ իրենց կենսակերպով Աստծուն մերժում են: Սա նշանակում է, որ Ավետարանն ընդունելուց հետո նրանց կյանքը փաստացի մնում է նույնը, ինչպիսին կար մինչև Բարի լուրն ընդունելը: Փաստորեն, այս մարդիկ իրենց մեղքի համար որևէ գործուն զոհ չունեն (Եբրայեցիս 10.26-31): Սակայն շատ հավատավորներ գիտակցաբար չէ, որ մերժում են Քրիստոսի զոհը. հնարավոր է, որ նրանց մտքով անգամ նման բան չի անցնում: Բայց Պողոսն զգուշացնում է այս մասին: Անտարբերության և անտեսման իսկական վտանգը թաքնված է նրանում, որ սա անտեսանելի ու հարատև գործընթաց է: Անցումը կարող է աննկատ լինել: Աստիճանաբար, դանդաղորեն մարդը դադարում է իսկապես գնահատել Քրիստոսի զոհը, այնպես, ինչպես Եսավն աստիճանաբար դադարեց գնահատել առաջնեկության իրավունքը (Եբրայեցիս 12.15-17): Քրիստոսի զոհը երբեք չպետք է այնքան սովորական դառնա, որ մենք սկսենք այն ընկալել որպես ինչ-որ առօրեական մի բան:

Պողոսը չի ձգտում վախեցնել իր ընթերցողներին, սակայն նա պետք է նրանց ցույց տա Տիրոջ ճանապարհից շեղվելու հետևանքները: Նա չի ցանկանում, որ դա տեղի ունենա: Ընդգծելով իր հասցեատերերի դրական հատկանիշները՝ առաքյալը ջերմորեն դրդում է նրանց՝ ամուր պահպանել փրկության բոլոր շնորհները (Եբրայեցիս 3.6,14, 10.23) և նայել Հիսուսին (Եբրայեցիս 12.2):

Դուք ի՞նչ կարող եք ասել ձեր մասին: Հնարավո՞ր է, որ դուք նույնպես «վարժվել եք» Գողգոթայի խաչի մասին զարմանահրաշ

ճշմարտությանը: Ինչո՞ւ է դա սարսափելի: Մենք ինչպե՞ս կարող ենք խուսափել այն վտանգից, որի մասին զգուշացնում էր Պողոսը:

Ուրբաթ *Նոյեմբերի 15*

Հետագա ուսումնասիրության համար

ՅՕԱ աստվածաշնչյան մեկնությունների հավելվածից կարդացե՛ք «Փրկություն, մաս 1. Քավչարար զոհը» բաժինը (հտ. 7Ա, 661-680):

Այն, ինչ Մարտին Լյութերը հաճախ անվանում էր մարդկային մեղքի դիմաց Քրիստոսի արդարության «զարմանալի փոխանակում» կամ «ուրախալի փոխանակում», Էլեն Ուայթը նկարագրում է հետևյալ դասական խոսքերով. «Քրիստոսի հետ վարվեցին այնպես, ինչին արժանի էինք մենք, որպեսզի մեզ հետ վարվեն այնպես, ինչպես Նա է արժանի դրան: Դատապարտված լինելով մեր մեղքերի համար, որոնց Նա հաղորդակից չէր, Քրիստոսը տառապեց, որպեսզի մենք արդարացվենք Նրա արդարությամբ, որին մենք հաղորդակից չենք: Նա ընդունեց մեր մահը, որ մենք ընդունենք Նրա կյանքը: «Նրա վերքերով մենք բժշկվեցինք»» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 25):

«Եվ միայն Քրիստոսի մահը կարող էր Նրա սերը գործուն դարձնել մեզ համար: Միայն այն պատճառով, որ Նա մահացավ, մենք կարող ենք ուրախությամբ սպասել Նրա Երկրորդ գալստյանը: Նրա զոհի մեջ է մեր հույսը: Դա մեր հավատի կենտրոնն է» (նույն տեղում, 660):

Հարցեր քննարկման համար

1. Ոմանց դուր չի գալիս այն միտքը, որ Հիսուսն Իրեն զոհաբերեց հանուն մեր փրկության: Նրանց թվում է, թե նման տեսակետն Աստծուն ներկայացնում է որպես արյունախում կամ վրեժխնդիր՝ հին հեթանոսական աստվածությունների նման: (Ավելին, ոմանք պնդում են, որ արյան, զոհերի և այլնի աստվածաշնչյան լեզուն հին հեթանոսական հասկացությունների արտացոլումն է): Խաչի մասին ճշմարտությանն այդպիսի մոտեցումն ինչո՞ւ է ճակատագրական սխալ: Մահվան, զոհի և արյան աստվածաշնչյան հայեցակարգն ինչպե՞ս է օգնում մեզ՝ տեսնելու մեղքի և նրա հետևանքների ողջ լրջությունը: Մեղքի համար վճարված գնի գիտակցումն ինչպե՞ս է օգնում մեզ՝ որոնել Աստծո զորությունը՝ վտարելու համար մեղքը մեր կյանքից:
2. Որոշ մարդիկ չեն հասկանում, թե գործերն ինչ տեղ պետք է զբաղեցնեն մեր փրկության մեջ: Քրիստոսի քավչարար զոհի գիտակցումն ինչպե՞ս

է օգնում մեզ՝ զգուշանալու գործերով փրկության մտքից: Մի՞թե մեր գործերը կարող են որևէ բան ավելացնել նրան, ինչ մեզ համար արեց Քրիստոսը՝ մահանալով մեր փոխարեն:

3. Էլեն Ուայթն ասում էր, որ օգտակար է ամեն օր մեկ ժամ Հիսուսի կյանքի, հատկապես՝ Նրա կյանքի վերջին իրադարձությունների մասին մտորելով անցկացնելը: Այդ մտորումներն ինչպե՞ս կարող են օգնել մեզ՝ ամրապնդել Քրիստոսի հետ մեր փոխհարաբերությունները, ինչպես նաև՝ ավելի շատ գնահատել այն, ինչ Նա արել է մեզ համար:

ՔՐԻՍՏՈՍԸ ՄԵՐ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏՆ Է

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Սաղմոս 110.1-5, Ծննդոց 14.18-20, Եբրայեցիս 7.1-3, Հռոմեացիս 8.31-34, Ա Տիմոթեոս 2.4-6, Եբրայեցիս 8.6, 2.17,18, 3.6, 10.1-14:

Հիշելու համարը.

«Եվ ասածներիս բովանդակությունը սա է. մենք այնպիսի Քահանայապետ ունենք, որ Մեծափառության աթոռի աջ կողմը նստեց երկնքում, պաշտոնյա սրբությունների և ճշմարիտ խորանի, որ Տերը կանգնեցրեց և ոչ թե մարդ» (Եբրայեցիս 8.1,2):

Իր հարությունից և Երկնային սրբարան համբարձումից հետո Քրիստոսը մուտք գործեց Փրկության ծրագրի մի նոր փուլ (Եբրայեցիս 2.17): Երբ կատարվեց Նրա զոհի մեջ ամփոփված պարտադիր պայմանը, Նա Իր վրա վերցրեց քահանայական պարտականությունները և սկսեց քահանայական ծառայությունը, որպեսզի այժմ բարեխոսի նրանց համար, ովքեր հավատով ընդունել են Իր կատարյալ զոհը: Նրա քահանայական ծառայությունը բաղկացած է երկու փուլից, որոնք երկուսն էլ ներկայացված էին երկրային սրբարանում՝ ամենօրյա ծառայությունը և Տարեկան քավության օրը:

Այս շաբաթ մենք ուսումնասիրելու ենք Հիսուսի գործողությունները, որոնք կատարվում են ամենօրյա ծառայության ընթացքում, և կտեսնենք մեզ համար այդ ծառայության գործնական արդյունքները: Իհարկե, մենք կարող ենք մեծ մխիթարություն քաղել այն բանի գիտակցումից, որ Հիսուսն այժմ կանգնած է Աստծո ներկայության մեջ՝ հանուն մեզ մատուցված Իր զոհի արժանիքները ցույց տալով: Սրբարանի լուրը հույս և քաջալերանք ունի իր մեջ անգամ Նրա ամենաթույլ հետևորդների համար:

Մեր Քահանայապետը

Եբրայեցիներին հղված ուղերձը նորկտարականյան այն գիրքն է, որտեղ ամենից շատ է խոսվում Քրիստոսի մասին՝ որպես Քահանայապետի: Եբրայեցիս թղթի հինկտակարանյան հիմքը կառուցվում է Սաղմոս 110-ի երկու համարների վրա: Առաջին համարը մեջբերվում է ի հաստատումն այն բանի, որ Քրիստոսը բոլորից վեր է բարձրացվել, քանզի նստել է Աստծո աջ կողմում: Սա Եբրայեցիս գրքում կրկնվող թեմա է, որն ընդգծում է Հիսուսի Աստվածությունն ու Մեսիականությունը (Եբրայեցիս 1.3, 4.14, 7.26, 8.1, 12.2): Սաղմոս 110.4 համարն օգտագործվում է որպես վկայություն այն բանի, որ Քրիստոսի քահանայության նախակերպարը Մելքիսեդեկի քահանայությունն էր (Եբրայեցիս 5.6):

Քրիստոսն ինչպե՞ս է իրականացնում Աստծո խոստացած քահանայությունը «Մելքիսեդեկի կարգի պես»: Համեմատե՛ք Ծննդոց 14.18-20, Սաղմոս 110.4 և Եբրայեցիս 7.1-3-ը: _____

_____

_____

Աստվածաշունչը մեզ շատ տեղեկատվություն չի տալիս Մելքիսեդեկի մասին: Բայց այն, ինչ տալիս է, բացահայտում է Հիսուսի հետ ապշեցուցիչ նմանությունը: Մելքիսեդեկը Սաղեմ քաղաքի թագավորն է (Սաղեմ նշանակում է «խաղաղություն», այնպես որ, նա «Խաղաղության թագավորն» է): Նրա անունը նշանակում է «ճշմարտության թագավոր»՝ ցույց տալով նրա բնավորությունը: Նա առանձնացված է պատմությունից, որովհետև նրա ծագումը ցույց չի տրվում. նրա ծննդյան և մահվան մասին ոչ մի հիշատակում չկա, այդ պատճառով տպավորություն է ստեղծվում, թե Մելքիսեդեկը ո՛չ սկիզբ ունի, ո՛չ վերջ, նա նաև եղել է «ամենաբարձրյալ Աստծո քահանա»: Մելքիսեդեկի քահանայությունը վեր է ղևտացիների քահանայությունից, որովհետև Աբրահամի միջոցով Ղևին տասանորդ տվեց Մելքիսեդեկին (Եբրայեցիս 7.4-10): Այդպիսով, Մելքիսեդեկը Քրիստոսի նախակերպարն է:

Բայց Քրիստոսը է՛լ ավելին է: Ահարոնը Իսրայելի առաջին քահանայապետն էր: Եբրայեցիս 5.1-4-ում նկարագրվում և իդեալականացվում է Ահարոնի քահանայապետական աստիճանը. Աստվածային կոչում, մարդկանց ներկայացուցիչ, բարեխոսություն Աստծո առաջ, կարեկցանք և ժողովրդի ու հենց իր համար զոհերի մատուցում:

Եբրայեցիս թուղթը պատկերում է Քրիստոսին որպես նոր Քահանայապետ: Նա ավելի բարձր տեղ է զբաղեցնում, քան Ահարոնը, Նա ոչ միայն համապատասխանում է Ահարոնի քահանայապետության պահանջներին, այլև կատարելագործում է դրանք: Հիսուսում չկար մեղք, Նա կատարելապես հնազանդ էր և Իր համար զոհ մատուցելու կարիք չուներ: Ընդհակառակը, Նա Ինքը Զոհ էր՝ ամենակատարյալ Զոհը, որ միայն կարող էր բերվել:

Հիսուսը Քահանայապետի առաքելությունն իրագործեց շատ ավելի լավ, քան Ահարոնն ու Մելքիսեդեկը, շատ ավելի լավ, քան երբևէ որևէ քահանայություն այն իրագործել է կամ կարող է իրագործել: Երկու նախակերպարն էլ իրենց կատարումը գտան Քրիստոսում:

Երկուշաբթի ***Նոյեմբերի 18***

Պաշտպանն ու Բարեխոսը

Կարդացե՛ք Հռոմեացիս 8.31-34-ը: Մեզ ի՞նչ խոշոր խոստում և հույս է տրված այստեղ: _____

_____

_____

31-34 համարներում դատարանի դահլիճը ֆոն է, որտեղ մենք պետք է պատկերացնենք մեզ: Հարցեր են տրվում. ո՞վ է մեր դեմ: Ո՞վ է մեղադրում մեզ: Ո՞վ է դատապարտում մեզ: Նման իրավիճակը կարող է ստիպել մեզ թեթևակի սարսռալ: Չէ՞ որ մենք լավ ենք գիտակցում մեր մարդկային անկատարությունն ու մեղավորությունը:

Սակայն մենք վախենալու պատճառ չունենք: Խոստումն այն մասին, որ ոչ ոք և ոչինչ չի կարող մեզ բաժանել Աստծո սիրուց (համար 35), կենտրոնացած է որոշ կարևոր ճշմարտությունների վրա. Աստված մեր կողմից է (համար 31), Նա մեզ համար տվել է Իր Որդուն (համար 32), առատաձեռնորեն մեզ պարգևում է ամեն բան, ինչի կարիքը մենք ունենք (համար 32), և արդարացնում է մեզ (համար 33): Հիսուս Քրիստոսը մեր կողմից է: Հիսուսը դատապարտման մեր ցանկացած վախի պատասխանն է, որովհետև Նա մահացավ, հարություն առավ և այժմ մեզ համար անդադար բարեխոսում է Աստծո աջ կողմում՝ Երկնային սրբարանում:

Եթե որևէ մեկը մեզ համար պատրաստակամորեն զոհում է իր կյանքը, մենք կարող ենք վստահ լինել նրա սիրո մեջ: Հռոմեացիս 8.31-39-ում մեզ ցույց տրված վստահությունն իսկապես վկայում է այն

Աստծո մասին, Ում մենք հավատում ենք: Եթե մենք հասկանում ենք, որ մեր Աստվածը մեզ այնքան է սիրում, որ ոչինչ չի կարող խոչընդոտել մեր հանդեպ ունեցած Նրա մտադրություններին (համարներ 35-39), Աստծո դատարանի դահլիճը մեզ համար դառնում է ուրախության և ցնծության վայր:

Այս ճշմարտությունն է՛լ ավելի հստակորեն բացահայտվում է Ա Հովհաննես 2.1,2-ում: Հունարեն «պարակլետոս» բառը ցույց է տալիս մխիթարիչին, ինչպես նաև՝ օրինական օգնականին կամ փաստաբանին, ով մեկ այլ մարդու շահերը պաշտպանում է որպես «միջնորդ»: Հիսուսը մեր փաստաբանն է, Նա պաշտպանում է մեզ, որովհետև հակառակ դեպքում մենք ոչ մի հույս չէինք ունենա:

Մեր Փաստաբանն արդար է, իսկ դա մեզ վստահություն է հաղորդում, որ Հայրը կլսի Քրիստոսի բարեխոսությունը, որովհետև Քրիստոսը չի կարող մի այնպիսի բան անել, ինչը կարող էր մերժել Նրա արդար Հայրը: Քրիստոսը բարեխոսում է մեղավորների համար՝ Իրեն՝ մեղքը չիմացողին ներկայացնելով որպես նրանց փոխարեն կանգնած Արդարի:

Դուք ինչպե՞ս կարող եք ձեր կյանքում ավելի լիակատար կերպով զգալ այն ճշմարտությունը, որ ոչինչ չի կարող ձեզ հեռացնել Աստծո սիրուց: Այդ վստահությունը ձեզ ինչպե՞ս է դրդում ապրել Աստծո կամքին համապատասխան:

Երեքշաբթի *Նոյեմբերի 19*

Միջնորդը

«Որ կամենում է, որ բոլոր մարդիկ փրկվեն և ճշմարտության գիտությանը գան, որովհետև մեկ Աստված կա, և մեկ միջնորդ Աստծո և մարդկանց միջև՝ Քրիստոս Հիսուս մարդը, Որ Իր անձը ամենքի համար փրկանք տվեց, որ վկայություն լինի Իր ժամանակներում» (Ա Տիմոթեոս 2.4-6): Այս համարներն ինչպե՞ս են օգնում մեզ հասկանալ, թե Քրիստոսը մեզ համար ինչ է կատարում Երկնքում: _____

_____

Քրիստոսն անվանված է միջնորդ Աստծո և մարդկանց միջև: Այլ միջնորդ չկա, որովհետև փաստորեն ոչ մեկի կարիքը չկա: Քրիստոսի միջնորդ ծառայության միջոցով փրկությունն ու ճշմարտությունը ճանաչելը մատչելի են բոլորին (Ա Տիմոթեոս 2.4): Մեզ բոլորիս համար վճռորոշ հարց է՝ կօգտվե՞նք նրանից, ինչ մեզ առաջարկում է Քրիստոսը՝

չնայած մեր կարգավիճակին, ռասայական պատկանելությանը, բնավորությանը կամ նախկինում կատարած արարքներին:

«Միջնորդ» բառը հին հունարեն եզրույթ է, որը վերաբերում է առևտրին և իրավաբանությանը: Այն նշանակում է մարդ, ով բանակցություններ է վարում կամ որպես միջնորդ է հանդես գալիս երկու կողմերի միջև՝ տարաձայնությունները հարթելու կամ ընդհանուր նպատակին հասնելու համար, որպեսզի գործողության մեջ դնի պայմանագիրը:

Եբրայեցիս թղթում Քրիստոսը ներկայացված է որպես Նոր Կտակարանի Միջնորդ (Եբրայեցիս 8.6, 9.15, 12.24): Նա հաշտեցնում էր: Թեև մեղքը խզել է Աստծո և մարդու միջև սերտ փոխհարաբերությունները և հանգեցրել մարդկային ցեղի ոչնչացմանը, Քրիստոսը եկավ և վերականգնեց այդ կապը, այսինքն՝ հաշտեցրեց: Նա միակ կապող օղակն է Աստծո և մարդկության միջև, և այդ օղակի միջոցով մենք կարող ենք վայելել Աստծո հետ ուխտի փոխհարաբերությունների լիությունը:

Պողոսի «Հիսուս Քրիստոս մարդը» արտահայտությունը հաղորդում է Նրա եզակի հատկանիշները, որոնք ներառում են ինչպես մարդկայինը, այնպես էլ աստվածայինը (Ա Տիմթեոս 2.5): Փրկությունը և միջնորդությունը որոշակիորեն տեղ ունեն Քրիստոսի ինչպես մարդկային, այնպես էլ աստվածային էության, նաև Նրա կամավոր ինքնազոհության մեջ: Լինելով Աստված և Մարդ՝ Հիսուսը Երկինքն ու Երկիրը կապեց անխզելի կապերով:

«Հիսուս Քրիստոսը եկավ, որպեսզի սահմանափակ մարդուն միավորի անսահման Աստծուն, որպեսզի միացնի մեղքով ու անօրենությամբ երկնքից հեռացած Երկիրը (Է. Ուայթ, Քարոզներ և զրույցներ, հտ. 1, 253):

Խորհեցե՛ք. այժմ երկնքում է գտնվում Աստվածամարդը, Ով միջնորդում է ձեզ համար: Սա ձեզ ի՞նչ է ասում այն մասին, թե որքան կարևոր եք դուք Աստծո աչքում: Այս ճշմարտությունն ինչպե՞ս պետք է արտացոլվի ձեր կյանքի և շրջապատող մարդկանց հանդեպ ձեր վերաբերմունքի վրա:

Չորեքշաբթի ***նոյեմբերի 20***

Մեծն Քահանայապետը

Բերված համարներն ինչպե՞ս են մեզ բացահայտում Քրիստոսի քահանայապետական ծառայությունը; Եբրայեցիս 2.17,18, 3.6, 4.14,15, 7.24-28, 8.1-3: _____

Հիսուսը մեծն Քահանայապետն է (Եբրայեցիս 4.14): Նա բոլոր երկրային քահանաներից և իշխաններից ավելի բարձր է: Աստվածաշունչը ներկայացնում է Հիսուսի մի շարք բնութագրեր՝ որպես մեծն Քահանայապետի.

Ողորմած և հավատարիմ (Եբրայեցիս 2.17): Այս երկու բնութագրերը համապատասխանում են Քրիստոսի միջնորդ ծառայությանը, քանի որ Նա մեզ վրա հեղում է Իր պարգևները («ողորմած»), ինչպես նաև հավատարիմ է Իր Հորը և մեզ («հավատարիմ»):

«Կարեկից»: Հիսուսը կարող է կարեկցել մեզ (Եբրայեցիս 2.18, 5.2,20), որովհետև ապրում էր որպես մարդ, և մենք կարող ենք վստահ լինել, որ Նա կարեկցող, կատարյալ Օգնական է: Նա հասկանում է մեղքի ողջ ուժը, որովհետև երբեք չի տրվել դրան, Նրանում մեղք չի եղել (Եբրայեցիս 4.15):

«Նրա դան վրա» (Եբրայեցիս 3.6, բառացի թարգմանություն): Հիսուսը՝ որպես Քահանայապետ, գտնվում է ոչ Մովսեսի նման հավատացյալների շրջապատի *մեջ:* Նա նրանցից *վեր* է՝ որպես Որդի, Ով իշխում է Իր Հոր տանը: Քրիստոսին է պատկանում սրբերին ղեկավարելու լիակատար իրավունքը:

Նման է մեզ: Հիսուսի աստվածությունը Նրան որևէ առանձնահատուկ արտոնություն չէր տալիս: Նա, ինչպես և մենք, ենթարկվում էր փորձությունների (Եբրայեցիս 4.15): Փորձությունները, որոնց միջով Փրկիչն անցավ անապատում, ցույց են տալիս, որ Նա փորձվում էր ֆիզիկական, մտավոր և հոգևոր ոլորտներում (Մատթեոս 4.1-11):

Մեր փոխարեն: Քրիստոսը մուտք է գործում Երկնային սրբարան և Աստծո առջև կանգնում է «մեր փոխարեն» (Եբրայեցիս 9.24): Նա բարեխոսում է մեզ համար (Եբրայեցիս 7.25): Փառք Աստծուն, որ մենք ունենք աստվածային Ներկայացուցիչ, Ով դատարանում մեր տեղն է զբաղեցնում:

Հիսուսը երկնքում է «մեր փոխարեն»: Ի՞նչ է դա նշանակում: Ի՞նչ վստահություն և անվտանգության զգացում է ձեր մեջ առաջ բերում այդ հրաշալի ճշմարտությունը:

Հինգշաբթի ***Նոյեմբերի 21***

Մեկ Ջոհ

Մենք տեսանք, որ երկրային սրբարանում ծառայության մեծագույն նպատակներից մեկն այն էր, որ խորհրդանիշների, նախակերպարների

և մարգարեությունների մեջ բացեր Հիսուսի մահվան և քահանայական ծառայության մասին ճշմարտությունները: Մեղքը չափազանց սոսկալի է, որպեսզի այդ հիմնախնդիրը լուծվի պարզապես կենդանիների մահվամբ: Կենդանիների ողջ թափված արյունը պետք է մատնանշեր մեղքի հիմնախնդրի միակ լուծումը՝ Աստծո Որդու մահը: Այն փաստը, որ մեղքի փրկագնման համար Աստծուն հավասարի մահը հարկավոր եղավ (Փիլիպեցիս 2.6), ցույց է տալիս, թե որքան սարսափելի է մեղքը:

Կարդացե՛ք Եբրայեցիս 10.1-14-ը: Այս հատվածն ինչպե՞ս է համեմատում երկրային սրբարանի նշանակությունը և նրանում կատարվող ծառայությունը Քրիստոսի մահվան և քահանայապետական ծառայության հետ: _____

_____

_____

_____

_____

_____

Այս համարներում բազում հիմնարար ճշմարտություններ են ամփոփված: Ամենակարևորներից մեկն այն է, որ կենդանիների մահը բավարար չէր մեղքի հիմնախնդրի լուծման համար: «Վասնզի անկարելի է, որ նոխազների և ցուլերի արյունը մեղքեր վեր առնի» (Եբրայեցիս 10.4): Կենդանիների զոհերը ժամանակավոր հրահանգներ էին, որպեսզի մարդը կարողանար մերձենալ Աստծուն մեղքի պայմաններում, դրանք ցույց էին տալիս այդ հիմնախնդրի մեծ լուծումը Աստծո Որդու միջոցով, բայց դրանք ինքնին մեղքի լուծումը չէին: Լուծումը Հիսուսն էր, Նրա մահն ու հետո՝ Նրա ծառայությունը Երկնային սրբարանում, որ իրագործվում է հանուն մեզ:

Ուշադրություն դարձրեք բերված համարներում ևս մեկ կարևոր հանգամանքի. «մեկ անգամ» (տե՛ս Եբրայեցիս 10.10) Քրիստոսի մահը բավական էր: Թեև հարկավոր էր կրկին ու կրկին, օրեցօր, տարեցտարի կենդանիների զոհեր մատուցել Հիսուսի մեկանգամյա անգամ մահը բավական էր (չէ՞ որ, մտածե՛ք միայն, թե Ով դարձավ այդ զոհը), որ ծածկի ողջ մարդկության մեղքերը: Աստված զորավոր ձևով բացել է այս կարևոր ճշմարտությունը, երբ Քրիստոսի մահից հետո երկրային սրբարանի ներքին վարագույրը պատռվեց գերբնական կերպով (Մատթեոս 27.51):

Նայե՛ք մեր աշխարհին. կործանումներ, ցավ, զրկանքներ, վախ և անհուսալիություն, որ բերել է մեղքը: Մենք ինչպե՞ս կարող ենք սովորել օրեցօր, ամեն վայրկյան ապավինել Հիսուսին՝ որպես մեր կյանքում մեղքի հիմնախնդրի միակ լուծմանը:

Հետագա ուսումնասիրության համար

ՅՕԱ աստվածաշնչյան մեկնությունների հավելվածից կարդացե՛ք «Փրկագնում, մաս 2. Փրկագնական զոհի քահանայապետական կիրառությունը» գլուխը (հտ. 7A, 680-692):

«Հեռացե՛ք սատանայի շշնջոցներից և նրա կամքը կատարելուց, կանգնե՛ք Հիսուսի կողքին՝ ունենալով Նրա հատկանիշները: Զգայուն և նուրբ ընկալունակություն ունեցող մարդը կարող է հալածյալների ու տառապյալների գործը դարձնել իր սեփականը: Այն մարդը, ում շատ բան է ներվել, շատ էլ կսիրի: Հիսուսը կարեկից Պաշտպան է, ողորմած ու հավատարիմ Քահանայապետ: Նա՝ երկնքի Մեծությունը, փառքի Արքան, կարող է նայել մահկանացու մարդուն՝ սատանայական գայթակղությունների առարկային, որովհետև Նա Ինքը զգացել է սատանայի ծուղակների ուժը» (Է. Ուայթ, Քրիստոնեական կրթություն, 160):

«Խիղճը կարող է ազատվել դատապարտումից, Քրիստոսի հավատի միջոցով ամենքը կարող են կատարյալ դառնալ Նրանում: Շնորհակալություն Աստծուն այն բանի համար, որ դա հնարավոր է: Մենք կարող ենք հավակնել սրբացման, վայելել Աստծո բարեհաճությունը, չվախենալ այն բանից, թե Աստված ինչ է մտածում Քրիստոսի՝ մեր Փոխարինողի մասին» (Է. Ուայթ, Հատընտիր լուրեր, հտ. 2, 32, 33):

Հարցեր քննարկման համար

1. Կարդացե՛ք Եբրայեցիս 2.17-ը: Հիսուսն ինչո՞ւ պետք է դառնար Մարդ և տառապեր՝ նախքան մեր Քահանայապետը դառնալը:
2. Խորհե՛ք ուրբաթ օրվա դասում է. Ուայթից կատարված վերջին մեջբերման մասին: Առանձնահատուկ ուշադրություն դարձրեք հետևյալ տողին. «Չվախենալ այն բանից, թե Աստված ինչ է մտածում Քրիստոսի՝ մեր Փոխարինողի մասին»: Այս արտահայտությունն ինչպե՞ս է օգնում մեզ՝ հասկանալու հեղինակի նախորդ միտքն այն մասին, որ մենք կարող ենք կատարյալ դառնալ Քրիստոս Հիսուսում:
3. Մեր Քահանայապետը՝ Հիսուս Քրիստոսը, մեր փրկության Երաշխավորն է, և Նա մեզ օժտում է Իր զոհի և թափած արյան բոլոր առավելություններով: Մենք վախենալու ոչինչ չունենք, երբ Նա մեզ հետ է: Մենք ինչպե՞ս կարող ենք այս հրաշալի ճշմարտությունները, որոնք այդքան վառ արտահայտված են Եբրայեցիներին հղված ուղեր-

ձում, կիրառել մեր կյանքում, հատկապես, երբ ենթարկվում ենք փորձության:

4. Եբրայեցիս թուղթը շատ պարզորոշ բացատրում է, որ մի անգամ հանուն բոլորի բերված Հիսուսի զոհը բավական է մեղքի հիմնախնդրի լուծման համար: Սա մեզ ի՞նչ պետք է ասի այն կրոնական ուսմունքների մասին, որոնք պնդում են. մեղքերի ներում ստանալու համար անհրաժեշտ է շարունակել զոհեր մատուցել:

ԴԱՏԸ ԳԱԼՈՒՍՏԻՑ ԱՌԱՋ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Դանիել 7, Ծնունդոց 3.8-20, Բ Տիմոթեոս 2.19, Սաղմոս 51.6, Բ Կորնթացիս 5.10, Սաղմոս 96.11-13:

Հիշելու համարը.

«Եվ թագավորությունն ու իշխանությունը և ողջ երկնքի տակ եղող թագավորությունների մեծությունը պիտի տրվի բարձրյալի սուրբերի ժողովրդին. նրա թագավորությունը հավիտենական թագավորություն է, և բոլոր իշխանությունները պիտի նրան ծառայեն և հնազանդվեն» (Դանիել 7.27):

Ինչպես հստակ կերպով ցույց է տրված Եբրայեցիս թղթում, Իր մահից հետո Հիսուսը մուտք գործեց հանուն մեզ ծառայության մի նոր փուլ: Նա մեր Քահանայապետը դարձավ Երկնային սրբարանում: Դանիել 7, 8-ի տեսիլքները ցույց են տալիս, որ պատմության մի որոշակի պահի հանուն մեզ կատարվող Քրիստոսի երկնային ծառայությունը թևակոխեց մի նոր փուլ՝ սկսվեց դատը: Երբեմն ծառայության այս փուլն անվանում են «Քավության վախճանաբանական օր». «վախճանաբանական», որովհետև այս փուլը վերաբերում է վերջին ժամանակին, «Քավության օր», որովհետև այն նախակերպարային ձևով ներկայացված էր Քավության օրը երկրային սրբարանում իրականացվող ծառայությամբ:

Ինչո՞ւ է Քավության օրը կապված Դատաստանի օրվա հետ: «Մաքրման կամ քավության օրը դատաստանի օր էր (Ղևտացոց 23.29): Դրա գերիշխող կողմը արդարացումն էր Աստծուն հավատարիմ և նվիրված հրեաների, ովքեր ծիսական տարվա ընթացքում Աստծո առջև իրենց դիրքը վերականգնելու համար օգտվում էին Աստծո նախատեսած բոլոր միջոցներից... Մաքրման կամ դատաստանի օրվա մեկ այլ տեսանկյունը պատժող դատաստանն էր՝ որպես Աստծո պատիժ: Աստծուն անհավատարիմ հրեաները, ովքեր չէին խոնարհվում այդ առանձնահատուկ օրը (համար 29). «կորչում» կամ հեռացվում էին իրենց ժողովրդից... Այդպիսով Մաքրման օրը բոլոր հրեաներին բերում

էր կա՛մ արդարացում և կյանք, կա՛մ դատապարտում և մահ... Միայն հրեաներն էին գալիս դատաստանին: Հեթանոսները չէին մասնակցում Քավության օրվա ապրումներին» (ՅՕԱ աստվածաշնչյան մեկնություններ, հտ. 12, 603):

Շաբաթվա ընթացքում մենք կուսումնասիրենք Դանիել մարգարեի գրքի 7-րդ գլուխը: Այս գլխում հաջորդաբար ներկայացված են թագավորությունները, որոնք խորհրդանշական ձևով պատկերվածված են չորս կենդանիներով: Այս թագավորությունները զուգահեռաբար ներկայացված են նաև Դանիել 2-ում՝ Բաբելոնը, Մարապարսկաստանը, Հունաստանը և Հռոմը:

Ուսումնասիրության ընթացքում մենք կտեսնենք, որ Աստծո ժողովրդի համար դատաստանը բարի լուր է, քանի որ Տեր Աստված գործում է հանուն Իր ժողովրդի: Ողջ Տիեզերքի առջև Նա որոշում կկայացնի Իր զավակների օգտին և նրանց կպարգևի Քրիստոսի հավիտենական Թագավորություն մուտք գործելու իրավունքը: Դա նրանց՝ Տիրոջ հետևորդների բոլոր հույսերի գագաթնակետը կլինի:

Միաշաբթի ***նոյեմբերի 24***

Տեսիլքը և դատաստանը

«Մի կրակի գետ էր հոսում և գնում Նրա առջևից. հազարհազարներ ծառայում էին Նրան, և բյուր-բյուրեր կանգնած էին Նրա առջև. ատյանը նստեց, և գրքերը բացվեցին» (Դանիել 7.10):

Կարդացե՛ք Դանիել 7.1-14-ը: Ի՞նչ իրադարձություններ են պատկերված հատվածում: _____

_____

_____

Այն բանից հետո, երբ Դանիելը տեսավ չորս կենդանիներին, նա ուշադրություն է դարձնում «փոքր եղջյուրին», որ աճում էր չորրորդ կենդանու եղջյուրների միջև: Այդ եղջյուրը դարձավ Աստծո և Նրա սուրբերի գլխավոր թշնամին: Հետո Դանիելի ուշադրությունը հանկարծ փոխադրվում է խավար երկրից դեպի դատաստանի լուսավոր տեսարանը, որ տեղի էր ունենում երկնային գահասրահում (Դանիել 7.9-14):

Դատաստանի տեսարանը ողջ տեսիլքի կենտրոնն է, որ ներառում երկու հիմնական Կերպարներ՝ Հինավուրցին և Մարդու Որդուն: Այնտեղ ներկա են նաև վկաներ՝ հրեշտակները: Տեսիլքը ներկայացնում է դատաստանի երեք փուլերը. նախ դատաստանի տեսարանը (համարներ

9,10), հետո երկրային գազանների ուժի հանդեպ դատաստանի ամփոփումը (համարներ 11,12), և ի վերջո իշխանության և թագավորության փոխանցումը Մարդու Որդուն (համարներ 13,14): Հայր Աստված պատկերված է որպես վեհաշուք Հինավուրց՝ իմաստուն և ամեն բան հասկացող Դատավոր: Մարդի Որդին Ինքը՝ Հիսուսն է: Հիսուսը բազմիցս այդ անունն օգտագործել է Իր վերաբերյալ, և առնվազն երկու անգամ հստակ կերպով փոխանցել է Դանիել մարգարեի գրքի 7-րդ գլխի կերպարները (Մատթեոս 24.30, 26.64):

Քավության օրը առավել իրականորեն է փոխանցում Երկնային տաճարում տեղի ունեցող այս տեսարանի տիպոլոգիական իրավիճակը: Փաստորեն այն պատկերում է, թե ինչպես է Հինավուրցին մոտենում երկնային Քահանայապետը՝ շրջապատված խնկարկությամբ: Դանիել 7.10-ում ասված է, որ «ատյանը նստեց, և գրքերը բացվեցին»: Գրքերը կարևոր տեղ են զբաղեցնում երկնային դատաստանում: Աստվածաշունչը մատնանշում է երկնային ծագմամբ մի քանի գրքեր՝ «կյանքի գիրքը» (Սաղմոս 69.29, Փիլիպեցիս 4.3, Հայտնություն 3.5, 13.8, 17.8), «հիշատակի գիրքը» (Մաղաքիա 3.16), գրքեր, որտեղ նկարագրված են մարդկանց «գործերը» (Հայտնություն 20.12):

Պատկերացրե՛ք, որ ձեզ դատում է Աստված (իսկ դա տեղի է ունենալու՝ տե՛ս Բ Կորնթացիս 5.10): Պատկերացրե՛ք, որ ամեն բան, ինչ դուք երբևէ արել եք, կքննարկվի դատաստանում (այդպես էլ լինելու է՝ Ժողովող 12.4): Եթե դուք ապավինում եք միայն ձեր սեփական բարի գործերին, ապա ի՞նչ հույս կունենաք: Ո՞րն է մեր *միակ* հույսը դատարանում:

Երկուշաբթի ***Նոյեմբերի 25***

Դափի մոդելը

Կարդացե՛ք Ծննդոց 3.8-20-ը: Աստված ի՞նչ է անում դատավճռի հրապարակման ժամանակ: _____

_____

_____

Հետաքննական դատի հայեցակարգը աստվածաշնչյան գաղափար է: Աստծո դատավարությունը հաճախ ներառում է հետաքննությունն ու ուսումնասիրությունը: Առաջին օրինակը նկարագրված է Ծննդոց 3-ում, որտեղ Աստված գործը քննում է դատավճիռը հայտարարելուց առաջ (Ծննդոց 3.8-19): Աստծո փոխգործողությունները Կայենի (Ծննդոց 4),

Բաբելոնի աշտարակը կառուցողների (Ծննդոց 11) և Սոդոմի բնակիչների (Ծննդոց 18,19) հետ հետևում են նույն մոդելին: Մենք տեսնում ենք, որ Աստված նախաձեռնում է նույն գործողությունները, ինչ պահանջում էր Իսրայելի դատավորներից, մասնավորապես՝ «քննես և լավ հարցուփորձ անես» (Երկրորդ Օրինաց 13.14, տե՛ս նաև Երկրորդ Օրինաց 19.18):

Հետազոտության մեջ անհրաժեշտ է խելամտություն և ազնվություն: Այն հաճախ տեղի է ունենում հրապարակավ: Աստված շրջապատողներին թույլ է տալիս տեսնել այն, ինչ Ինքը կատարում է: Այդպիսով, երբ Աստված հայտարարում է դատավճիռը, լինի դա փրկություն, թե դատապարտում, դիտողները վստահ են, որ Նա գործում է լավագույն ձևով: Հենց այս պատճառով է, որ Դանիել 7-ում նկարագրված երկնային դատարանում առկա են գրքերը: Գրքերն անհրաժեշտ են ոչ թե նրա համար, որ Աստծուն ավելի հեշտ լինի ամեն ինչի մասին հիշել, դրանք անհրաժեշտ են Նրան շրջապատող երկնաբնակներին, ովքեր, ի տարբերություն Նրա, ամենագետ չեն:

«Այն բյուրավոր էակներին, որ ներկա են գտնվելու այդ դատաստանին, անհրաժեշտ է իմանալ, թե ժամանակին իրենց Աստծո հետևորդներ համարած մարդկանցից ով է արժանի ժառանգելու Աստծո հավիտենական Թագավորությունն ու ապրելու այնտեղ: Ամենքը, ովքեր հավատի մեջ կմնան մինչև վերջ, կարդարացվեն այդ դատաստանում: Նրանց մեղքերը կհարթվեն, որովհետև Քրիստոսը նրանց մասին արդեն հոգ է տարել: Նրանց անունները, ովքեր իրենց անվանում են Քրիստոսի հետևորդներ, բայց Տիրոջ նկատմամբ հավատարմություն չեն պահպանում, կջնջվեն երկնային գրքերից (համեմատե՛ք Ելից 32.30,33): Գալուստից առաջ տեղի ունենալիք հետաքննական դատաստանում նրանք չեն արդարացվի: Նրանց գործերը և անհավատությունը կվկայեն նրանց դեմ, և նրանց անունները կջնջվեն կյանքի գրքից» (ՅՕԱ աստվածաշնչյան մեկնություններ, հտ. 12, 604):

Դատաստանն ինչո՞վ կավարտվի սուրբերի համար: Դանիել 7.22: _____

_____

_____

Խոսելով Դատաստանի մասին՝ Է. Ուայթը գրել է. «Այն փաստը, որ Աստծո կանչված ժողովուրդը ներկայացված է Աստծո առջև անբիծ հագուստներով կանգնած, պետք է բոլոր Տիրոջ անունը կանչողներին դրդի սրտի ամենախոր քննության՝ մեծագույն խոնարհության ոգով: Նրանք, ովքեր իսկապես մաքրել են իրենց հոգիները ճշմարտությանը

հնազանդվելով, ամենահամեստ պատկերացումներ կունենան իրենց մասին... Եվ, գիտակցելով մեր մեղավորությունը, մենք սկսում ենք ապավինել Քրիստոսին՝ որպես մեր Արդարություն, մեր Սրբագործում և Քավություն: Մենք ի զորու չենք պատասխանել մեր դեմ ուղղված սատանայի մեղադրանքներին: Միայն Քրիստոսը կարող է մեզ համար բարձրացնել Իր գործուն աղոթքը և պաշտպանել մեզ: Նա իրավունք և զորություն ունի մեղադրողին ստիպել լռել՝ այն ապացույցներով, որոնք հիմնավորված են ոչ թե մեր, այլ Իր անձնական արժանիքների վրա» (Է. Ուայթ, Վկայություններ Եկեղեցու համար, հտ. 5, 471, 472):

Այս խոսքերն ինչպե՞ս են օգնում մեզ՝ հասկանալ, թե ինչու է դատաստանը բարի լուր: _____

_____

_____

«Քրիստոսի գալուստից առաջ իրականացվող հետաքննական դատի ժամանակ Աստված Իր զավակների գործերը ներկայացնում է երկնաբնակների ուշադրությանը՝ հետաքննության համար: Այդ դատաստանը արդարացնում է Նրա հավատարիմ զավակներին, որովհետև դատավճիռը կկայացվի «Ամենաբարձրյալի սուրբերի օգտին» (Դանիել 7.22, բառացի թարգմանություն): Նրանց դատող Հինավուրցը նրանց թշնամին չէ: Նա արդար Դատավոր է, Ով նրանց տալիս է դատ և արդարադատություն, քանի որ Իր որդու՝ Հիսուս Քրիստոսի միջոցով հոգ էր տանում, որ նրանց մեղքերը ներվեն, և որ նրանք դառնան հավիտենական Թագավորության տերերը: Այս հետաքննական դատաստանը կարող է սպառնալից լինել նրանց համար, ովքեր ժամանակին Աստծո հետևորդն էին, բայց հետո որոշեցին գնալ իրենց ճանապարհով: Մեղքի մեջ համառողների անունները կջնջվեն գրքից: Թեև դատաստանի այս տեսանկյունը մնում է, այն առաջնահերթ չէ Գալստյանը նախորդող հետաքննական դատի մեջ: Այս դատաստանի գլխավոր թեման դատն է սուրբերի օգտին: Աստված Իր ժողովրդի կողմից է» (ՅՕԱ աստվածաշնչյան մեկնություններ, հտ. 12, 604):

Երեքշաբթի ***Նոյեմբերի 26***

Դատի ժամանակը

Կարդացե՛ք Դանիել 7.7-10,21,22,25,26: Երբ է տեղի ունենում Դանիել 7-ում նկարագրված դատը: _____

_____

Աստվածաշունչը հաղորդում է, որ դատաստանը սկսվում է այն ժամանակ, երբ եղջյուրի ուժը դեռևս կոտրված չէ (Դանիել 7.8,9): Եղջյուրի տիրակալությունը կդադարի Քրիստոսի Երկրորդ գալուստից առաջ. երբ դատավարություններն ավարտված են, բոլոր երկրային թագավորությունների վերջը գալիս է (համար 26):

Բերված աստվածաշնչյան համարները հստակ կերպով վկայում են, որ դատը պետք է տեղի ունենա մինչև Երկրորդ գալուստը, իսկ այն սկսվում է «ժամանակ, ժամանակներ և կես ժամանակից» որոշ ժամանակ հետո (համար 25): Քրիստոսի Երկրորդ Գալուստը ինչպե՞ս կարող է ոմանց պարգև բերել, իսկ մյուսներին՝ պատիժ, եթե դրան չնախորդի դատը:

Անկասկած, սուրբերը պարգև կստանան Քրիստոսի Գալստյան ժամանակ, ինչը ենթադրում է, որ նրանք արդեն դատված կլինեն: Իսկ ամբարիշտները, ներառյալ դիվական ուժերը, կդատվեն հազարամյա թագավորության ժամանակ՝ նախքան Աստված գործողության մեջ կդնի դատի դատավճիռը (տե՛ս Հայտնություն 20):

Ինչի՞ համար է անհրաժեշտ հետաքննական դատը: Մի՞թե գրված չէ՝ «Տերը ճանաչում է նրանց, որ Իրենն են» (Բ Տիմոթեոս 2.19): _____

_____

_____

Իհարկե՛, մեր ամենագետ Աստված հիանալի գիտի ամեն բան Իր ժողովրդի մասին: Նրան դատ պետք չէ՝ որոշելու, թե ում փրկի: Գալուստին նախորդող դատը հետաքննական-գնահատողական դատավարություն է նրանց վերաբերյալ, ովքեր իրենց համարել կամ համարում են հավատավոր: Դատի խնդիրներից մեկն է՝ որոշել իրենց Աստծո զավակները խոստովանողներից նրանց, ովքեր պետք է ժառանգեն Աստծո Թագավորությունը: Երկնային էակները պետք է վստահ լինեն, որ Տիրոջ որոշումներն արդար են, և Երկնքում լինելու արժանի մարդիկ ոչ միայն անվնաս են անմեղ էակների համար, այլև՝ ցանկալի: Ձգտելով հասկանալ դատի իմաստը՝ մենք պետք է հիշենք իրական մեծ պայքարի մասին, որն ակնարկվում է Դանիելի գրքից վերը բերված համարներում, որովհետև մենք տեսնում ենք հրեշտակների բազմություն, որ հետևում է դատաստանին: Երկնային էակները հետաքրքրություն են դրսևորում Փրկության ծրագրի վերջնական արդյունքների հանդեպ:

«Տերը ճանաչում է նրանց, որ Իրենն են»: Դուք ինչպե՞ս կարող եք վստահ լինել այն բանում, ինչ պատկանում է Տիրոջը: Ո՞ր *միակ* ցուցանիշը կարող է վստահեցնել ձեզ դրանում: (Հռոմեացիս 8.1):

Դատաստանի ավարտը

Եվս մեկ անգամ կարդացե՛ք Դանիել 7-ը: Որո՞նք են դատաստանի արդյունքները, որ նախորդում են Երկրորդ գալստյանը: ___

___

___

___

Դատը հանգեցնում է հեռուն գնացող որոշ լուրջ հետևանքների.

1. *Մարդի Որդու կողմից ողջ Երկրի թագավորությունն ընդունելը:* «Եվ Նրան տրվեց իշխանություն և պատիվ և թագավորություն» (Դանիել 7.14):
2. *Սուրբերը հավիտյանս կստանան թագավորությունը:* Դատն ավարտվում է սուրբերի օգտին, ովքեր կստանան Աստծո Արքայությունը (Դանիել 7.22): Անկասկած, Մարդի Որդին և սուրբերը շատ մտերիմ փոխհարաբերությունների մեջ են: Ստանալով Իր Թագավորությունը՝ Մարդի Որդին սուրբերին հրավիրում է միանալ Իրեն: Նրա Թագավորությունը նրանց Թագավորությունն է (Դանիել 7.27): Դատը տանում է դեպի այն ժամանակը, երբ հավիտենական Թագավորության Արքան կվերամիավորվի Իր ժողովրդի հետ: Դա Նրա և նրանց մեծագույն պարգևն է:
3. *Ապստամբությունը ճնշված և վերացված է:* Աստծո ժողովրդի թշնամիները դատապարտված են: Այն բանից հետո, երբ եղջյուրը պատերազմ էր մղում սուրբերի հետ, նրանք պարտված և ոչնչացված են հավերժ (Դանիել 7.25,26)*
4. *Աստծո բացարձակ արդարադատության հայտնությունը:* Քանի որ Երկնքում դատը կատարվում է բացեիբաց, դրան ներկա են հրեշտակները, ովքեր ներթափանցում են մարդկային գործերի մեջ: Բոլորը կարող են համոզվել, որ Աստված սիրող է և արդարացի: Ողջ դատավարությունը համոզում է մեզ, որ Տիեզերքը հավիտյանս կդառնա անվտանգ վայր (տե՛ս Սաղմոս 51.6, Հռոմեացիս 3.4):
5. Երկրորդ Գալուստին նախորդող դատը հանգեցնում է Աստծո և հավատավորների հույսերի իրականացմանը: Աստված ցանկանում

* Ռուսաստանյան աստվածաշնչյան ընկերության թարգմանությունը ճշգրիտ հայտնում է 26-րդ համարի իմաստը. «Բայց ատյանը կնստի, և վայր կնետեն նրա իշխանությունը, որպեսզի ոչնչացնեն նրան և կործանեն մինչև վերջ» (ծան. փորձագետի):

է փրկել Իր ժողովրդին և արմատախիլ անել մեղքը՝ կասկած չթողնելով Նրա սիրո և արդարադատության մեջ: Մարդկությունը ծարավի է փրկություն ձեռք բերել մեղքից և նրա պատճառած տառապանքների բոլոր ձևերից և հավիտենական կյանքը վայելել Նրա ներկայությամբ, Ով սիրում է իրենց: Այսպիսով, դատը դառնում է Աստծո և Նրա արարածների միջև վստահությամբ լի փոխհարաբերությունների երաշխիքը:

«Մեծ պայքարն ավարտված է: Մեղք և մեղավորներ այլևս չկան: Ողջ Տիեզերքը մաքուր է: Անհամար արարածների մեջ համաձայնության և ցնծության մեկ զարկերակ է խփում: Անսահման տարածության բոլոր կողմերում կյանքի, լույսի և ուրախության աղբյուրներ են բխում Նրանից, Ով արարել է ամեն բան: Փոքրագույն ատոմից մինչև մեծագույն գալակտիկան՝ ողջ շնչավորն ու անշունչը իրենց անխաթար գեղեցկության և կատարյալ ցնծության մեջ հռչակում են. «Աստված սեր է» (Է. Ուայթ, Մեծ պայքար, 678):

Հինգշաբթի ***նոյեմբերի 28***

Հավատի խոստում

Կարդացե՛ք Սաղմոս 96.11-13-ը: Ինչո՞ւ է ցնծում ողջ արարչագործությունը: _____

_____

_____

Ինչո՞ւ է մարդը բացականչում. «Դատի՛ր ինձ, Ով տեր» (Սաղմոս 7.8): Պատճառը պարզ է: Աստծո զավակների համար դատը նշանակում է փրկություն: «Ո՜վ Աստված, Քո անունով ազատի՛ր ինձ, և Քո զորությունով իրավունք արա ինձ» (Սաղմոս 54.1): 26-րդ սաղմոսը արդարության և արդարադատության հուսահատ աղերս է: Դավիթը հիանալի է ներկայացրել այն միտքը, որ Աստված-Դատավորը միշտ Իր հավատարիմ ժողովրդի կողմից է, և որ Նրա դատաստանն ավելի քան ցանկալի է (Սաղմոս 26.1, 35.24, 43.1, 54.3): Դատը ենթադրում է արդարացում:

Եվ այսպես, Երկրորդ գալստյանը նախորդող դատը վտանգո՞ւմ է Աստծո փրկագնվածների փրկությունը: Ո՛չ, որովհետև այս դատը վճռված է արդարների օգտին (Դանիել 7.22): Աստծո գործողությունները կրկին հաստատում են Տիրոջ ժողովրդի ներումը՝ հավիտյան վերացնելով վերջինիս մեղքերը: Իրականում դատը փրկության ևս մեկ դրսևորում է:

Այդ պատճառով հավատավոր մարդու համար դատն ուժեղացնում է Աստծո տված խոստումը: Իսկ եթե առավել որոշակի արտահայտվենք, դատն ընկած է քրիստոնեական հույսի դավանաբանության հիմքում:

Կարդացե՛ք Հռոմեացիս 14.10-12-ը և Բ Կորնթացիս 5.10-ը: Դատի իրական լինելն ինչպե՞ս պետք է արտացոլվի մեր կյանքում:

_____

_____

Աստվածաշունչը չի սովորեցնում, որ արդարներն ազատված են դատից: Թեև արդարներն արդարացվում են դատի ժամանակ, և նրանց մեղքերը ջնջված են հավերժ, սակայն դատի կանխավայելումը նրանց ստիպում է իրենց կյանքում հավատարմություն և պատասխանատվություն դրսևորել: Այսպիսով, փրկության հույսը խթան է դառնում բարոյական վարքի համար: Քանի որ Աստված այդքան շատ բան է արել մեզ համար, մենք սիրում ենք Նրան և ձգտում ենք այդ սերն արտահայտել՝ հավատարմություն դրսևորելով Նրան ամեն բանում:

Ձեր ծանոթ քրիստոնյան ասում է, որ վախենում է Աստծուց և հատկապես զգուշանում է դատից: Դուք ինչպե՞ս կարող եք օգնել այդ մարդուն՝ հասկանալու բարի լուրը դատի մասին և փրկության հույս ստանալ:

Ուրբաթ ***նոյեմբերի 29***

Հետագա ուսումնասիրության համար

«Նա, Ով գտնվում է Երկնային սրբարանում, արդար է դատում: Մեղքի աշխարհում փորձությունների դեմ պայքարող Իր ժողովուրդը Քրիստոսին ուրախացնում է ավելի, քան Նրա գահը շրջապատող հրեշտակների բազմությունը» (Է. Ուայթ, Քրիստոսի առակները, 176):

«Սատանան լավ գիտի այն մեղքերը, որ գործել է Աստծո ժողովուրդը իր դրդմամբ, և պնդում է, որ իր մեղսավորության պատճառով այս ժողովուրդը կորցրել է աստվածային պաշտպանության իրավունքը, և այժմ Տերն իրավունք ունի ոչնչացնել նրանց: Սատանան հայտարարում է, որ նրանք, ճիշտ այնպես, ինչպես և նա ինքը, արժանացել են Աստծո ողորմությունից զրկվելուն... Բայց թեև Քրիստոսի հետևորդները մեղանչել են, նրանք իրենց չեն հանձնել խավարի ուժերի իշխանությանը: Նրանք ապաշխարել են իրենց մեղքերի համար և խոնարհությամբ ու ճշմարիտ ապաշխարությամբ որոնել են Տիրոջը, այդ պատճառով Աստվածային Պաշտպանը բարեխոսում է նրանց համար: Նա, Ով ամենից

շատ էր անպատվության ենթարկվել նրանց անշնորհակալությամբ, Ով գիտի նրանց մեղքերը, ինչպես նաև նրանց ապաշխարությունը, ասում է. Թող Տերը արգելի քեզ, սատանա՛: Ես Իմ կյանքն եմ տվել այս հոգիների համար: Նրանք գրված են իմ բազուկների վրա: Նրանք կարող են լինել անկատար, նրանք կարող էին և սխալվել, բայց նրանք ապաշխարել են, այդ պատճառով Ես ներել և ընդունել եմ Նրանց» (Է. Ուայթ, Մարգարեներ և թագավորներ, 588,589):

Հարցեր քննարկման համար

1. Աստվածաշունչը հայտնում է, որ Աստծո արդարադատությունը, Օրենքը և ազնվությունը դրվել էին հարցականի տակ: Որտե՞ղ է դա տեղի ունեցել առաջին անգամ՝ Երկրի վրա՞, թե՞ երկնքում: Ի՞նչ է վկայում ձեր պատասխանը, հատկապես՝ երկնային դատի անհրաժեշտությունն ըմբռնելու համատեքստում:
2. Յոթերորդ օրվա ադվենտիստների եկեղեցին արդեն երկար տարիներ քարոզում է դատի մասին լուրը: Բայց Քրիստոսը մինչև այժմ չի վերադարձել: Մենք ինչպե՞ս կարող ենք բացատրել այդ թվացյալ ուշացումը: Ինչո՞ւ է կարևոր հասկանալ, որ իբրև մարդ մենք միանգամայն սահմանափակ ըմբռնում ունենք բուն իսկ ժամանակի մասին: Խորհեցե՛ք որևէ շատ երկար ժամանակ ընդգրկող աստվածաշնչյան մարգարեության մասին: Այն մարդը, ով ապրել է այդ ժամանակ, կարող էր հիասթափություն ապրել. չէ՞ որ նրան կարող էր թվալ, թե այդ մարգարեությունը երբեք չի իրականանա:
3. Շատ քրիստոնյաներ հավատում են դատի աստվածաշնչյան հայեցակարգին. չէ՞ որ այն անցնում է ողջ Աստվածաշնչով: Դատի և Սրբարանի միավորումն ինչպե՞ս է օգնում մեզ բացահայտել դատի էության վերաբերյալ կարևոր ճշմարտությունները և ձեռք բերել այն հույսը, որ նա է մեզ պարգևում:

ՔԱՎՈՒԹՅԱՆ ՎԱԽՃԱԲԱՆԱԿԱՆ ՕՐԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Դանիել 8, Հայտնություն 14.6,7, Թվոց 14.34, Դանիել 9.24-27:

Հիշելու համարը.

«Եվ նա ասաց ինձ. մինչև երկու հազար երեք հարյուր իրիկունառավոտ, հետո սրբարանը պիտի արդարանա» (Դանիել 8.14):

Սրբարանի լուրն առավել լավ ըմբռնելու համար ուսումնասիրե՛ք բերված սխեման, որը հաստատում է, որ Դանիել 7-ի մեծ դատի տեսարանը (այս թեման մենք անցանք անցյալ շաբաթ) այն նույն իրադարձությունն է, ինչ և սրբարանի արդարացումը Դանիել 8.14-ում:

Դանիել 7	Դանիել 8	Մեկնաբանություն
Առյուծ	———	Բաբելոն
Արջ	Խոյ	Մարապարսկաստան
Ինձ	Այծ	Հունաստան
Չորրորդ գազան Փոքր եղջյուր	——— Փոքր եղջյուր	Հռոմ (հեթանոսական) Հռոմ (պապական)
Դատ Գալուստից առաջ	Սրբարանի մաքրում	Քավության վախճանաբանական օր
Թագավորության փոխանցումը սուրբերին (Երկրորդ գալուստ)		Երկրորդ Գալուստ և հետագա իրադարձություններ

Այս շաբաթ մենք կուսումնասիրենք Դանիել 8-ը և կտեսնենք կապը հետաքննական դատի և սրբարանի արդարացման միջև: Մենք նաև կհասկանանք, թե ինչի է հանգեցնում փոքր եղջյուրի և Աստծո միջև հակամարտությունը:

Փոքր եղջյուրի գրոհը

Կարդացե՛ք Դանիել 8-ը: Առանձնահատուկ ուշադրություն դարձրեք 8.9-14 և 8.23-25 համարներին: Ինչի՞ դեմ է հանդես գալիս փոքր եղջյուրը: _____

Եղջյուրի զորությունը ընդդիմանում է Զորաց իշխանի երկրպագությանը (համար 11, համեմատե՛ք Հեսու 5.13-15 համարների հետ): Այն Նրանից խլում է ամենօրյա զոհը (Դանիել 8.11,12) (եբրայերեն՝ թամիդ). այս բառով նշանակված են երկրային սրբարանում ամենօրյա ծառայության զանազան տեսանկյունները՝ զոհաբերության ծառայությունը, խնկարկությունը և այլն: Քանի որ սրբարանում այդ ծառայությունն իրականացնում էր քահանան կամ քահանայապետը, եղջյուրը ձգտում էր զավթել նրանց դերը և վերացնել ամենօրյա զոհաբերությունը: Տվյալ դեպքում, հաշվի առնելով մարգարեական համատեքստը (պապական Հռոմի փուլում), ակնհայտ է, որ գրոհը ձեռնարկվում է Քրիստոսի քահանայապետական ծառայության դեմ:

Այսպիսով, փոքր եղջյուրը զավթում է Երկնային քահանայի գործառույթները և խոչընդոտում երկրի վրա Աստծուն անընդհատ երկրպագելու ծառայությանը: Եղջյուրը գործում է որպես կեղծ «զորաց իշխան»՝ կրոնական պատերազմ վարելով Աստվածային Զորաց իշխանի, Նրա Սրբարանի և Նրա ժողովրդի դեմ: Փոքր եղջյուրը դառնում է սատանայի երկրային զենքը: Ասված է, որ այդ ամենը կկատարվի «բայց ոչ թե նրա զորությամբ» (Դանիել 8.24): Այս բոլոր գործողություններն արտացոլում են տիեզերական պատերազմը, որ տեղի է ունենում երկու՝ երկրային և երկնային մակարդակներում:

Չորրորդ գազանը՝ ահեղ և սոսկալի (Դանիել 7.7), իրենից ներկայացնում է հեթանոսական Հռոմը, իսկ փոքր եղջյուրը, որը հաջորդում է խոյին (Մարապարսկաստան, Դանիել 8.20) և այծին (Հունաստան, Դանիել 8.21), աճել էր Հռոմեական կայսրության մարմնի վրա և իրենից ներկայացնում է պապական Հռոմը. սա է տեսիլքի գլխավոր առանցքը:

Ինչպես ասվել է վերը, ամենօրյա զոհը (թամիդ) ցույց է տալիս անընդմեջ ծառայությունը Երկնային սրբարանում: Եղջյուրի զավթած ամենօրյա զոհերը խորհրդանշում են Իշխան Քրիստոսից «Նրա անունը դավանող շրթունքների պտուղը» (Եբրայեցիս 13.15), այսինքն՝ շնորհակալության, փառաբանության և ապաշխարության աղոթքները խլելը այնպիսի պապական նորամուծությունների միջոցով, ինչպիսիք

են միջնորդ քահանայությունը, պատարագը (որը դիտարկվում է որպես Քրիստոսի Մարմնի և Արյան տառացի զոհաբերություն), խոստովանությունը քահանայի առջև, կույս Մարիամի երկրպագությունը: Այս ամենի միջոցով փոքր եղջյուրը փաստորեն մարդկությանը Երկնային Քահանայապետից՝ Քրիստոսից և Նրա բարեխոսական աղոթքից վերակողմնորոշում է դեպի երկրային, կենդանի մարդը:

Մեզանից ոչ մեկը պաշտպանված չէ սեփական անձը մինչև Աստծո մակարդակը բարձրացնելու վտանգից: Դա ինչպե՞ս կարող է դրսևորվել ձեր կյանքում (թեկուզ և շատ աննկատելի):

Երկուշաբթի *դեկտեմբերի 2*

«Մինչև ե՞րբ»

Երբ խոյն ու այծը մեծացան, իսկ հետո ընկան (Դանիել 8.4,7,8), այդ ժամանակ բարձրացավ եղջյուրի ուժը (Դանիել 8.9-11): Հետևաբար, հարց է ծագում. «Որքա՞ն ժամանակ է տևում այս տեսիլքը»:

Որոշակի ի՞նչ գործողություններից է առաջ գալիս Դանիել 8.13-ի հարցը: _____

_____

_____

_____

Սուրբ Գրքում «Մինչև ե՞րբ» հարցը միշտ հնչում է գործող իրադրության փոփոխության համատեքստում: Մենք այս հարցին հանդիպում ենք, երբ Աստված կամ Նրա մարգարեները դիմում են ժողովրդին (Ելից10.3, Թվոց 14.27, Գ Թագավորաց 18.21): Այս հարցը նաև Աստծուն տալիս է Նրա ժողովուրդը (Սաղմոս 94.3, Հայտնություն 6.10) և հրեշտակը (Զաքարիա 1.12): Սուրբի բացականչությունը՝ «Մինչև ե՞րբ» (Դանիել 8.13, 12.6) արտացոլում է ոչ միայն տառացի հարցը ժամանակի մասին, դա նաև տառապագին աղաղակ է երկարատև աղետի պատճառով, աղերս՝ փոփոխության մասին, Աստծո արդարադատության կոչ: Այս հարցն արտացոլում է այն սպասումը, որ ի վերջո Աստված հաղթանակ կտանի:

Ինչպես և Զաքարիա 1.13-ում, որտեղ Յահվեն հարցին պատասխանեց «բարի խոսքերով՝ մխիթարական խոսքերով», Դանիել 8.13-ում տրված հարցի պատասխանը գալիս է անհապաղ. «Երկու հազար երեք հարյուր իրիկուն-առավոտ, հետո սրբարանը պիտի արդարանա» (համար 14):

Եթե մենք գիտակցում ենք ժամանակակից մարդկության վիճակը և ներկայիս մարգարեական ժամանակը, ապա չենք կարող լռել: «Մինչև ե՞րբ» աղաղակը կրկին պետք է հնչի: Նայելով մեր աշխարհին՝ մի՞թե կարելի է զերծ մնալ աղերսանքից այն մասին, որ Տերը գա և նոր երկիր արարի, որում «արդարություն է բնակվում» (Բ Պետրոս 3.13): Թեև այսօր Աստված ծառայություն է կատարում, ինչպես և խոստացված է Դանիել 8.14-ում, մենք ծարավ ենք, որ Նա վերջ դնի Երկրի վրա չարի իշխանությանը, և Իր բազում խոստումների համաձայն՝ մարդուն վերադարձնի մեղանչման պատճառով կորսված ամեն բան:

Ի՞նչ իրավիճակներում եք դուք Աստծուն հարցնում՝ «Մինչև ե՞րբ»: Ձեզ ինչպե՞ս է հաջողվում չկորցնել հույսը, որ Աստված իսկապես կառավարում է ամեն բան, որքան էլ մեզ ներկա իրադրությունը մռայլ թվա, և անկախ այն բանից, թե «մինչև երբ» կշարունակվի այս իրավիճակը մինչ փոփոխությունների վրա հասնելը:

Երեքշաբթի ***դեկտեմբերի 3***

Սրբարանի արդարացումը

Կարդացե՛ք Դանիել 8.14-ը: Ի՞նչ է տեղի ունենում «երկու հազար երեք հարյուր իրիկուն-առավոտ» ժամանակահատվածն անցնելուց հետո: _____

_____

_____

_____

«Իրիկուն-առավոտ» արտահայտությունը ցույց է տալիս մեկ լրիվ օրը (Ծննդոց 1.5,8 և այլն): Այս փուլի ժամանակային չափումը մենք կկատարենք հինգշաբթի և ուրբաթ օրերի դասերում: Իսկ հիմա ուշադրություն դարձնենք Դանիել 8.14 համարի եզրաբանությանը:

Այս համարում տրված պատասխանը կարելի է կարդալ հետևյալ կերպ. «Մինչև երկու հազար երեք հարյուր իրիկուն-առավոտ [տարի], հետո սրբարանը կարդարանա»: «Արդարանալ» (եբրայերեն նիցդակ բառից) բառին զուգահեռ եզրույթների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն երեք հիմնական նշանակություն ունի. հարաբերական (ազգակցական) համատեքստում նշանակում է *վերականգնում* (Եսայիա 10.22), սրբարանի համատեքստում՝ *մաքրագործում* (Հոբ 4.17, 25.4), դատական համատեքստում՝ *արդարացում* (Հոբ 34.5): Այս նույն

բայը օգտագործվում է դատավարությանն Աստծո միջամտության համատեքստում, երբ արդարներին արդարացնում կամ արդար են հայտարարում (Գ Թագավորաց 8.32, Եսայիա 50.8): *Կոդեշ*՝ «սրբարան» բառը Դանիել 8.14-ում և «մաքրվել» բառը մեզ տանում են դեպի Ղևտացոց 16-րդ գլուխը, որտեղ նկարագրված է երկրային սրբարանի մաքրագործումը: *Կոդեշ* բառն այս համատեքստում օգտագործվում է «սրբարան» նշանակությամբ: Այդ պատճառով Դանիել 8.14-ում խոսքը վերաբերում է Երկնային սրբարանի մաքրագործմանը: Այս գործընթացը ենթադրում է, ինչպես մենք արդեն նշել ենք նախկինում, Աստծո ժողովրդի արդարացում: Ավելին, հետաքննական դատավարության ընթացքում արդարացվում է Աստծո բնավորությունը, կառավարությունը և Օրենքը:

Ի՞նչ կերպ է տեղի ունենալու սրբարանի մաքրագործումը: «Երկնային մաքրագործումը ներառում է մեղքի հեռացումը երկնային գրքերից կամ գրառումներից: Մեղավորը սուբյեկտիվորեն ներում է ստանում մեղքերի ամենօրյա ապաշխարության և խոստովանության միջոցով՝ փրկություն ձեռք բերելով Տիրոջում. օբյեկտիվորեն գրի առնված և ներված մեղքերը Երկնքում վերացվում են այն բանից հետո, երբ յուրաքանչյուր հավատավորի գործը ըստ խոստովանության կքննարկվի հետաքննական դատի ժամանակ» (ՅՕԱ աստվածաշնչյան մեկնություններ, հտ. 12, 606):

Այդպիսով, Սրբարանի մաքրագործումը, որի մասին խոսվում է Դանիել 8.14-ում, ներառում է բոլոր խնդիրների լուծումը, որոնք քննարկվել են ավելի վաղ բերված հարցի մեջ: Աստծո ժողովրդին և Աստծո սրբարանին կպարգևվի նրանց օրինական դիրքը: Աստծո բնավորությունը, Նրա կառավարումն ու Օրենքը կարդարացվեն: Այստեղ տեղին է զուգահեռ անցկացնել այն բանի հետ, ինչ տեղի էր ունենում հինկտակարանյան Քավության օրը (տե՛ս Ղևտացոց 16.20,30):

Մաքրագործման աշխատանքը, որ ցույց է տրված Դանիել 8-ում, նույնական է Աստծո դատաստանին, որը նկարագրված է Դանիել 7-ում, որտեղ դատը տեղի է ունենում հօգուտ արդարների, իսկ փոքր եղջյուրի ուժը դատապարտվում է:

Աշխարհը պետք է իմանա, որ գալու է դատի և արդարադատության ժամանակը, ինչպես նախօրոք ասվել է Դանիել 7.14-ում, և որ հիմա հասել է Հիսուսում մեզ պարգևված փրկությունն ընդունելու ժամանակը:

Կարդացե՛ք Հայտնություն 14.6,7-ը: Այս համարներն ինչպե՞ս են ուղղակիորեն կապված Դանիել 7-ի դատի և Դանիել 8-ի Սրբարանի մաքրագործման հետ:

Քավության օրը Դանիել 8-ում

Փոքր եղջյուրը իր գրոհն ուղղում է Աստծո երկնային սրբարանի և Աստծո ժողովրդի դեմ: Նրանց համար ի՞նչ է պատրաստում ապագան: Այդ մասին է նաև Դանիել 8.13-ի հարցը: Սակայն միայն Քավության օրը կարող է Սրբարանին և Աստծո ժողովրդին վերադարձնել նրանց օրինական դիրքը և այդպիսով Իր գործերում արդարացնել Աստծուն: Այդ պատճառով Դանիել 8.14-ի պատասխանը ենթադրում է Քավության օրը: Փաստացի նախակերպարային Քավության օրը միակ ծիսական օրն է, որ իր մեջ ներառում է կարևոր թեմաների նույնպիսի համադրություն, ինչ և Դանիել 8-ի տեսիլքի հանգուցալուծման մեջ՝ սրբարանի պատկերը, սրբարանի մաքրագործումը և դատը:

Դանիել 8-ից որոշ եզրույթներ ցույց են տալիս նաև դատը, որը տեղի էր ունենում Քավության օրը: Եղջյուրը գործում է ապստամբության ոգով (12-րդ համարը մեկ այլ թարգմանությամբ սկսվում է այսպես. «Ապստամբության պատճառով») (Դանիել 8.12,13): Այսպիսով, «ապստամբություն» եզրույթն առանձնահատուկ կերպով առանձնացված է Ղևտացոց 16.16,21-ում (ռուսերեն թարգմանության մեջ երկու անգամ կրկնվում է «հանցագործություն» բառը, բայց եբրայերեն «պէշա» բառը նշանակում է «խռովություն», «ապստամբություն»): Դա նշանակում է հանդուգն մեղք: «Համաձայն Դանիելի՝ Քավության վախճանաբանական օրվա ինչ-որ մի պահի փոքր եղջյուրի կողմից Մեսիայի քահանայական ծառայության պղծումն ավարտվում է, որովհետև եղջյուրը կոչնչացվի: Հին Կտակարանում սրբարանի նման պղծումը վերականգնվում էր մեղավորի ոչնչացմամբ, և ոչ թե զոհաբերական քավության միջոցով (Երեմիա 51.11, Եզեկիել 7.22, 25.3)... Խնդիրը լուծվում էր... մեղավորի մահվամբ: Դանիելը այդ նույն իրավաբանական սկզբունքը կիրառում է փոքր եղջյուրի անմաքուր իշխանության նկատմամբ» (ՅՕԱ աստվածաշնչյան մեկնություններ, հտ. 12, 293):

«Սրբարան» բառը (կոդեշ) Դանիել 8.14-ը կապակցում է Ղևտացոց 16-ի հետ: Սրբարանի մաքրագործումը, նրա վերադարձը նախկին վիճակին հիշեցնում է Քավության օրը, երբ սրբարանը մաքրվում է բոլոր մեղքերից (Ղևտացոց 16.16): Զոհաբերվող կենդանիների՝ խոյի և նոխազի առանձնահատուկ օգտագործումը, որոնք կիրառվում են Քավության օրվա համար (Ղևտացոց 16.5), ինչպես նաև՝ այծերի քոշի հիշատակումը (տե՛ս Դանիել 8.21), որոնք համապատասխանում են Քավության օրը

առկա երկու նոխազների նկարագրությանը, անկասկած, մատնացույց են անում այդ օրը:

Ինչպես որ քավության օրը Աստված հայտնում էր Իր գործերի և որոշումների արդարությունը՝ ներելով հավատարիմներին և դատապարտելով անհավատարիմներին ու հանդուգններին, այդպես էլ Քավության վախճանաբանական օրը կհաստատի արդարների փրկության և ուրացողների պատժի վերաբերյալ Աստծո որոշման արդարացիությունը:

Դանիել 8.14 համարը վկայում է այն մասին, որ անգամ այս բոլոր երկար դարերից հետո Տերը չի մոռացել Իր խոստումները, որ Ինքը պատժում է չարը և պարգևատրում է սուրբերին: Դուք ինչպե՞ս կարող եք, հատկապես՝ փորձությունների ժամանակ, վստահել այդ խոստումներին: Ի վերջո, ի՞նչ հույս մենք կունենայինք, եթե չլինեին այդ խոստումները:

Հինգշաբթի ***դեկտեմբերի 5***

Դանիելի գրքի ութերորդ և իններորդ գլուխները

«Տեսիլք» բառը (եբրայերեն՝ խազոն) Դանիել 8.13-ում հնչող հարցի մեջ վերաբերում է ողջ տեսիլքին, որ նկարագրված է Դանիել 8.3-11-ում (տե՛ս Դանիել 8.1,2,13,15), և ներառում է Մարապարսկաստանի թագավորության փուլը (խոյ), Հունաստանը (այծ) և պապական Հռոմը (փոքր եղջյուր): Քանի որ տեսիլքի տևողությունը նշանակված է «երկու հազար երեք հարյուր իրիկուն-առավոտ» ժամանակահատվածով, նշանակում է՝ այս փուլը սկսվում է Մարապարսկական թագավորության ժամանակից և տևում է մինչև ժամանակի վերջը: Համարը բազմիցս ընդգծում է, որ «տեսիլքը ժամանակի վերջի համար է» (Դանիել 8.17,19) և «տեսիլքը շատ օրերի համար է» (Դանիել 8.26): Բայց տառացի 2300 օրերը ոչ մի կերպ չեն կարող ընդգրկել տեսիլքի ժամանակահատվածը: Այդ պատճառով, հետևելով Եզեկիել 4.5-ում և Թվոց 14.34-ում գրի առնված սկզբունքին, մենք պետք է մարգարեական օրը մեկնաբանենք «օրը տարվա դիմաց» սկզբունքին համապատասխան, այսինքն՝ 2300 օրը 2300 տարի է:

Մնում է այն հարցը, թե երբ է սկսվում 2300 տարվա ժամանակահատվածը:

Աստվածաշնչի հետազոտողները՝ ինչպես հրեաները, այնպես էլ քրիստոնյաները, սերտ կապ են տեսնում Դանիել 8.14-ի և Դանիել 9.24-27-ի միջև: Երկար ժամանակ այս հատվածները դիտարկվում էին որպես

հզոր մարգարեություններ, որոնք մատնանշում են Մեսիայի՝ Հիսուսի Գալուստը:

Կարդացե՛ք Դանիել 9.24-27-ը: Ինչի՞ մասին են պատմում այս համարները: Դրանք ինչպե՞ս են կապված Դանիել 8.14-ի հետ: ___

_____

_____

Այն դեպքում, երբ «տեսիլք» բառը (խազոն) վերաբերում է ողջ Դանիել 8 մարգարեությանը, մեկ այլ բառ՝ «մարեհ», որը թարգմանված է որպես «տեսիլք», ցույց է տալիս «առավոտի և երեկոյի մասին տեսիլքը [մարեհ]» (Դանիել 8.26): 2300 օրվա մասին այս «մարեհը» Դանիելը չէր հասկանում (Դանիել 8.27): Մնացած ամեն ինչը բացատրեց հրեշտակը:

Մի քանի տարի անց նույն հրեշտակը Դանիելին հայտնվեց առանձնահատուկ լուրով, որպեսզի մարգարեն կարողանար հասկանալ «տեսիլքը» (մարեհ) 2300 օրվա մասին (Դանիել 9.23): 70 շաբաթների մասին մարգարեությունն այս համարներում օգնում է մեզ՝ հասկանալու Դանիել 8.14-ի մարգարեական ժամանակային տարրը: «Որոշված են» բայը (եբրայերեն «խատակ») Դանիել 9.24-ի սկզբում, որը կարելի է թարգմանել նաև որպես «առանձնացված են», կամ «կտրված են», առանձնահատուկ կերպով ցույց է տալիս այն, որ 70 շաբաթները կտրված են առավել երկար՝ 2300 օրվա փուլից, որոնց մասին խոսվում է Դանիել 8.14-ում: Սա մարգարեական ժամանակային փուլի հաշվարկման կետի բանալին է: (Վաղվա դասում այս հարցն առավել մանրամասնորեն կշարադրվի):

Ուրբաթ ***դեկտեմբերի 6***

Հետագա ուսումնասիրության համար

Էլեն Ուայթի «Մեծ պայքար» գրքից կարդացե՛ք «Ի՞նչ է սրբարանը» (409-422) և «Սուրբ Սրբոցում» (423-432) գլուխները:

Դանիել 9.24-27-ում 70 շաբաթվա սկիզբը նշանակված է «Երուսաղեմի վերականգնման մասին» հրամանի դուրս գալով (Դանիել 9.25): Եզրասի գիրքը հայտնում է Երուսաղեմի և տաճարի վերաբերյալ երեք հրամանագրերի մասին, բայց միայն երրորդ հրամանագիրը, որի մասին գրված է Եզրաս 7.12-26-ում, «հանդիսանում է կատարումը Դանիել 9.25-ում գրառվածի, քանի որ այստեղ հիշատակվում է ինչպես Երուսաղեմ քաղաքի կառուցումը, այնպես էլ տաճարի ծառայության վերականգնումը: Այդ հրամանով, որը լույս է տեսել Ք.ա. 457թ., պարսից

Արտաշես I թագավորը վերականգնեց Երուսաղեմի կրոնաքաղաքական ինքնավարությունը և ինքնակառավարումը՝ թույլ տալով կենդանիներ գնել և դրանք զոհաբերել (Եզրաս 7.17), ինչպես նաև՝ նշանակել դատավորներ, ովքեր գիտեին «քո Աստծո օրենքները» (համար 25): Այս հրամանով անգամ վերականգնվում էին բոլոր դատական իրավասությունները, որոնք կապված էին հանցագործների պատժի հետ՝ ներառյալ բանտարկությունը, գույքի բռնագրավումը, աքսորը և մահապատիժը» (ՅՕԱ աստվածաշնչյան մեկնություններ, հտ. 12, 602): Այսպիսով, այս հրամանը վերաբերում էր տաճարի վերակառուցմանը և Երուսաղեմի վերականգնմանը՝ որպես քաղաքական և վարչական կենտրոն (Եզրաս 7.25,26): Աստվածաշնչում միայն այս հրամանից հետո է, որ սկսում են Աստծուն շնորհակալություն հայտնել և փառաբանել այն բանի համար, որ Նա ազդել է թագավորի վրա (Եզրաս 7.27,28): Ավելին, միայն այն դեպքում, եթե մենք Ք.ա. 457 թվականը վերցնում ենք որպես հաշվարկի կետ, 70 շաբաթը (այսինքն՝ 490 տարին) հասնում են «Տեր Քրիստոսի» ժամանակին (Դանիել 9.25-27): Այսպիսով, 70 շաբաթվա մասին մարգարեությունը մեզ տալիս է 2300 երեկոյի և առավոտի ժամանակահատվածի ճշգրիտ սկիզբը: Այն սկսվում է Ք.ա. 457թ. և ավարտվում է 2300 տարի հետո՝ Ք.հ 1844 թվականին:



Հարցեր քննարկման համար

1. Եթե հնարավորություն կա, առավել մանրամասն բացատրեք և հետազոտեք սերտ կապը Դանիել 8.14-ի և Դանիել 9.24-27-ի միջև: Այդ փոխադարձ կապն ինչպե՞ս է վկայում Դանիել 8.14-ի և Դանիել 9.24-27-ի մարգարեությունների կարևորության մասին:
2. Էլեն Ուայթը գրում էր. «Սրբարանի և հետաքննական դատի մասին ճշմարտությունները Աստծո ժողովուրդը պետք է շատ պարզորոշ հասկանա: Բոլորը պետք է հստակ կերպով բացահայտեն իրենց համար, թե ինչով է զբաղված իրենց Քահանայապետը: Հակառակ դեպքում, մարդիկ մեր ժամանակներում հավատի կարիք չեն ունենա և չեն կարողանա զբաղեցնել այդ դիրքը, որ նրանց համար նախատեսված է Աստծուց» (Մեծ պայքար, 488): Ի՞նչ եք կարծում, ի՞նչ նկատի ուներ հեղինակը: Մեզ համար ինչո՞ւ է այդքան կարևոր այդ ճշմարտությունները հասկանալը:
3. Պատմելով փոքր եղջյուրի մասին՝ Դանիել 7 և 8-ի մարգարեությունները խոսում են բացառապես պապական Հռոմի և ուրիշ ոչ մի բանի մասին՝ ո՛չ կոմունիզմի (ինչպես ոմանք պնդում էին անցյալում), ո՛չ Իսլամի (ինչպես ոմանք պնդում են հիմա): Մենք ինչպե՞ս կարող ենք հավատարիմ մնալ այդ ուսմունքին՝ միևնույն ժամանակ չվիրավորելով այլ մարդկանց զգացմունքները: Մենք ինչո՞ւ պետք է ցույց տանք, որ խոսքը վերաբերում է համակարգին, և ոչ թե մարդկանց:

ՄԵՐ ՄԱՐԳԱՐԵԱԿԱՆ ԼՈՒՐԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Հայտնություն. 10, Դանիել 12.4-9, Հայտնություն 14, 11.17,18, Հայտնություն 13, Ծննդոց 7.11, 11.1-9, Երեմիա 50, 51:

Հիշելու համարը.

«Եվ տեսա մի ուրիշ հրեշտակ թռչելիս երկնքի մեջ, որ հավիտենական ավետիք ուներ, որ ավետարաներ երկրի վրա բնակվողներին, և ամեն ազգի, և ցեղի, և լեզվի, և ժողովրդի: Եվ մեծ ձայնով ասում էր. Վախեցեք Աստծուց և փառք տվեք Նրան, որովհետև Նրա դատաստանի ժամը եկավ, և երկրպագեցեք երկինքը և երկիրը և ծովը և ջրերի աղբյուրները Ստեղծողին» (Հայտնություն 14.6,7):

Դանիել 7 և 8-ի դատի մասին լուրը ուղղակիորեն կապված է Հայտնություն 12-14-ում նկարագրված մեծ պայքարի տեսարանի հետ: Այստեղ մենք գտնում ենք Երեք հրեշտակների պատգամը, որում բովանդակվում են արարման, դատի և Ավետարանի թեմաները (Հայտնություն 14.6-12): Այս համարներում գրի է առնված Աստծո եզրափակիչ հաստատակամ կոչը՝ նախապատրաստվել Հիսուսի Երկրորդ գալստյանը:

Առաջին հրեշտակի լուրն իսկապես «հավիտենական Ավետարան» է: Փրկության Բարի լուրը, որ քարոզում էին առաքյալները՝ մարդկանց կոչ անելով դարձի գալ կեղծ աստվածներից «դեպի կենդանի Աստվածը, որ ստեղծեց երկինքն ու երկիրը և ծովը և ամեն ինչ, ինչ որ նրանց մեջ է» (Գործք առաքելոց 14.14, համեմատե՛ք Գործք առաքելոց 4.24-ի հետ): Տվյալ լուրի կարևորությունն ընդգծում է նաև այն փաստը, որ «Ավետարան» բառը Հայտնություն գրքում հանդիպում է միայն այդ տեղում: Ինչ էլ որ մենք քարոզենք վերջին ժամանակների իրադարձությունների վերաբերյալ, պարտադիր պետք է «Ավետարանը» տեղադրենք մեր քարոզի կենտրոնում:

Հիասթափության ժամանակը

Կարդացե՛ք Հայտնություն 10-ը: Ո՞րն է բաց գրքով հրեշտակի լուրը: Ի՞նչ է նշանակում «կրկին քարոզել»: _____

_____

_____

_____

Հրեշտակի նկարագրությունը մեզ հիշեցնում է Քրիստոսի նկարագրությունը (Հայտնություն 1.13-16) և Դանիելի վերջին տեսիլքի Աստծուն նման մարդուն՝ կտավե հագուստով (Դանիել 10.5,6, 12.5-7), ինչը ենթադրում է, որ նրանք նույնական են: Դանիել 12.6,7-ում այրը «երդում արեց հավիտյանս կենդանի լինողով, թե մի ժամանակ, երկու ժամանակներ և կես, և երբոր վերջանա սուրբ ժողովրդի ձեռքի փշրվելը, այս ամենը պիտի կատարվի» (1260 տարի): Սա Դանիել 7.25-ում տրված հիմնական մարգարեության կրկնությունն է, որտեղ խոսվում է Աստծո ժողովրդի դեմ սոսկալի հալածանքների մասին:

Դանիել մարգարեի գիրքը պետք է կնքվեր մինչև վերջին ժամանակը: Հետո այն կբացվի, և շատերին հարկավոր է ստանալ նրանում թաքնված գիտելիքները (Դանիել 21.4-9): Երբ մարգարեությամբ գուշակված 1260 տարվա ժամանակահատվածն ավարտվեց, եկավ գիրքը բացելու ժամանակը՝ լրացուցիչ գիտելիքներ ստանալու համար: Սա խորհրդանշվում է Հայտնություն 10-ում հրեշտակի ձեռքին եղած բաց գրքով: Այդ ժամանակից ի վեր Դանիելի մարգարեությունները պետք է բացվեին առավել լիակատար ըմբռնման համար:

Միևնույն ժամանակ Հայտնություն 10-ը ցույց է տալիս, որ այդ փորձառությունը ամենևին էլ ամենահաճելիներից չի լինի: Հովհաննեսը կերավ գիրքը, ինչպես իրեն հրամայվել էր: Նրա բերանում այն քաղցր էր, բայց որովայնում դառը դուրս եկավ: Խորհրդանշորեն Հովհաննեսը ներկայացնում է այն ժողովուրդը, որ ուսումնասիրում էր Դանիել մարգարեի գիրքը: Այս մարգարեական նկարագրությունը, ինչպես մենք հավատում ենք, իրականացավ միլլերականների շարժման մեջ, որը ծագել է XIX դարի առաջին կեսին, երբ ամենուրեք հսկայական հետաքրքրություն էր դրսևորվում վերջին ժամանակների իրադարձությունների հանդեպ: Մարգարեությունը նկարագրում է նաև այն մարդկանց դառը հիասթափությունը, ովքեր համարում էին, որ նշանակված ժամանակին Քրիստոսը կվերադառնա՝ նրանց երկնային բնակարաններ վերցնելու

համար, բայց դա տեղի չունեցավ: Ի տարբերություն նրանց նախկին ըմբռնման, 2300 երեկոն և առավոտը ցույց են տալիս ոչ թե Քրիստոսի վերադարձը, այլ Դանիել 7-ի մեծ հետաքննական դատի սկիզբը: Աստծո զավակների դառը հիասթափությունը, որը կանխասված է Հայտնություն 10-ում, անտեղի չէր: Այն ծառայեց Աստծո նախախնամության ծրագրերին՝ ժողովրդին նախապատրաստել Աստծո հետ հանդիպմանը (Ամովս 4.12), նախապատրաստել վերջին շարժումը՝ Եղիայի ոգով, որը ողջ աշխարհը կբերի Քրիստոսի և հակաքրիստոսի միջև վերջնական ընտրության:

Անմիջապես դառը փորձառությունից հետո Հովհաննեսը լսում է հրամանը. «...մարգարեանաս ժողովուրդների և ազգերի և լեզուների և շատ թագավորների վրա» (Հայտնություն 10.11): Սա իր կատարումն է գտնում աշխարհին «հավիտենական Ավետարանի» ադվենտիստական քարոզի մեջ: Վերջին ժամանակների Աստծո ժողովրդի խնդիրն է՝ քարոզել վերջին ժամանակվա մասին եռակի լուրը (Հայտնություն 14.12): Այս մարդիկ նկարագրված են այն նույն գլխում, ինչ և «Աստծո պատվիրանները և Հիսուսի հավատքը պահողները» (համար 12), իսկ Հայտնություն 12.17-ում՝ որպես «կնոջ մյուս զավակները [Մնացորդ], որ Աստծո պատվիրանները պահում են և Հիսուսի [Քրիստոսի] վկայությունն ունեն»:

Քրիստոնյաներին ծանոթ է հիասթափության զգացումը, հատկապես՝ երբ նրանք սխալ են հասկանում այս կամ իրադարձությունը: Իրենց Ուսուցչի մահվան և հարության միջև ընկած ժամանակահատվածում աշակերտների ունեցած փորձառությունը լի էր հիասթափությամբ: Նման հիասթափության միջով անցան նաև միլլերականները 1844 թվականին: Ինչպե՞ս կարելի է անցնել հիասթափությունների միջով՝ չկորցնելով հավատը: Աստվածաշնչյան ո՞ր խոստումներն են ձեզ սատարում հիասթափության ժամանակ:

Երկուշաբթի *դեկտեմբերի 9*

«Վախեցե՛ք Աստծուց»

Առաջին հրեշտակի պատգամը մեզ կոչ է անում՝ վախենալ Աստծուց: Դա ի՞նչ է նշանակում: Տե՛ս Սաղմոս 34.7-22: _____

_____

_____

Այս համարներում վախը կարելի է դիտարկել որպես երկյուղ, որ դրսևորվում է հարգանքի, մեծարանքի և պատկառանքի ժամանակ: Հենց այդ վախին է մեր ուշադրությունը հրավիրում առաջին հրեշտակը: Աստծուց վախեցողները Նրան ճշմարտապես հավատացող մարդիկ են (Հայտնություն 11.18): Աստծուց վախենալ՝ նշանակում է փառք տալ Նրան (Հայտնություն 14.7), գովերգել Նրան (Հայտնություն 19.5), հնազանդվել Նրան (Հայտնություն 14.2) և փառավորել Նրա անունը (Հայտնություն 15.4): Առաջին հրեշտակի լուրն ընդգծում է, որ Աստծո վախի շնորհիվ մարդը Աստծուն ընդունում է որպես Դատավոր և Արարիչ և երկրպագում է Նրան: Առաջին հրեշտակը հռչակում է վերջին դատի վրա հասնելու մասին. սա այն լուրն է, որը սերտորեն կապված է Դանիել 7.9-14, 8.14-ում:

Մենք գիտենք, որ «Աստված սեր է», և ոչ մի բան այնպես չի բացահայտում այդ սերը, ինչպես խաչը: Մենք գիտենք նաև, որ Աստված սիրում է խաղաղությունը, և Նրան անասելի ցավ է պատճառում մեղքերի մեջ թաղված աշխարհին նայելը: Սիրո և արդարության Աստվածը հավիտենապես թույլ չի տալու, որ մեղքը մնա անպատիժ: «Սարսափելի բան է կենդանի Աստծո ձեռքն ընկնելը» (Եբրայեցիս 10.3): Մենք ինչպե՞ս կարող ենք ճիշտ հավասարակշռություն պահպանել մեր հանդեպ Աստծո սերը և չարի հանդեպ Նրա ցասումը հասկանալու համար, չարիք, որ այդքան վնաս է պատճառել:

Երեքշաբթի ***դեկտեմբերի 10***

«Նրա դատաստանի ժամը եկավ»

Կարդացե՛ք Հայտնություն 14.7-ը: Ի՞նչ դատի մասին է խոսվում այս համարում: _____

_____

_____

Համարում հիշատակված դատն սկսվում է նախքան Հայտնություն 14.14-20-ում նկարագրված Քրիստոսի վերադարձը: Սա նույն դատն է, որ նախորդում է Երկրորդ գալստյանը, որի մասին խոսվում է Դանիել 7-ում: Դատի սկիզբը, համաձայն 8.14-ի, տեղի է ունենում 1844 թվականին՝ համընկնելով Երեք հրեշտակների պատգամի հետ, որը մարդկանց կոչ է անում երկրպագել Աստծուն և երես դարձնել գազանից և նրա պատկերից: Այդ «պատկերն ի հայտ է գալիս միայն 42 մարգարեական

շաբաթներից կամ 1260 օրերից հետո, որոնք ավարտվեցին ՔՀ 1798թ. (Հայտնություն 13.3-5, 12-14):

Երբ հնչում է եզրափակիչ կոչը (Հայտնություն 14.6-12), շնորհի դուռը դեռևս բաց է, քանի որ մարդկանց դեռևս ուղղված է Բաբելոնից դուրս գալու և ճշմարիտ Աստծուն երկրպագելու կոչը:

Կարդացե՛ք Հայտնություն 14.7 և Դանիել 7.10-ը: Ի՞նչ զուգահեռներ կարելի է անցկացնել այս համարների միջև: _____

_____

_____

Դանիել 7-ի դատի («ատյանը նստեց, և գրքերը բացվեցին») և առաջին հրեշտակի պատգամի («Վախեցեք Աստվածանից և փառք տվեք Նրան, որ Նրա դատաստանի ժամը հասել է) միջև առկա այս զուգահեռի աստվածաբանական համատեքստը պարզ է և հստակ: Հրեշտակի լուրը հստակ կերպով խոսում է երկնային դատավարության սկզբի մասին: Այն հայտնում է ողջ երկրային ընտանիքին, որ Երկնքում արդեն սկսվել է հետաքննական դատը:

Չորեքշաբթի ***դեկտեմբերի 11***

«Երկրպագեք Ստեղծողին»

Հայտնություն գրքի կենտրոնական թեման երկրպագությունն է: Այն ժամանակ, երբ վիշապը, ծովից դուրս եկած գազանը և երկրից դուրս եկած գազանը (նրանց հաճախ անվանում են «կեղծ երրորդություն») միավորում են իրենց ուժերը՝ ողջ աշխարհին ստիպելու երկրպագել իրենց (Հայտնություն 13.4,8,12,15, 14.9,11), Աստված մարդկությանը կոչ է անում՝ երկրպագել Արարչին (Հայտնություն 14.7): «Գազանի պատկերին» չերկրպագողները իրենց ժամանակավոր կյանքը կորցնելու ռիսկին են ենթարկվում: (Հայտնություն 13.15, տե՛ս նաև Դանիել 3), բայց այդ պատկերին երկրպագողները կկորցնեն հավերժական կյանքը (Հայտնություն 14.9-11):

Ի՜նչ կարևոր երկընտրանք է կանգնած երկրի բնակիչներից յուրաքանչյուրի առջև:

Կարդացե՛ք Հայտնություն 14.12-ը: Այստեղ ի՞նչ է խոսվում եզրափակիչ հակամարտության մեջ Աստծո պատվիրանների դերի մասին: _____

_____

_____

Երկրպագությունն անխզելիորեն կապված է Աստծո պատվիրանների հետ: Հայտնություն 13 և 14-ում Տասը պատվիրաններին շատ ակնարկներ կան. «պատկեր» (Հայտնություն 13.14,15, 14.9,11), կռապաշտություն (Հայտնություն 13.4,8,12,15, 14.9,11), շաբաթ (Հայտնություն 14.7), սպանություն (Հայտնություն 13.10,15) և հոգևոր պոռնկություն (Հայտնություն 14.4,8): Վերջին պայքարը կբռնկվի «Աստծո և մարդկային պատվիրանների միջև» (Է. Ուայթ, Մարգարեներ և թագավորներ, 188):

Էվոլյուցիոն տեսության ի հայտ գալուց հետո մեզ համար հատկապես կարևոր է դարձել տառացի վեցօրյա արարման հանդեպ մեր հավատը պահպանելը և հաստատելը: Այդ ուսմունքը Աստծուն որպես մեր Արարիչ երկրպագելու հիմունքն է: Էվոլյուցիան, անգամ եթե հայտարարում է Աստվածաշնչի հանդեպ իր հավատի մասին (այսինքն՝ թեիստական էվոլյուցիան), շաբաթ օրը՝ շաբաթվա յոթերորդ օրը զրկում է իր բուն էությունից: Առանց վեցօրյա արարման «հավիտենական Ավետարանի» հավատը, այլ ուսմունքների հետ զուգահեռ, ինչպիսին է շաբաթը, կասկածի տակ են դրվում և անգամ հերքվում են:

Հայտնություն 14.7-ի արտահայտությունը, որն Աստծուն պատկերում է որպես Արարիչ և կոչ է անում երկրպագել «երկինքը, և երկիրը, և ծովն Ստեղծողին», ցույց է տալիս շաբաթ օրվա պատվիրանը (Ելից 20.11): Շաբաթը գտնվում է Աստծո պատվիրանների շուրջը ծագած հակամարտության կենտրոնում: Չորրորդ պատվիրանը, ինչպես ուրիշ ոչ մի պատվիրան երկրպագության առումով,ստուգում է մեր հավատարմությունը, որովհետև չի կարող հաստատվել մարդկային մտահանգումներով: Մենք շաբաթը պահում ենք միայն այն պատճառով, որ այդպես է հրամայել Աստված:

Շաբաթը առանձնահատուկ տեղ կզբաղեցնի Երկրի պատմության եզրափակիչ ճգնաժամի օրերին: Աշխարհի բոլոր բնակիչներին կպարտադրվի գազանի դրոշմը: Այդ դրոշմը հակադրվում է Աստծո կնիքին, որը, համաձայն Սուրբ Գրքի, շաբաթն է՝ շաբաթվա յոթերորդ օրը: Այնպես, ինչպես շաբաթը նշան էր հին հրեաների համար՝ ցույց տալով, որ նրանց Աստվածը Յահվեն է, այդպես էլ վերջին ժամանակի ճգնաժամի օրերին այն կլինի առ Աստված նրանց հավատարմության նշանը, ովքեր կատարում են Նրա *բոլոր* պատվիրանները:

Մեր՝ որպես Յոթերորդ օրվա ադվենտիստների հավատի հիմքը հենվում է այն ըմբռնման վրա, որ Տերը մեր Արարիչն է, և որ Աստվածաշնչում ոչինչ Աստծո արարչագործ զորության այնպիսի վառ ու հասկանալի վկայություն չէ, ինչպես շաբաթը: Որքանո՞վ

եք դուք լրջորեն վերաբերվում շաբաթին: Դուք ինչպե՞ս կարող եք ունենալ Տիրոջ հետ առավել խորը փորձառություն՝ այդ պատվիրանին հնազանդության միջոցով:

Հինգշաբթի ***դեկտեմբերի 12***

Սուրբերի համբերությունը

Հայտնություն գրքի երկրորդ և երրորդ հրեշտակների լուրերը նախազգուշացում են բոլորի համար, ովքեր ականջալուր չեն եղել առաջին հրեշտակի պատգամին: Եթե մարդիկ չթողնեն իրենց սխալ ճանապարհը, նրանց վրա կթափվեն վերջին յոթ պատուհասները, այսինքն՝ «Աստծո բարկության գինին» (Հայտնություն 14.10): Այդ գինին կթափվի բոլորի վրա, ովքեր մնացել են Բաբելոնում:

Աստվածաշնչում Բաբելոնը խորհրդանշում է ապստամբությունն Աստծո դեմ (Ծննդոց 11.1-9, Երեմիա 50, 51): Հայտնություն գրքում Բաբելոնը՝ ներկայացված պոռնիկ կնոջ կերպարով, խորհրդանշում է այն կրոնաքաղաքական ուժը, որն ընդդիմանում է Աստծուն և Նրա ժողովրդին, ինչպես նաև՝ ջանում է կառավարել աշխարհը: Հայտնություն 13.15-17-ում պատկերված է «Բաբելոնի ճգնաժամը», երբ Հայտնություն 13-ի դիվական ուժերը միավորում են իրենց զորությունը՝ հալածելու Աստծո մնացորդին: Այսպիսով, Բաբելոնը աշխարհի կաշառված քաղաքական ուժերի հետ վերջին ժամանակի ուրացող եկեղեցիների միավորման խորհրդանիշն է:

Երեք հրեշտակների լուրը Բաբելոնում գտնվող Աստծո հետևորդներին կոչ է անում դուրս գալ նրանից և միանալ վերջին ժամանակի Աստծո տեսանելի հավատարիմ մնացորդին (Հայտնություն 18.4,5): Այո՛, Բաբելոնում դեռևս կան Աստծո հավատարիմ զավակներ, և այդ մարդիկ պետք է լսեն վերջին ժամանակի ադվենտիստական լուրը (տե՛ս Հովհաննես 10.16):

Ինչպես մենք տեսանք երեկ, Հայտնություն 14.12 համարը հստակ կերպով պատկերում է Աստծո հավատարիմ մնացորդին: Սուրբերի աներերությունը կամ «համբերությունը» նշանակում է ոչ այնքան թշնամական գործողություններին պասիվ կերպով դիմանալը, որքան Քրիստոսին անդավաճան սպասելը: Հավատավորները ոչ միայն հետևում են պատվիրաններին, այլ նաև դրանք հռչակում են ի լուր աշխարհի:

«Հիսուսի հավատը» բառակապակցությունը կարող է ցույց տալ

հավատավորների մեջ «Հիսուսի հավատը», ինչպես նաև՝ հենց Հիսուսի հավատարմությունը, որը հավատավորներին անփոփոխ կերպով առաջնորդում է բոլոր հանգամանքների միջով: Երեք հրեշտակների պատգամի եզրափակիչ մասը մեր հայացքն ուղղում է Քրիստոսին: Նրա արժանիքների և հավատարմության շնորհիվ Աստծո ժողովուրդը կարող է պահել և հետևել Նրա պատվիրաններին: «Շատերը գրում են ինձ՝ հարցնելով, թե հավատով արդարացման լուրը արդյո՞ք Երեք հրեշտակների պատգամն է, և ես պատասխանում եմ. «Դա է Երեք հրեշտակների ճշմարիտ պատգամը» (Է. Ուայթ, Հատընտիր լուրեր, հտ. 1, 372):

Դուք ինչպե՞ս եք հասկանում Էլեն Ուայթի արտահայտությունն այն մասին, որ հավատով արդարացումը «Երեք հրեշտակների ճշմարիտ պատգամն է»: Այս արտահայտություն ինչպե՞ս է օգնում մեզ հասկանալ, թե ինչու փրկության հարցում առաջին հերթին և ամենից ավելի մեզ անհրաժեշտ է հենվել Հիսուսի և Նրա արժանիքների վրա՝ որպես մեծագույն հույսի, որը կօգնի մեզ անցնել վերջին ճգնաժամի միջով:

Ուրբաթ ***դեկտեմբերի 13***

Հետագա ուսումնասիրության համար

Տեսնելու համար, թե Երեք հրեշտակների պատգամն ինչպես էր հասկանում Էլեն Ուայթը, «Մեծ պայքար» գրքից կարդացե՛ք հետևյալ գլուխները. «Արշալույսի լրաբերները» (299-316), «Ամերիկացի բարեկորոգիչը» (317-342), «Լույս՝ խավարի մեջ» (343-354), «Կրոնական մեծ արթնացում» (355-374): Այս գլուխներում տեղ են գտել նյութեր առաջին հրեշտակի պատգամի մասին: Երկրորդ հրեշտակի պատգամի մասին նյութեր դուք կգտնեք նույն գլխի հետևյալ գլուխներում. «Կատարվող մարգարեություններ» (391-408), «Ի՞նչ է սրբարանը» (409-422), «Սուրբ Սրբոցում» (423-432): Երրորդ հրեշտակի պատգամի մասին կարող եք կարդալ «Աստծո Օրենքի անվախճանությունը» (433-450), «Բարեկորոգման գործը» (451-460) գլուխներում:

«Իրենց քրիստոնյա համարող բոլոր մարդկանցից Յոթերորդ օրվա ադվենտիստները պետք է առաջինը լինեն աշխարհի առջև Քրիստոսին հռչակելու մեջ: Երեք հրեշտակների պատգամի հռչակումը պահանջում է շաբաթվա մասին ճշմարտության շարադրումը: Այս ճշմարտությունը հարկավոր է հռչակել այդ պատգամը կազմող մյուս ճշմարտություն-

ներին զուգահեռ: Բայց միաժամանակ չի կարելի աչքաթող անել Քրիստոսին՝ ճգողության մեծագույն կենտրոնին: Հենց Քրիստոսի խաչի վրա են հանդիպում ողորմություն ու ճշմարտությունը, իսկ արդարությունն ու խաղաղությունը գրկախառնվում են: Մեղավորին անհրաժեշտ է դրդել՝ նայելու Գողգոթային. երեխայի պարզ հավատով նա պետք է վստահի Փրկչի արժանիքներին, ընդունի Նրա արդարությունն ու հավատա Նրա գթասրտությանը (Է. Ուայթ, Ավետարանի ծառայողներ, 156, 157):

Հարցեր քննարկման համար

1. Նախազգուշացումները կարևոր դեր են խաղում մեր հասարակության, միմյանց հետ մեր ամենօրյա փոխգործակցության մեջ: Մեծամասամբ դրանք ի բարին են ծառայում նախազգուշացվողների համար: Մենք ինչպե՞ս կարող ենք հռչակել Երեք հրեշտակների պատգամում բովանդակվող ահավոր զգուշացումներն այնպես, որ դրանք հայտնեն իրենց մեջ պարունակվող հույսը:
2. Ադվենտիզմում ոչինչ չի կարող կապված լինել էվոլյուցիայի հետ՝ որպես մեր հավատի նախադրյալ: Եթե վերաձևակերպենք ֆունդամենտալիստ-աթեիստի տեսակետը, ապա էվոլյուցիան «թթու» է, որը քայքայում է իր շուրջը եղած ամեն բան: Սա հատկապես վերաբերում է Հայտնություն 14-ի Երեք հրեշտակների պատգամին, որի կենտրոնական թեման հանդիսանում է արարումը և փրկագնումը՝ երկու ճշմարտություն, որոնք չեղյալ են հայտարարվել անգամ թեիստական էվոլյուցիայի կողմից: (Ո՞վ կցանկանար երկրպագել բնական ընտրության սկզբունքը, այսինքն՝ թույլերի ոչնչացումն արարման ժամանակ օգտագործած Աստծուն): Ինչո՞ւ մենք՝ որպես Եկեղեցի, երբեք չպետք է թույլ տանք, որ էվոլյուցիայի մասին կեղծ գիտությունը ներթափանցի մեր ուսմունքի մեջ:
3. Յոթերորդ օրվա ադվենտիստների եկեղեցու մեջ Հայտնություն 14-ի Երեք հրեշտակների պատգամը թանկարժեք «փարոս» է, որը աստվածային լուր է բովանդակում վերջին ժամանակի համար, և որը մենք կանչված ենք հռչակել: Թեև Եկեղեցու շատ անդամներ գիտեն այս լուրը, ոմանք կարող են հարցեր ունենալ դրա ճշմարիտ նշանակության վերաբերյալ: Դուք Աստծո վերջին լուրի իմաստն ու դրա հետևանքներն ինչպե՞ս համառոտ կբացատրեիք աշխարհին:
4. «Կյանքի հանդեպ առողջ մոտեցումը ներառում է վախի մի նշանակալի չափաբաժին»: Ի՞նչ եք կարծում, այս արտահայտությունը վերաբերո՞ւմ է քրիստոնեական կյանքին, թե՞ ոչ: Մեկնաբանե՛ք ձեր պատասխանը:

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Եզեկիել 28.12-17, Եսայիա 14.12-15, Հոբ 1.6-12, Զաքարիա 3.1-5, Ա Հովհաննես 4.10, Բ Տիմոթեոս 4.8, Եզեկիել 36.23-27:

Հիշելու համարը.

«Այո՛, Տեր Ասպված Ամենակալ, ճշմարիտ և արդար են քո դատաստանները» (Հայտնություն 16.7):

Յոթերորդ օրվա ադվենտիստները իրականությունն ընկալում են Քրիստոսի և սատանայի միջև մեծ պայքարի հայեցակարգի միջոցով: Եթե խոսելու լինենք փիլիսոփայության լեզվով, ապա դա մեծ, ամեն ինչ ընդգրկող պատմություն է, որն օգնում է մեզ բացատրել մեր աշխարհն ու նրանում տեղի ունեցող ամեն բան:

Ինչպես տեսնում ենք, սրբարանի թեման բազմիցս կրկնվում է և անցնում փրկության ողջ պատմության միջով. մարդկության փրկագնումը Հիսուսի մահվան միջոցով է: Սրբարանի ճիշտ ըմբռնվող լուրն օգնում է նաև ցույց տալ Աստծո բնավորության, Նրա կառավարման ու Նրա Օրենքների կատարելությունը, որոնց վրա սատանան հարձակումներ է գործում այն ժամանակից սկսած, երբ մեծ պայքարն առաջին անգամ բռնկվեց Երկնքում:

Այս շաբաթ մենք կուսումնասիրենք Քրիստոսի և սատանայի միջև տիեզերական հակամարտության որոշ կարևոր տեսանկյուններ, որոնք կբացահայտեն Աստծո մասին մեծագույն ճշմարտություններն ու կմերկացնեն սատանայի սուտը:

Երկնային էակի մեջ ծագած ապստամբությունը

Կարդացե՛ք Եզեկիել 28.12-17 և Եսայիա 14.12-15-ը: Այս համարներն ի՞նչ են հայտնում Արուսյակի վարքի մասին: _____

_____

_____

Առաջին հայացքից թվում է, թե Եզեկիել 28.12-ում խոսվում է միայն երկրային միապետի մասին: Սակայն որոշ տեսակետներ թույլ են տալիս ենթադրել, որ դա իսկապես վերաբերում է սատանային:

Ամենից առաջ, այդ էակի մասին ասված է. «Դու մի օծված քերովբե էիր ծածկող» (Եզեկիել 28.14): Սա մեզ վերադարձնում է երկրային սրբարանի Սուրբ Սրբոց, որտեղ երկու քերովբեներ ծածկում էին ուխտի տապանակը (Ելից 37.7-9): Օծված քերովբեն նաև քայլում էր կրակե քարերի մեջ, այսինքն՝ Աստծո սուրբ սարի վրա (Եզեկիել 28.14), և Աստծո այգու՝ Եդեմի կենտրոնում (Եզեկիել 28.13). երկու արտահայտություններն էլ ներկայացնում են սրբարանի կերպարը: Թանկարժեք քարերով զարդարված հանդերձի վրա մենք գտնում ենք քահանայապետի լանջապանակի վրա եղած տասներկու քարերից տասը (Ելից 39.10-14). սա նաև վկայակոչում է սրբարանը:

Քերովբեի անգերազանցելի վեհասքանչության նկարագրությունից հետո համարը խոսում է նրա բարոյական անկման մասին: Նա կլանվել էր իր սեփական փառքով: Գեղեցկությունը լցրել էր նրա սիրտը գոռոզամտությամբ, հիասքանչությունից մթագնել էր իմաստությունը, իսկ նրա «առևտուրը» (հնարավոր է՝ դա վերաբերում է Աստծո բնավորությանը չարախոսելուն և ապստամբություն հրահրելուն) նրան հասցրեց դատաստանի:

Երկրային ամբարիշտ ուժերը միշտ հարձակվել և հարձակվում են Երկնքի վրա, բայց Եսայիա 14.12-15-ում «արշալույսի որդին» (լատիներեն «lucifer», որից ծագել է Լյուցիֆեր անունը) շարժվում է մեկ այլ ուղղությամբ. նա Երկնքից ընկնում է Երկրի վրա, ինչը վկայում է նրա արտասովոր, ոչ երկրային ծագման մասին: Այլ արտահայտություններ, ինչպես «Աստծո աստղերից բարձր կդնեմ իմ աթոռը», «կնստեմ աստվածների ժողովի սարի վրա հյուսիսի ծայրերում» և «Բարձրյալին կմնանվեմ», ուժեղացնում են այն տպավորությունը, որ սա երկնային էակ է: Այն դեպքում, երբ 12 և 13 համարները ներկայացնում են անցյալ ժամանակը, 15 համարում ժամանակը հանկարծակի փոխվում է ապառ-

նիի: Ժամանակի այս փոփոխությունը ցույց է տալիս, որ սկզբում տեղի է ունեցել Երկնքից Երկիր ընկնելը (Եսայիա 14.12), իսկ ապագայում ինչ-որ ժամանակ տեղի է ունենալու երկրորդ անկումը՝ երկրից «Շեոլ» (գերեզման) (Եսայիա 14.15): Այդպիսի նկարագրությունը չէր կարող վերաբերել ոչ մի բաբելոնյան թագավորի, սա հստակ մատնացույց է անում Արուսյակին:

Կատարյալ էակը՝ արարված կատարյալ Աստծո կողմից, ընկնում է մեղքի մե՞ջ: Սա մեզ ի՞նչ է ասում Աստծո Տիեզերքում բարոյական ազատության իրական լինելու մասին: Այդ ազատությունը մեզ ի՞նչ է վկայում Աստծո կառավարման և Նրա բնավորության մասին:

Երկուշաբթի ***դեկտեմբերի 16***

Մեղադրանքներ

«Երկնքում սատանայի առաջ բերած երկպառակության մեջ նա մեղադրեց Աստծո Օրենքն ու կառավարումը: Նա հայտարարեց, թե ողջ չարիքը Աստծո առաջնորդության հետևանքն է, իսկ իր [սատանայի] միակ նպատակն է՝ կատարելագործել Եհովայի հրամանները... Նա բացահայտորեն հայտարարեց Արարչի Օրենքի հանդեպ իր արհամարհանքի մասին: Նա կրկնեց իր պնդումը, որ հրեշտակները ոչ մի վերահսկողության կարիք չունեն, այլ պետք է ղեկավարվեն սեփական կամքով, որն անխուսափելիորեն դրդելու է նրանց բարիք արարել: Նա հայտարարեց, որ Աստծո կանոնները սահմանափակում են նրանց ազատությունը և հարկավոր է ոչնչացնել Օրենքը, որպեսզի նրա կապանքներից ազատված երկնային զորքը կարողանա հասնել է՛լ ավելի բարձր ու փառավոր դիրքի» (Է. Ուայթ, Մեծ պայքար, 498, 499):

Ձեզ ի՞նչ են հիշեցնում ընկած հրեշտակի վերը բերված պնդումները: Դուք դրանց մեջ նմանություն չե՞ք գտնում ժամանակակից շատ երիտասարդների ձգտումների հետ: Տառապանքների և մահվան վեց հազար տարվա ողբերգական պատմությունն ինչպե՞ս է բացահայտում սատանայի սուտը:

Երկնքից ընկնելուց հետո սատանան շարունակում էր աղճատել և չարախոսել Աստծո բնավորությունը, Նրա Օրենքն ու կառավարումը: Նա դա անում էր Եդեմում (Ծննդոց 3.1-5)՝ երկրի վրա իր «սրբարանում»: Սատանան՝ երկնային սրբարանից եկած էակը, իր ապստամբությունը բերեց Եդեմի երկրային «սրբարան»: Օձի միջոցով խոսքի բռնվելով

Եվայի հետ՝ նա բացահայտորեն նրա գիտակցության մեջ սերմեց այն միտքը, թե Աստված նրանց զրկում է ինչ-որ լավ բանից, նրանցից պահում է ինչ-որ բան, որ պետք է իրենցը լիներ: Այդպիսով, թեև աննկատելի, նա Աստծո բնավորությունը ներկայացնում էր կեղծ լույսի ներքո:

Ադամի ու Եվայի անկումը ժամանակավորապես սատանային բարձրացրեց այս աշխարհի գահին: Քանի որ Ադամը իր իշխանությունը տվել էր նրա ձեռքը, սատանան՝ որպես մեր մոլորակի ներկայացուցիչ, որոշ ժամանակ մուտք ուներ երկնային սրահները (տե՛ս Հոբ 1.6,7, 2.1,2): Բայց այժմ՝ որպես «այս աշխարհի իշխանը» (Հովհաննես), որպես մեկը, ով իշխում է երկրի վրա, բայց չի տիրում նրան, գող է համարվում:

Կարդացե՛ք Հոբ 1.6-12-ը և Զաքարիա 3.1-5-ը: Այս տեքստերում ինչպե՞ս է բացահայտվում մեծ պայքարը: _____

_____

_____

Այս համարները մեզ թույլ են տալիս նայել մեծ պայքարի անտեսանելի կողմին: Սատանան Հոբի արդարությունը ներկայացնում է որպես սովորական շահամոլություն. եթե ես լավը լինեմ, Աստված կօրհնի ինձ: Այսինքն՝ Հոբն Աստծուն ծառայում է ոչ թե այն պատճառով, որ Նա արժանի է դրան, այլ նրա համար, որ դա բխում է Հոբի անձնական շահից: Հենց որ պարզ դառնա, որ Աստծուն ծառայությունը օրհնություններ չի բերում, Հոբը կթողնի իր հավատը:

Մեծ քահանա Հեսուի՝ Հովսեդեկի որդու (սրբարանի գաղափարը) և մյուս հավատավորների մասին (տե՛ս Հայտնություն 12.10) Էլեն Ուայթն ասում է, որ սատանան «մեղադրում է Աստծո զավակներին և ձգտում է նրանց գործը ներկայացնել որպես ինչքան հնարավոր է անհուսալի: Նա Տիրոջն է ներկայացնում նրանց արատավոր գործերը և թերությունները, նա մատնացույց է անում նրանց սխալներն ու անկումները» (Քրիստոսի առակները, 167):

Սակայն երկու դեպքերում էլ հիմնական հարցը Աստծո արդարացիությունն է: Բոլոր մեղադրանքների հետևում կանգնած է Աստծո գործողությունների արդարացիության հարցը, ստուգվում է Նրա բնավորությունը: Աստծո կողմից ազնի՞վ բան է մեղավորին փրկելը: Արդարացի՞ է Աստված, երբ նրանց արդար է հայտարարում: Եթե Նա արդարադատ է, նշանակում է՝ պետք է պատժի նրանց, եթե ողորմած է՝ պետք է ների նրանց: Աստված ինչպե՞ս կարող է Իր և Իր կառավարման մեջ համակցել և՛ մեկը, և՛ մյուսը:

«Մեծ պայքարի հենց սկզբից սատանան հայտարարեց, որ Աստծո Օրենքն անհնար է կատարել, որ արդարացիությունն անհամատեղելի

է գթասրտության հետ, և եթե Օրենքը խախտվել է, ապա մեղավորը չի կարող ներում ստանալ: Յուրաքանչյուր մեղք պետք է պատժվի, պնդում էր սատանան: Իսկ եթե Տերն սկսի ներել մեղքերը, Նա այլևս ճշմարտության և արդարության Աստված չի լինի: Երբ մարդիկ խախտում էին Աստծո Օրենքը... սատանան ցնծում էր: Նա հայտարարում էր. ահա՛ այն ապացույցը, որ Օրենքին հնարավոր չէ հնազանդվել, և մարդուն չի կարելի ներել» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 761):

Եթե Աստված միայն արդարության Աստված լիներ, ինչպիսի՞ն կլիներ մեր ճակատագիրը, և ինչո՞ւ էինք մենք արժանի այդպիսի ճակատագրի:

Երեքշաբթի ***դեկտեմբերի 17***

Արդարացումը խաչի վրա

Հենց սկզբից Աստված ոչ մի կասկած չէր թողնում այն մասին, որ Ինքը հերքելու է սատանայական մեղադրանքները և դրսևորելու է Իր կատարյալ սերն ու արդարությունը: Նրա արդարացիությունը պահանջում է, որ մարդկության մեղքերի համար պատիժ լինի: Նրա սերը մարդկության հետ փոխհարաբերությունների վերականգնման հնարավորություններ է որոնում: Աստված ինչպե՞ս կարող է դրսևորել և՛ մեկը, և՛ մյուսը:

Աստված ինչպե՞ս է դրսևորել Իր և՛ սերը, և՛ արդարացիությունը: Ա Հովհաննես 4.10, Հռոմեացիս 3.21-26: _____

_____

_____

_____

Աստծո սիրո և արդարության բնավորությունը լավագույնս բացահայտվեց Քրիստոսի մահվան մեջ: Աստված սիրում էր մեզ, այդ պատճառով Իր Որդուն ուղարկեց որպես զոհ մեր մեղքերի համար (Ա Հովհաննես 4.10, Հովհաննես 3.16): Իր վրա կրելով Օրենքի խախտման պատիժը՝ Տերը հայտնեց Իր արդարությունը. անհրաժեշտ էր բավարարել Օրենքի պահանջները, և դա տեղի ունեցավ, երբ Հիսուսը մահացավ մեր փոխարեն:

Միևնույն ժամանակ, այդ գործողությամբ Աստված նաև կարողացավ բացահայտել Իր շնորհն ու սերը, քանի որ Հիսուսի մահը փոխարինող էր: Նա մահացավ *հանուն մեզ*, մեր փոխարեն, որպեսզի հենց մենք ստիպված չլինենք մահանալ: Սա Ավետարանի զարմանահրաշ

պարգևն է. Աստված Ինքը կրեց այն պատիժը, որ պահանջում էր Նրա արդարությունն, ու որն Օրենքով պետք է բաժին ընկներ մեզ:

Հռոմեացիս 3.21-26 հատվածը աստվածաշնչյան մարգարիտ է, որը բացահայտում է Աստծո արդարադատությունը Հիսուս Քրիստոսի քավչարար մահվան մեջ: Քրիստոսի քավչարար մահը Աստծո արդարության դրսևորումն է. «Թո՛ղ Նա հայտնվի որպես արդար և արդարացնելով Հիսուսին հավատացողներին» (Հռոմեացիս 3.26, բառացի թարգմանություն):

Քրիստոսի մահը ներկայացված է երկրային սրբարանի նախակերպարներում: Նախորդ դասերում մենք խոսում էինք այն մասին, որ Քրիստոսի մահը կատարյալ փոխարինող զոհ է, քավության զոհ (Հռոմեացիս 3.25): Եզրափակելով՝ կարելի է ասել, որ և՛ Հին, և՛ Նոր Կտակարանը վկայում են, որ Քրիստոսի առաքելությունը պատկերավոր կերպով ներկայացված էր երկրային սրբարանի ծառայության մեջ:

«Կատարվող իրադարձություններին չթուլացող ուշադրությամբ հետևում էին չընկած հրեշտակները՝ սպասելով, թե երբ Եհովան վեր կկենա և երկրի երեսից կմաքրի նրա բնակիչներին... Բայց այս աշխարհը կործանելու փոխարեն՝ Աստված ուղարկեց Իր Որդուն, որպեսզի փրկի այն... Ամենաճգնաժամային պահին, երբ սատանան, թվում էր, պատրաստ էր ցնծալու, աշխարհ եկավ Աստծո Որդին՝ Աստվածային շնորհի մասին լուրով» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 37): Այս մեջբերումը մեզ ի՞նչ է ասում Աստծո բնավորության մասին:

Չորեքշաբթի ***դեկտեմբերի 18***

Արդարացումը դատի ժամանակ

Ինչպես վկայում է Սուրբ Գիրքը, Աստծո դատաստանը բարի լուր է նրանց համար, ովքեր հավատում են Տիրոջը, ապավինում են Նրան և հավատարիմ են Նրան՝ անգամ անտեսելով այն, որ «մենք ի վիճակի չենք պատասխանել մեր դեմ սատանայի առաջ քաշած մեղադրանքներին (Է. Ուայթ, Վկայություններ Եկեղեցու համար, հտ. 5, 472): Սակայն դատը կատարվում է ոչ միայն մեզ համար: Նրա նպատակն է նաև ողջ Տիեզերքի առջև Աստծո արդարացումը:

Դատի մասին վերը բերված համարներում ինչպե՞ս է ներկայացված Աստծո բնավորությունն ու Նրա կառավարումը: Սաղմոս 96.10,13, Հայտնություն 16.5,7, 19.2:

Աստծո բնավորությունը կբացահայտվի Նրա դատի ժամանակ: Այն, ինչ Աբրահամն արդեն հասկանում էր, ի վերջո կբացահայտվի ողջ մարդկությանը. «Մի՞թե բոլոր երկրի դատավորը արդարություն չի անի» (Ծննդոց 18.25): Դատի զանազան գործառույթները, երբ բացված գրքերում գրի առնվածների հիման վրա քննություն է տեղի ունենալու, անհրաժեշտ են, որպեսզի հրեշտակները և երկնաբնակները (դատը Երկրորդ գալուստից առաջ), ինչպես նաև՝ արդարները (դատը հազարամյա թագավորության ժամանակ) կարողանան լիովին համոզվել մարդկության հանդեպ Աստծո արդարացիության, ինչպես նաև՝ Նրա ողորմածության մեջ, որը դրսևորվում է յուրաքանչյուր առանձին դեպքում:

Կարդացե՛ք Փիլիպեցիս 2.5-11-ը: Ի՞նչ զարմանահրաշ իրադարձություն է պատկերված այս տեքստերում: _____

_____

_____

_____

_____

9-11 համարները կանխագուշակում են Քրիստոսի մեծարումը: Երկու հիմնական գործողություններ արտահայտում են միևնույն միտքը. Հիսուսը Տերն է, և ողջ արարչագործությունը Նրան ընդունում է որպես Տեր: Առաջին գործողություն. Հիսուսի առջև «ամեն ծունկ» կծալվի (համար 10): «Ծնկները ծալելը» ավանդական դարձվածք է, որը ցույց է տալիս ինչ-որ մեկի իշխանությունն ընդունելը: Այստեղ այն ցույց է տալիս, որ Քրիստոսին կմեծարեն, որովհետև կընդունեն Նրա գերագույն իշխանությունը: Մեծարանքի մասշտաբները համընդհանուր են. «ամեն ծունկ երկնավորների և երկրավորների և երկրի տակ լինողների»՝ այստեղ մտնում է ամեն կենդանի բանական էակ՝ և՛ երկնաբնակները, և՛ երկրաբնակները: Դատելով ամեն ինչից՝ երկրպագողների թիվը չի սահմանափակվում միայն փրկվածներով: Յուրաքանչյուրը կընդունի Նրա տիրակալությունը, անգամ ամբարիշտները:

Երկրորդ գործողություն. յուրաքանչյուրը կխոստովանի, որ «Հիսուս Քրիստոսը Տեր է» (համար 11): Ի վերջո, ամենքը կընդունեն Աստծո արդարությունը՝ Քրիստոսին մեծարելով որպես Տիրոջ: Այսպիսով, ողջ արարչագործությունն ընդունում է, որ Աստծո բնավորությունը, Նրա Օրենքն ու կառավարումը, որոնց շուրջ բռնկվել էր մեծ պայքարը, ճիշտ են և արդար: Անգամ սատանան՝ Քրիստոսի երդվյալ թշնամին, ընդունում է Աստծո արդարությունը և խոնարհվում է Քրիստոսի մեծության առջև (տե՛ս Է. Ուայթ, Մեծ պայքար, 670, 671):

Տիեզերական տեսարան

Աստծո՝ Նրա բնավորության, կառավարման և Օրենքի արդարացման գագաթնակետը, հանգուցալուծումը, խաչն է: «Սատանան տեսավ, որ իր դիմակը պատռված է: Նրա բոլոր գործերը բացվեցին ընկած հրեշտակների և բոլոր աշխարհների առջև: Նա իր դեմքը ցույց տվեց որպես մարդասպան: Թափելով Աստծո Որդու արյունը՝ նա զրկվեց երկնային էակների կարեկցանքից, և այդ ժամանակից նրա գործունեությունը սահմանափակվեց... Իր կյանքով ու մահվամբ Քրիստոսն ապացուցեց, որ Աստծո արդարությունը չի ոչնչացնում գթասրտությունը, որ մեղքը կարող է ներվել, որ Օրենքն արդար է և այն կարելի է կատարել լիակատար կերպով: Աստված մարդկությանը տվել է Իր սիրո ապացույցը (Է. Ուայթ, Դարերի փափագը, 761, 762):

Սակայն այսօր գոյություն ունի Տիեզերքի չթուլացող ուշադրության և դիտարկման ևս մեկ օբյեկտ: Քրիստոսի նորկտակարանյան հետևորդները անվանված են «աշխարհի տեսարան… հրեշտակների՛ էլ, մարդկա՛նց էլ» (Ա Կորնթացիս 4.9): Սա նշանակում է, որ մեր կյանքը տեսնում են ոչ միայն մարդիկ, այլև երկնային էակները: Ի՞նչ վկայություն ենք մենք տանում: Մեր կյանքի միջոցով մենք կարող ենք «իշխանություններին և պետություններին երկնավորներում» հայտնի դարձնել Աստծո բազմատեսակ իմաստությունը: Մյուս կողմից, մեր կյանքը կարող է փառազրկել և անպատվել Տիրոջ անունը, Ում մենք ծառայում ենք և Ում դավանում ենք:

Կարդացե՛ք Եզեկիել 36.23-27-ը: Աստված ինչպե՞ս էր մտադիր արդարացնել Իր անունը հին Իսրայելում: _____

_____

_____

_____

Սա Նոր ուխտի վերաբերյալ դասական հատվածներից մեկն է: Աստված ցանկանում է դրամատիկ վերափոխում իրագործել Իր ժողովրդի մեջ: Նա մաքրում է նրանց (համար 25), նրանց նոր սիրտ և նոր հոգի է տալիս (համար 26), որպեսզի նրանք դառնան Աստծո պատվիրանները պահող սուրբ ժողովուրդ: Աստծո նպատակը հավատավորների արդարացումն ու սրբացումն է, այդ պատճառով նրանք իրենց կյանքով պատվելու են Աստծուն այն բանի համար, թե Ով է Նա և ինչ է անում (համար 23):

Լեռան քարոզում Հիսուսը զարմանալի բառեր է ասում. «Այսպես լուսավորի ձեր լույսը մարդկանց առջև, որ ձեր բարի գործերը տեսնեն, և փառավորեն ձեր Հորը որ երկնքում է» (Մատթեոս 5.16): Այս խոսքերում Նա բացահայտում է մի սկզբունք, որը (թեև հաճախ այն թերագնահատում են) նկատվում է Աստվածաշնչում: Այն ցույց է տալիս, թե ինչպես, լինելով Քրիստոսի հետևորդը, մենք նույնպես կարող ենք մեր գործողություններով Աստծուն փառք կամ անպատվություն բերել:

Ձեր կյանքն ի՞նչ տեսարան է ներկայացնում ինչպես շրջապատող մարդկանց, այնպես էլ հրեշտակներին: Ձեր կյանքով փառավորվո՞ւմ է Աստված, թե՞ այնտեղ ցնծում է սատանան, հատկապես՝ երբ դուք ձեզ համարում եք Հիսուսի հետևորդներ:

Որբաթ ***դեկտեմբերի 20***

Հետագա ուսումնասիրության համար

Է. Ուայթի «Նահապետներ և մարգարեներ» գրքից կարդացե՛ք «Ինչո՞ւ թույլ տրվեց մեղքը» (33-43), «Վկայություններ Եկեղեցու համար» գրքից՝ «Քրիստոսում բացահայտված Աստծո բնավորությունը» (հտ. 5, 737-746):

«Որովհետև աշխարհում հայտնվեց Նա, Ով Հոր կատարյալ ներկայացուցիչն էր, Նա, Ում բնավորությունն ու կյանքը հերքում էին Աստծո մասին սատանայական ստահոդ հերյուրանքները: Սատանան Աստծուն վերագրում էր հատկանիշներ, որ ուներ ինքը: Իսկ այժմ Քրիստոսում սատանան տեսավ Աստծո իսկական բնավորությունը՝ կարեկից, ողորմած Հորը, Ով չի ցանկանում, որ որևէ մեկը կործանվի, այլ որպեսզի ամենքը ապաշխարությամբ գան Իր մոտ և հավիտենական կյանք ձեռք բերեն» (Է. Ուայթ, Հատընտիր լուրեր, հտ. 1, 254):

«Քրիստոսի այդքան աղոտ ըմբռնվող, այդքան թույլ գիտակցվող առաքելությունը, որը կանչեց Նրան աստվածային գահից դեպի Գողգոթայի խաչի զոհասեղան, ավելի ու ավելի կբացի գիտակցությունը. ակներև կդառնա, որ Քրիստոսի զոհի մեջ թաքնված է սիրո ցանկացած այլ առաքելության աղբյուրն ու հիմքը» (Է. Ուայթ, Երկնային բնակարաններում, 319):

Հարցեր քննարկման համար.

1. Խորհեցե՛ք այն գաղափարի մասին, որ մեծ պայքարի ավարտին Տիեզերքի ամեն բանական էակ, ներառյալ սատանան և

ամբարիշտները, կընդունի Աստծո և մեղքի ու ապստամբության հանդեպ Նրա գործողությունների արդարամտությունը, ազնվությունն ու արդարությունը: Թեև մեզ համար հեշտ չէ ըմբռնել տվյալ հայեցակարգը, այն մեզ ի՞նչ է ասում Աստծո բնավորության, բարոյական ազատության իրական բնույթի, ինչպես նաև՝ Աստծո Տիեզերքում ազատության սրբության և կարևորության մասին:

2. Շատ քրիստոնյաներ հերքում են սատանայի գոյությունը՝ դիտարկելով այն որպես նախապաշարմունք, որին հավատում էին պարզունակ մարդիկ, ովքեր ջանում էին բացատրել աշխարհի չարիքն ու տառապանքները: Խորհեցե՛ք այն մասին, թե որքան մեծ է այս մոլորությունը: Դժվար է պատկերացնել, թե ինչպիսին պետք է լինի քրիստոնեությունը, որպեսզի հերքի այնպիսի մի ուժի իրական լինելը, որն այդքան հաճախ է պատկերված Աստվածաշնչում, հատկապես՝ Նոր Կտակարանում: Սա մեզ ի՞նչ է ասում այն մասին, թե որքան են որոշ եկեղեցիներ ենթարկվում պոստմոդեռնիզմի և աշխարհիկացման ազդեցությանը: Մենք՝ Յոթերորդ օրվա ադվենտիստներս, ի՞նչ կարող ենք սովորել ուրիշների սխալներից, որպեսզի չդառնանք նույն խաբեության զոհը: Կարելի՞ է առհասարակ խոսել մեծ պայքարի մասին՝ ժխտելով սատանայի գոյությունը:

ՔԱՐՈՋ ՍՐԲԱՐԱՆԻՑ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Եբրայեցիս 10.19-25, Եբրայեցիս 4.16, Ելից 24.8, Հակոբոս 4.7,8, Հովհաննես 13.34:

Հիշելու համարը.

«Եվ մի մեծ քահանա՝ Աստծո տան վրա. Ապա թող մոտենանք Նրան ճշմարիտ սրտով, հավատքի լրությամբ, մեր սրտերը մաքրված չար խղճմտանքից և մեր մարմինը լվացված սուրբ ջրով» (Եբրայեցիս 10.21,22):

Եբրայեցիներին հղված ուղերձում քրիստոնեական հավատի մասին հատվածները հերթագայվում են քրիստոնեական կյանքին վերաբերող հատվածներով: Այլ խոսքերով, աստվածաբանությունը գործնական նշանակություն ունի: Հավատը տանում է հավատքով կյանքի: Պատկերելով Քրիստոսի վեհ կերպարը՝ որպես մեր Ջոհ և մեր Քահանայապետ (Եբրայեցիս 7.1-10.18), ուղերձի հեղինակը հավատավորներին դրդում և հորդորում է ապրել այդ ճշմարտությունների համաձայն: Այդ հորդորը հատկապես ցայտուն է արտահայտված Եբրայեցիս 10.19-25-ում:

Հունարեն այս հատվածը մի երկար, բարդ նախադասություն է: Այն ներառում է երկու հիմնական փաստ, որոնք տանում են երեք կոչերի, որոնցից յուրաքանչյուրն սկսվում է «եկեք» բառով և բովանդակում է արդեն ծանոթ շղթան՝ հույս – հավատ – սեր: «Եկեք» բառով սկսվող հատվածներից յուրաքանչյուրը նաև բացահայտում է քրիստոնեական հավատի ևս մեկ տեսանկյուն:

Այս շաբաթ մենք կուսումնասիրենք Եբրայեցիս 10.19-25-ը և տվյալ հատվածի՝ քրիստոնեական կյանքին վերաբերող գործնական հորդորները:

Մուտք Երկնային սրբարան

Կարդացե՛ք Եբրայեցիս 4.16, 6.18-20 և 10.19-21-ը: Դեպի ի՞նչը մուտք ունեն հավատավորները, և դա ի՞նչ է նշանակում մեզ համար: Ի՞նչ հույս է ներկայացված համարներում և, որ ավելի կարևոր է, ի՞նչ ազդեցություն պետք է թողնի այդ հույսը մեր կյանքի և մեր հավատի վրա: _____

_____

Հավատավորները հոգևոր մուտք ունեն դեպի Երկնային սրբարան՝ դեպի Աստծո բուն գահը: Մենք կարող ենք ձգտել մոտենալ Աստծուն, քանի որ այդ հասանելիությունը հնարավոր է դարձել Քրիստոսի արյան և հանուն մեզ Նրա քահանայապետական ծառայության շնորհիվ: Տեքստերը մեզ վստահեցնում են, որ մեր հոգու համար հույս կա՝ Հիսուս Քրիստոսը, Ով գտնվում է Աստծո ներկայության մեջ (Եբրայեցիս 4.14-16, 6.18-20): Մեզ համար երաշխիք է այն, որ Քրիստոսը կատարյալ մուտք ստացավ Աստծո մոտ այն բանից հետո, երբ դարձավ մեր երկնային Քահանայապետը (Եբրայեցիս 6.20): Քրիստոսն օծման ժամանակ նստեց երկնային գահի վրա: Այս կերպարը վկայում է Նրա թագավորական կարգավիճակի մասին (Հայտնություն 3.21):

Մեզ համար բարի լուրն այն է, որ մեր Ներկայացուցիչը գտնվում է Հոր ներկայության մեջ: Հանուն մեզ ծառայություն է կատարում ոչ երկրային, սովորական քահանան, ով ինքը մեղավոր է: Մենք ունենք լավագույն Քահանայապետը: Ոչինչ Հորը չի բաժանում Որդուց: Քրիստոսը կատարյալ է ու անմեղ, այդ պատճառով կարիք չկա վարագույրի, որ Աստծո սրբությունը կբաժաներ Հիսուսից՝ մեր Քահանայապետից (Եբրայեցիս 10.20):

«Ինչպե՞ս հասկանանք «բարեխոսություն» բառը: Սա ոսկե շղթա է, որը թույլ մարդուն միավորում է անսահման Աստծո գահի հետ: Մարդու խնդրանքը, ում համար մահացել է Քրիստոսը, Աստծո մոտ է բարձրանում Հիսուս Քրիստոսի միջոցով, Ով նրան փրկել է Իր սեփական արյամբ: Մեր Մեծն Քահանայապետն Իր արդարությունը համարում է անկեղծ խնդրողինը, և Քրիստոսի աղոթքը միավորվում է մարդու աղոթքին» (Է. Ուայթ, Որ ես ճանաչեմ Նրան, 78):

Մենք վստահ ենք, որ կարող ենք սերտ փոխհարաբերություն ունենալ Հոր հետ՝ բացառապես այն բանի շնորհիվ, ինչ հանուն մեզ կատարել և կատարում է Հիսուսը:

Ի՞նչ է նշանակում մեզ համար Հիսուսի բարեխոսությունը Երկնային սրբարանում: Մեզ ինչո՞ւ է այդքան անհրաժեշտ այդ բարեխոսությունը:

Երկուշաբթի *դեկտեմբերի 23*

Մաքրագործված և անկեղծ

Կարդացե՛ք Եբրայեցիս 10.22-ը: Երկնային սրբարանում Աստծուն մոտենալու ի՞նչ պայմաններ են բերվում համարում: _____

_____

Ըստ այս համարի՝ Աստծուն մոտենալիս հավատացյալները պետք է չորս պայման կատարեն.

Մոտենալ անկեղծ սրտով: Սիրտը Սուրբ Գրքում կարող է նշանակել և՛ մեր ներքին էությունը, և՛ մեր մտքերը, դրդապատճառները, հույզերը, կամքն ու բնավորությունը: Աստված ցանկանում է, որ մենք անկեղծ լինենք: Սակայն սիրտը կարող է անկեղծ դառնալ միայն այն դեպքում, եթե այն մաքրված է: Սա նշանակում է, որ մենք ձգտում ենք արտացոլել Քրիստոսի բնավորությունը:

Գալ կատարյալ հավատով: Ինչպես տեսանք միաշաբթի օրվա դասում, մենք պատճառ չունենք կասկածելու, որ մուտք կունենանք դեպի Աստված:

«Մեր սրտերը մաքրված չար խղճմտանքից»: «Սրտի մաքրում» արտահայտությունը համապատասխանում է սրբարանի լեզվին, քանի որ ցույց է տալիս մարդկանց արյամբ ցողելը, երբ խորանը գտնվում էր անապատում (Ելից 24.8, Ղևտացոց 8.23,24, Եբրայեցիս 9.19): Եվ այն անձինք, ովքեր այդ ձևով ցողվել և հատուկ հանդերձներ էին հագել, նվիրաբերվում էին առանձնահատուկ ծառայության համար (տե՛ս Ղևտացոց 8.30): Այս ծեսը մարդկանց ծիսականորեն մաքուր էր դարձնում, բայց չէր կարող մաքրել նրանց խիղճը (Եբրայեցիս 9.9,13): Սակայն Երկնքի ճշմարիտ Խորանում տեղի ունեցող մաքրագործումը խղճի մաքրումն է Քրիստոսի արյամբ (Եբրայեցիս 9.14): Այդպիսի մաքրագործումը խորհրդանշում է ապաշխարած մեղավորի արդարացումը: Մեր խիղճը դառնում է մաքուր, որովհետև մենք ներված ենք:

Գալ՝ մեր մարմինը լվացած սուրբ ջրով: Սա քրիստոնեական մկրտության ակնարկ է, բայց տվյալ արտահայտությունը նաև այլ իմաստ ունի. մաքրում «ջրի ավազանով՝ խոսքով» (Եփեսացիս 5.26), այսինքն՝ Աստվածաշնչի ուսումնասիրության միջոցով և նրա սկզբունք-

ները մեր կյանքում կիրառելով:

Հակոբոս 4.7,8 համարներում հեղինակն իր ընթերցողներին կոչ է անում՝ թողնել անվճռական, երկակի դիրքորոշումը: Ակնհայտ է, որ նրանք որոշակիորեն կորցրել են նպատակաուղղվածությունն ու անկեղծ վերաբերմունքն Աստծո հանդեպ: Նրանք փոխզիջման են գնացել և իրական վտանգի մեջ են: Հակոբոսն օգտագործում է սրբարանում մաքրության հետ կապված լեզուն: Սա իսկապես սրբարանի հայեցակարգն է, որը պնդում է, թե հնարավոր է մտնել Աստծո ներկայության մեջ միայն այն ժամանակ, երբ տեղի ունի մաքրագործումը:

Մենք գիտենք, որ միայն Աստված կարող է մաքրել մեր սրտերը: Մենք ի՞նչ դժվարին որոշումներ պետք է ընդունենք, որպեսզի Տիրոջը թույլ տանք մեր կյանքում կատարել շնորհի գործը:

Երեքշաբթի ***դեկտեմբերի 24***

Հավատ. խիզախություն ունեցեք

Կարդացե՛ք Եբրայեցիս 10.19-25-ը: Այս հատվածում կրկին ու կրկին մեկ թեմա է հնչում՝ խիզախությունը: Հունարեն «խիզախություն» բառը (Եբրայեցիս 10.19) ցույց է տալիս քաջություն, համարձակություն, արիություն, անվախություն, հաստատ ապավինում: Նոր Կտակարանում այն արտացոլում է Աստծո հետ մեր նոր փոխհարաբերությունները:

Ի սկզբանե այս բառը ցույց էր տալիս խոսքի անկեղծությունը, ինչը տվյալ համատեքստում կարող է նշանակել աղոթքի մեջ ազատորեն մոտենալ Աստծուն: Այդպիսի անկեղծությունը Աստծո հետ փոխհարաբերություններում մեր մեջ ցնծագին ապավինում է առաջ բերում: Մեր ապավինման պատճառն ու նպատակն այն է, որ Երկնքում ունենք Քահանայապետ, Ում միջոցով կարող ենք գտնվել Աստծո ներկայության մեջ: Այդ մուտքը ոչնչով սահմանափակված չէ, ոչնչով ծածկված չէ, եթե ոչ միայն մեզանով և մեր սխալ որոշումներով: Մենք Երկնային սրբարան մուտք գործելու իրավեր ունենք:

Որտեղի՞ց է բխում այսպիսի խիզախությունը: Սա մեր ջանքերի արդյունքը չէ, այլ կրկին այն բանի գիտակցումը, որ Հիսուսի արյունը մեզ համար բացեց մուտքը դեպի Աստծո ներկայությունը:

Եբրայեցիս թղթում այլ համարներ էլ են գրված, որոնք խոսում են ապավինության, հաստատունության և խիզախության մասին՝ Եբրայեցիս 3.6,14, 4.16, 60.11, 11.1 և այլն: _____

_____

Ապավինումն ու խիզախությունը բխում են ոչ թե հենց մեզնից, այլ Քրիստոսից: Դրանք կախված են ոչ թե այն բանից, թե ով ենք մենք, այլ նրանից, թե Ով է մեր Բարեխոսը: Հետաքրքրական է նշել, որ հավատավորը պետք է Աստծուն մոտենա «լիակշիռ հավատով», «հավատքի լրությամբ» (Եբրայեցիս 6.11, բառացի թարգմանություն, 10.22): Հասկանալի է, որ Հիսուսի մահվամբ ընդմիշտ բացված նոր ուղին անխուսափելիորեն կբերի կատարյալ հավատի:

Քրիստոնեական խիզախություն ձեռք բերելու և հավատը պահպանելու երկու ճանապարհ կա: Մեկն անցնում է հենց հավատի միջով (Եփեսացիս 3.12), մյուսը՝ շրջապատողների նկատմամբ բարեխիղճ քրիստոնեական վերաբերմունքի ծառայության միջոցով (Ա Տիմոթեոս 3.13): Երկու տեսանկյունն էլ կարևոր և անհրաժեշտ են: Եվ Եբրայեցիս թղթում անփոփոխ հավատն ու քրիստոնեության գործնական կիրառումը գնում են ձեռք ձեռքի տված: Քրիստոնեական կյանքը երբեք չի առանձնացվում քրիստոնեական հավատից:

Կյանքի ո՞ր հանգամանքներն են թուլացնում ձեր մեջ Աստծուն ապավինելը և ձեր վերաբերյալ Աստծո բարի կամքին հուսալը: Դուք ի՞նչ կարող եք անել՝ պաշտպանվելու համար այդ հոգևոր վտանգից:

Չորեքշաբթի ***դեկտեմբերի 25***

Հույս. ամուր և հաստատ եղեք

Դիտարկե՛ք վերը բերված համարները: Դրանք ի՞նչ ընդհանուր բան ունեն: Ինչի՞ն պետք է հետևեն հավատավորները:

Եբրայեցիս 3.6 _____

Եբրայեցիս 3.14 _____

Եբրայեցիս 4.14 _____

Եբրայեցիս 6.18 _____

Եբրայեցիս 10.23 _____

Բացի խիզախությունից, կարևոր է պահել և պահպանել մեզ պարգևված հույսը: Եբրայեցիս թղթում հավատն ու հույսը ամուր պահելու լուրջ կոչ է հնչում: Կարելի է ենթադրել, որ որոշ հավատավորներ շեղվել են քրիստոնեական հույսի և հավատի ուղուց: Առաքյալը դրդում էր նրանց վերադառնալ: Համարներում ընդգծված է այն, ինչին հարկավոր է հետևել. հույս, հավատ, ապավինում և խոստովանություն: Այս բոլոր բառերը միայն վերաբերում են քրիստոնեական հավատին: Մենք կարող

ենք ունենալ այս ամենը, որովհետև մեր հույսը ոչ թե հենց մենք ենք, այլ Հիսուսը և այն, ինչ Նա կատարեց մեզ համար: Հենց որ մոռանանք այս կարևոր ճշմարտությունը, անխուսափելիորեն կկորցնենք մեր խարիսխը:

Բերված համարները մեզ դրդում են ամուր լինել հենց սկզբից (Եբրայեցիս 3.14) և մինչև վերջ (Եբրայեցիս 3.6,14, 6.11): «Անշեղորեն» պահել հավատը (Եբրայեցիս 10.23) նշանակում է դրսևորել անփոփոխ, անսասան հավատ: Ինչպիսին էլ լինեն հանգամանքները, մեր հույսը կմնա աներեր, Աստծուն մեր նվիրումը՝ անփոփոխ, որովհետև մենք հուսացած ենք Նրա հավատարմությանը: Նա կկատարի այն, ինչ խոստացել է:

Իր Խոսքին Աստծո հավատարմությունն անսասան է: Նա կատարեց Աբրահամին և Սառային տրված խոստումը (տե՛ս նաև Հռոմեացիս 4.19-21), Նա կատարեց Իր խոսումը Քրիստոսի առաջին գալուստի մասին (Գաղատացիս 3.19), Նա նաև կկատարի Իր վերադարձի մասին խոստումը (Եբրայեցիս 12.26): Սակայն Աստծո վերջնական խոստումը հավիտենական դարերից առաջ տրված հավիտենական կյանքն է (Տիտոս 1.2, Ա Հովհաննես 2.25):

Աստծո հավատարմությունն աներեր է: Անգամ «եթե չհավատանք, Նա հավատարիմ կմնա, Իր անձը չի կարող ուրանալ» (Բ Տիմոթեոս 2.13): Մեր անհավատարմությունը կամ թերահավատությունը չի փոխում Աստծո հավատարմությունը, որովհետև հավատարմությունը Աստծո էության մի մասն է: Մեր բարոյական անկումը Աստծո խոստումները չի զրկում իրենց ուժից: Այս խոստումները առաջվա նման մատչելի կլինեն, սակայն այն պայմաններով, որ սահմանում է Սուրբ Գիրքը:

Մեր մեղքերն այդքան թեթևորեն մեզ նետում են հուսահատության մեջ: Մենք ինչպե՞ս կարող ենք հաղթահարել մեր մեղքերը և չհանձնվել, երբ ընկնում ենք:

Հինգշաբթի ***դեկտեմբեր 26***

Սեր. քաջալերե՛ք միմյանց

«Եվ զգուշանանք իրար համար՝ դեպի սեր և բարի գործեր գրգռելով» (Եբրայեցիս 10.24):

Եբրայեցիս 10.23-ում գրի առնված քարոզը վերաբերում է յուրաքանչյուր առանձին հավատավորի, իսկ հաջորդ համարը (Եբրայեցիս 10.24) արդեն դիտարկում է հավատացյալների համայնքը: Մենք քրիստոնեական ճանապարհով միայնակ չենք գնում, այդ պատճառով պետք

է հոգ տանենք միմյանց մասին:

Միմյանց հանդեպ սեր դրսևորելու անհրաժեշտությունը քրիստոնեական վարքի անփոփոխ բաղադրիչն է (Հովհաննես 13.34,35, Գաղատացիս 5.13): Սակայն միմյանց հանդեպ սերն ինքնին չի դրսևորվում: Սերը քնքուշ բույս է, որը հարկավոր է ջանասիրաբար աճեցնել: Մենք կանչված ենք ուշադրություն դրսևորելու մեր եղբայրակիցների հանդեպ և հնարավորություններ որոնելու՝ նրանց մղելու սիրել շրջապատողներին և բարի գործեր անել: Ցավոք, մեղավոր մարդկային էությանն ավելի հեշտ է զայրացնել և թշնամություն առաջ բերել, քան ոգևորել՝ քրիստոնեական սեր ցուցաբերելու, այնպես չէ՞:

Եկե՛ք մեր ջանքերը միավորենք հասարակությանն ի բարին, որպեսզի մեր սիրո շնորհիվ շրջապատողներն իրենց հերթին սեր դրսևորեն և բարի գործեր գործեն:

Կարդացե՛ք Եբրայեցիս 10.24,25-ը: Սերն ու բարի գործերն ինչպե՞ս են փոխադարձաբար կապակցված հավատացյալների ժողովքի հետ: _____

_____

_____

_____

Եբրայեցիս թուղթն ընդգծում է, որ մենք կարող ենք սեր դրսևորել միմյանց հանդեպ քրիստոնեական հավաքներին այցելելու միջոցով: Եթե մարդը չի գալիս երկրպագության, նա ինչպե՞ս կարող է կատարել սիրո՝ Քրիստոսի օրենքը: Որոշ մարդիկ մտածում են, թե իրենք «հարգելի» պատճառներ ունեն քրիստոնեական հավաքներին չայցելելու համար: Սակայն Եբրայեցիս թուղթը, շոշափելով այս ցավոտ հարցը, հավատավորներին զգուշացնում է, որ փաստորեն նրանց սեփական անտարբերությունն է, որ նրանց մի կողմ է կանգնեցնում համայնքից: Եթե մարդը ցանկանա, միշտ կարող է Եկեղեցի կամ այլ քրիստոնեական միջոցառումների այցելությունից խուսափելու պատրվակներ գտնել: Սակայն բոլոր պատրվակներն աղոտանում են այն պատճառի համեմատությամբ, որի համար հարկավոր է գալ՝ օրհնություն լինել շրջապատողների համար:

Այս պատճառը ավելի ու ավելի ծանրակշիռ է դառնում Երկրորդ գալստյան օրվա մոտենալուն զուգահեռ: Եբրայեցիս 10.19-25 հատվածի սկզբում հեղինակը հավատացյալներին համոզում է մոտենալ Աստծուն՝ մտնելով Երկնային սրբարան, իսկ վերջում հիշեցնում է այն մասին, որ Տիրոջ օրը մոտենում է, և Քրիստոսի վերադարձը միշտ պետք է լինի քրիստոնեական վարքի մեծագույն խթանը:

Համայնքից ո՞ւմ դուք կցանկանայիք քաջալերել ձեր խոսքերով, գործերով կամ պարզապես ներկայությամբ: Եթե այդ անելու լուրջ մտադրություն ունեք, ապա կարող եք մեծ փոփոխություններ կատարել մարդկանց կյանքում և օրհնություններ ստանալ ձեզ համար:

Ուրբաթ *դեկտեմբերի 27*

Հետագա ուսումնասիրության համար

«Միջնորդն Իր ծառայության և աշխատանքի մեջ արժանապատվությամբ և փառքով նշանակալիորեն գերազանցում էր երկրային քահանայությունը... Փրկիչը պետք է Միջնորդ լիներ, կանգներ Ամենաբարձրյալի և Նրա ժողովրդի միջև: Դրա շնորհիվ բացվեց ճանապարհը, որի միջոցով մեղավոր մեղսագործը կարող էր մոտենալ Աստծուն Ուրիշ Մեկի բարեխոսության միջոցով: Մեղքով ծանրաբեռնված մեղսագործը չէր կարող ինքը գալ՝ իր արժանիքներով: Միայն Քրիստոսը կարող էր բացել ուղին՝ կատարելով այն զոհաբերությունը, որը համապատասխանում էր Օրենքի պահանջներին: Նա կատարյալ էր, մեղքով չարատավորված: Նա առանց բծի և արատի էր: Մեղքի սոսկալի հետևանքների չափը չէր հասկացվի, եթե չպարգևվեր ապաքինման միջոցը՝ անսահման արժեքավոր միջոցը» (Է. Ուայթ, Մարգարեության ոգին, հտ. 2, 11):

«Փրկագնման ու Քրիստոսի բարեխոսության հավատը մեզ ամուր և անսասան կպահի այն փորձությունների մեջ, որոնք ճնշում են մեզ (Է. Ուայթ, ՅՕԱ աստվածաշնչյան մեկնություններ, հտ. 7Ա, 484):

Հարցեր քննարկման համար

1. Դիտարկե՛ք Եբրայեցիս թուղթը: Մեր հավատի անմիջական հետևանքը հանդիսացող ի՞նչ որոշակի գործողությունների է մեզ կոչում այս գիրքը:
2. Խորհեցե՛ք այն մասին, որ մենք ազատ մուտք ունենք Աստծո մոտ: Ի՞նչ է սա նշանակում: Սա ինչպե՞ս պետք է ազդի մեր կյանքի վրա, հատկապես, երբ մենք ենթարկվում ենք գայթակղության կամ հիասթափված ենք մեր հոգևոր վիճակից:
3. Ո՞րն է խոր հավատի և ինքնագոհության տարբերությունը:
4. Մտորե՛ք ուրբաթ օրվա դասում էլեն Ուայթից մեջբերված հետևյալ տողերի մասին. «Մեղքի սոսկալի հետևանքների չափը կմնար չիմաց-

ված, եթե չպարգևվեր ապաքինման միջոցը, անսահման արժեքավոր միջոցը»: Սա մեզ ի՞նչ է ասում այն մասին, թե որքան սոսկալի է մեղքը. չէ՞ որ նա պահանջում էր, որ իր համար անսահման գին վճարվի՝ Հիսուսի կյանքը: Մենք ինչպե՞ս ենք հասկանում «անսահման արժեքավորության» գաղափարը: Ինչպե՞ս է Հիսուսի՝ Արարիչ լինելու փաստը օգնում մեզ՝ հասկանալ այդ զարմանահրաշ ճշմարտությունը: Իմանալով այդ ճշմարտությունը՝ մի՞թե մենք կարող ենք չցանկանալ դրանով կիսվել շրջապատողների հետ:

5. Մենք ինչպե՞ս կարող ենք հոգևոր բարեկամություն զարգացնել, որպեսզի միմյանց դրդենք է՛լ ավելի մեծ սիրո և բարի գործերի: Դուք հոգևոր ի՞նչ օգուտ եք ստանում ժողովքին մասնակցելուց: Ի՞նչ կկորցնեիք, եթե չկարողանայիք երկրպագությունը կիսել եկեղեցի հաճախող այլ քրիստոնյաների հետ:

Մեծ պայքար

Որտեղի՞ց է սկիզբ առել պայքարը բարու և չարի, արդարության և մեղքի, կյանքի ու մահվան միջև: Ովքե՞ր են այդ պայքարի մասնակիցները, և ի՞նչ տեղ է հատկացված դրանում յուրաքանչյուր մարդու: Երկիր մոլորակին ի՞նչ է սպասվում ապագայում: Ինչո՞վ կավարտվի պայքարը Աստծո և խավարի ուժերի միջև:



Դարերի փափագը

Հազարամյակների ընթացքում շատ ժողովուրդներ սպասում էին Աստծո Որդու առաջին գալուստին, Ով պետք է բերեր մարդկանց ազատություն և անսահման երջանկություն: Եվ ահա Նա եկավ, որպեսզի հիշեցնի մարդկանց Աստծո մոռացված ճշմարտությունները, վերադարձնի կորցրած դրախտը:



Քայլեր դեպի Քրիստոս

Այս գրքի էջերին պարզ և հստակ ցույց է տրված Աստծո մոտ տանող ճանապարհը: Ընթերցողի հայացը ուղղված է Հիսուս Քրիստոսին: Հետևելով այստեղ առաջարկվող խորհուրդներին՝ ճշմարտություն և բնավորության կատարելություն փնտրողը կարող է քայլ առ քայլ գնալ քրիստոնեական ճանապարհով դեպի հաջողության լրությունը, որը մեզ վրա Տիրոջ իշխանության և փրկագնման լիովին ընդունման արդյունքն է:



Հույսով դեպի ապագա

Գրքի հեղինակը հավատացած է, որ հաճախակիացած բնական աղետները, այժմեականության սոցիալական և քաղաքական հակասություններն ունեն իրենց բացատրությունը: Այդ ամենի մեջ նա լսում է վաղեմի տիեզերական հակամարտության եզրափակիչ ակորդները:
Հիմնվելով աստվածաշնչյան մարգարեությունների վրա՝ հեղինակը կատարում է խորաթափանց հետազոտություն, որը ցույց է տալիս մարդկության պատմության վիթխարի և երջանիկ հանգուցալուծման մոտեցումը:

Քրիստոսի առակները

Պատմությունը չի ճանաչում Քրիստոսին հավասար ուսուցչի: Աստվածաբանությունից հեռու մարդկանց Նա զարմանալիորեն պարզ և խորն էր բացատրում Աստծո Արքայության սկզբունքները, բացում էր նրանց հոգևոր կյանքի էությունը: Քրիստոսը հատուկ մեթոդ ուներ, Փրկիչը սիրում էր առակներով սովորեցնել: Այդպես վարվելով՝ Նա Իր դասերը հիշվող և տեսանելի էր դարձնում՝ այդպիսով նորանոր ունկնդրողների սրտեր գրավելով: Այսօր ևս մեծագույն Ուսուցչի առակները նույնքան կենդանի են հնչում և դիպչում սրտին, ինչպես և երկու հազար տարի առաջ:



Հիսուսի լեռան քարոզը

Ի՞նչի մասին է երազում յուրաքանչյուր մարդ: Ի՞նչ է որոնում իր ողջ կյանքի ընթացքում: Իհարկե, երջանկություն: Ո՞րն է երջանիկ կյանքի գաղտնիքը. պարզ կանոններին հետևելը: Այդ կանոնները բացահայտող Հիսուս Քրիստոսի լեռան քարոզը մեզանից յուրաքանչյուրին ցույց կտա ճշմարիտ երջանկության ուղին:



Ընտանեկան երջանկության գաղտնիքները

Ի՞նչ է երջանկությունը: Այս հարցը աշխարհի չափ հին է, և ունի հազարավոր պատասխաններ: Սակայն շատ ընտանիքների չի հաջողվում այն ձեռք բերել: Գրքում դուք չեք գտնի յուրօրինակ բաղադրատոմսեր, սակայն կիմանաք, թե ինչպես իրագործելով աստվածաշնչյան սկզբունքները՝ ամուսնական փոխհարաբերություններում հասնել ներդաշնակության:

Ժամանակից դեպի հավերժություն

Սույն գիրքը ապշեցուցիչ գիտական ուսումնասիրություն է մարդկության ճակատագրի վերաբերյալ՝ հիմնված աստվածաշնչյան մարգարեությունների և դրանց պատմական իրականացման վրա: Հեղինակը՝ աստվածաբանության դոկտոր ավստրիացի Հանս Հայնցը, խորապես վերլուծելով ականավոր փիլիսոփաների և գիտնականների գաղափարները, համոզիչ կերպով ընթերցողին է ներկայացնում ապագա բախտորոշ իրադարձությունները և դրանց փառավոր վախճանը:

Շաբաթօրյա դպրոցի Աստվածաշնչի ուսումնասիրության ձեռնարկ
2013 թվականի չորրորդ եռամսյակ

ՍՐԲԱՐԱՆ

Մարտին Փրոբսթլ

Գլխավոր խմբագիր՝ Պավել Սարգսյան
Թարգմանությունը և համակարգչային շարվածքը՝ Մերինե Աթոյան
Վերստուգող՝ Հովհաննես Մխիթարյան
Գրական խմբագիր՝ Ալվարդ Մաղոյան
Համակարգչային ձևավորող՝ Կորյուն Կակոյան